04
ՕԳՈՍՏՈՍ
2023

Luys Լույս®

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՕԴԱՉՈՒ ԹՌՉՈՂ ՍԱՐՔԵՐ. ԱՌԱՆՑ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄՆ ՈՒ ՆՈՐ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՕԴԱՉՈՒ ԹՌՉՈՂ ՍԱՐՔԵՐ. ԱՌԱՆՑ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄՆ ՈՒ ՆՈՐ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1

1. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՕԴԱՉՈՒ ԹՌՉՈՂ ՍԱՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ 2

2. ՔՆԱԹՍ-ԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱԿԱԶԴԵԼՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ և ՀՀ-ՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 5

2.1. ՔՆԱԹՍ-երի կիրառմամբ ահաբեկչական հարձակումների գրանցված դեպքերը և ահաբեկչություն իրականացնելու նպատակներով ՔՆԱԹՍ-երի օգտագործման գրավչությունը 5

2.2. ՔՆԱԹՍ-երով ահաբեկչական հարձակումներ իրականացնելու դեմ պայքարի միջոցառումները 11

2.3. Միջազգային փորձի ուսումնասիրություն 17

2.4. Իրավիճակի վերլուծությունը ՀՀ-ում 35

3. ՔՆԱԹՍ-Ի ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ՝ ԱՆՁԻ ԿՅԱՆՔԻՆ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ԿԱՄ ԳՈՒՅՔԻՆ ՉԿԱՆԽԱՄՏԱԾՎԱԾ ՎՆԱՍ ՀԱՍՑՆԵԼՈՒ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ և ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀՀ-ՈՒՄ 45

4. ՔՆԱԹՍ-ԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ՄԱՍՆԱՎՈՐ և ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՒ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՈՉ ԻՐԱՎԱՉԱՓ ԵՂԱՆԱԿՈՎ ՄՇԱԿՄԱՆԸ ՀԱԿԱԶԴԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ և ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ 49

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 69

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

21-րդ դարի կարևորագույն առանձնահատկություններից է տեխնոլոգիական և գիտական առաջընթացի ու զարգացման սրընթաց բնույթը: Աստիճանական զարգացման փոխարեն կյանքի տարբեր ոլորտներում փոփոխություններն արդեն տեղի են ունենում շատ արագ՝ առաջ բերելով իրավական և կիրառական հարթություններում ստեղծված մարտահրավերներին արագ արձագանքելու և նորարարական լուծումներ գտնելու անհրաժեշտությունը:

Այսպիսի արագ գիտատեխնոլոգիական զարգացման հետևանք են նաև անօդաչու թռչող սարքերի (այսուհետ՝ նաև ԱԹՍ) լայն կիրառումը կենսագործունեության տարբեր բնագավառներում՝ սկսած ռազմական ոլորտից մինչև սպասարկման ոլորտ: Այս համատեքստում, հաշվի առնելով անօդաչու թռչող սարքերի առանձնահատկությունները, անհրաժեշտ է գնահատել, թե որքանով են Հայաստանի Հանրապետության գործող իրավական կարգավորումները բավարարում ԱԹՍ-ների տարբեր ոլորտներում կիրառման հետևանքով ծագող մարտահրավերների հաղթահարմանը:

ԱԹՍ-ները պայմանականորեն կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝

1) անօդաչու թռչող սարքեր, որոնք նախատեսված են ռազմական գործողությունների ընթացքում կինետիկ ազդեցություն գործադրելու համար,

2) քաղաքացիական նշանակության անօդաչու թռչող սարքեր, որոնք հատուկ նախատեսված չեն ռազմական գործողությունների ընթացքում կինետիկ ազդեցություն գործադրելու համար և տեխնիկական չափորոշիչներով ինքին չունեն նման հնարավորություն[1]:

---

[1] Ռազմական գործողությունների ընթացքում կինետիկ ազդեցություն գործադրելու համար նախատեսված չլինելը, սակայն, գործնականում չի բացառում քաղաքացիական նշանակության ԱԹՍ-ների կիրառումը կինետիկ ազդեցության գործադրմամբ և համապատասխան հետևանքների առաջացմամբ:

Միաժամանակ, կախված ԱԹՍ-ների գործողություններում մարդու ներգրավվածության աստիճանից, դրանք կարելի է պայմանականորեն դասակարգել հեռավար կառավարվող ԱԹՍ-ների (այսինքն՝ դրանց բոլոր գործողությունները վերահսկվում են օպերատորի կողմից տվյալների փոխանցման գծերի միջոցով) և ինքնակառավարվող ԱԹՍ-ների, որոնք պահանջում են մինիմալ մարդկային միջամտություն և ենթադրում են ԱԹՍ-ի կողմից բոլոր գործողությունների ինքնուրույն իրականացում և բոլոր որոշումների՝ առանց մարդկային միջամտության ընդունում: Հարկ է ընդգծել, որ առայժմ լայն կիրառության մեջ են միայն հեռավար կառավարվող քաղաքացիական նշանակության անօդաչու թռչող սարքերը:

Այս վերլուծությամբ, մասնավորապես, նպատակ է դրվում ուսումնասիրել քաղաքացիական նշանակության անօդաչու թռչող սարքերի (այսուհետ՝ նաև ՔՆԱԹՍ) կիրառման իրավական կարգավորումներն ու առկա պրակտիկան Հայաստանում, ինչպես նաև ՔՆԱԹՍ-երի կարգավորումների վերաբերյալ միջազգային փորձը:

1. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՕԴԱՉՈՒ ԹՌՉՈՂ ՍԱՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքացիական նշանակության անօդաչու թռչող սարքերը այսօր շատ մատչելի են, դրանք որոշ դեպքերում կարող են ձեռք բերվել էլեկտրոնային եղանակով և չեն պահանջում զգալի ծախսեր: ՔՆԱԹՍ-երը նաև ժամանակի ընթացքում ավելի ու ավելի են կատարելագործվում: Այսօր արդեն գոյություն ունեն լուրջ տեխնիկական կարողություններով ՔՆԱԹՍ-եր, ներառյալ՝ տեսանկարահանման, լուսանկարահանման և ստացված պատկերներն ու տեսաձայնագրություններն ուղիղ ժամանակային ռեժիմում օպերատորին փոխանցելու կարողություններ, բարձր արագություն, էներգիայի երկարաժամկետ պահպանման և հետևաբար ավելի երկար ժամանակ թռիչքներ իրականացնելու հնարավորություն, օպերատորից ավելի մեծ

հեռավորության վրա կառավարվելու հնարավորություն, համապատասխան հանձնարարության հիման վրա մարդուն կամ որևէ առարկայի հետևելու կամ նույնականացնելու կարողություններ, գիշերային ժամերին լավ տեսանելիություն ապահովելու կարողություն և այլն: Տեխնոլոգիական զարգացումը տեղի է ունենում այն ուղղությամբ, որ ՔՆԱԹՍ-երը լինեն հնարավորինս թեթև և փոքր՝ միաժամանակ լինելով բազմաֆունկցիոնալ, ունենալով մեծ հզորություն և վերոհիշյալ կարողությունները: Ի տարբերություն նախորդ սերնդի ՔՆԱԹՍ-երի, որոնք համեմատաբար դժվար էր կառավարել, սրընթաց տեխնոլոգիական զարգացմամբ մեծանում են անօդաչու թռչող սարքերի ինքնավարության հնարավորությունները, և ամբողջությամբ ինքնակառավարվող ՔՆԱԹՍ-երի առօրեական կիրառումն ամենևին գիտական ֆանտաստիկայի ժանրից չէ, այլ մոտ ապագայում աշխարհում սպասվող զարգացում:

ՔՆԱԹՍ-երը կարող են կիրառվել տարբեր իրավաչափ նպատակներով, ինչպես, օրինակ, պետության կողմից՝ հակաահաբեկչական գործողությունների իրականացման համար, սահմանային անվտանգության կազմակերպման համատեքստում, քրեական հետապնդման, օպերատիվ-հետախուզական գործունեության և հասարակական կարգի պահպանման համատեքստում՝ որպես տեխնիկական միջոց, ինչպես նաև հանրային կամ մասնավոր անձանց կողմից՝ 3D քարտեզագրման, սիրողական կամ մասնագիտական օդային լուսանկարչության և տեսանկարահանման համար, շրջակա միջավայրի պահպանության նպատակով, արտակարգ իրավիճակներին արձագանքելու և փրկարարական աշխատանքների իրականացման ընթացքում, գյուղատնտեսական նպատակներով, գիտական նպատակներով, տարբեր ոլորտներում (էներգետիկ, բնապահպանական, սեյսմիկ երևույթների և այլն) արդյունավետ մշտադիտարկում իրականացնելու համար՝ որպես հաղորդակցության միջոց, առևտրային ոլորտում, փաթեթների կամ նամականիների առաքման համար և այլն: Ընդ որում, հատկապես խոստումնալից է ՔՆԱԹՍ-երի

կոմերցիոն և մասնագիտական նպատակներով լայն կիրառման հնարավորությունը: Այնպիսի սցենարը, երբ ՔՆԱԹՍ-երով կիրականացվեն առաքումներ, փոխադրումներ կամ ՔՆԱԹՍ-երը կկիրառվեն որպես օդային տրանսպորտի նոր տեսակ արդեն իմպլեմենտացիայի փուլում է տարբեր երկրներում: Անօդաչու թռչող սարքերի՝ քաղաքացիական նպատակներով կիրառումը դառնալու է սովորական երևույթ, ինչը թելադրում է դրանց կիրառմամբ պայմանավորված իրավական խնդիրներին առաջնահերթության կարգով անդրադառնալու անհրաժեշտությունը:

ՔՆԱԹՍ-երի կիրառմամբ պայմանավորված՝ քաղաքացիական ավիացիայի տեսանկյունից առաջացող անվտանգային սպառնալիքներին զուգահեռ, դրանց կիրառման արդյունքում ծագում են նաև մի շարք մարտահրավերներ, որոնք կարելի է դասակարգել հետևյալ հիմնական խմբերի՝

1) ահաբեկչություն իրականացնելու նպատակներով ՔՆԱԹՍ-երի օգտագործման հավանականությունը,

2) ՔՆԱԹՍ-երի կիրառմամբ պայմանավորված անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին չկանխամտածված վնաս հասցնելու հավանականությունը,

3) ՔՆԱԹՍ-երի կիրառման արդյունքում մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության ու անձնական տվյալների մշակման կանոնների խախտման հավանականությունը,

4) գաղտնի քննչական գործողությունների, օպերատիվ-հետախուզական գործողությունների կամ հասարակական կարգի պահպանման նպատակով ՔՆԱԹՍ-երի կիրառման արդյունքում անձանց մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությանն անհամաչափ միջամտության հավանականությունը[2]:

---

[2] Մարտահրավերների այս վերջին խումբն ունի որոշակի առանձնահատկություններ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ենթադրում է պետական մարմինների կողմից ՔՆԱԹՍ-երի կիրառում, այդ

2. ՔՆԱԹՍ-ԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱԿԱԶԴԵԼՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՀ-ՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

2.1. ՔՆԱԹՍ-երի կիրառմամբ ահաբեկչական հարձակումների գրանցված դեպքերը և ահաբեկչություն իրականացնելու նպատակներով ՔՆԱԹՍ-երի օգտագործման գրավչությունը

2023 թվականի մայիսի 3-ին Կրեմլի մամուլի ծառայության կողմից տարածվեց հաղորդագրություն, այն մասին, որ գիշերը Կիևի ռեժիմը ՔՆԱԹՍ-երով հարվածներ է հասցրել ՌԴ նախագահի՝ Կրեմլի նստավայրին՝ օգտագործելով երկու անօդաչու թռչող սարք: Համապատասխան ռադիոէլեկտրոնային համակարգերի գործարկման արդյունքում զինված ուժերի և հատուկ ծառայությունների աշխատակիցները բարեհաջող հակազդել են այդ հարձակմանը՝ շարքից հանելով հարձակման գործիք հանդիսացող անօդաչու թռչող սարքերը: Կրեմլի մամուլի ծառայության կողմից այդ միջադեպը որակվել է որպես «պլանավորված ահաբեկչական ակցիա և ՌԴ նախագահի դեմ մահափորձ»:[3]

2023 թվականի մայիսի 30-ին տարածվեց հաղորդագրություն, որ Մոսկվայում և մերձմոսկովյան շրջանում տեղի են ունեցել անօդաչու թռչող սարքերով հարձակումներ քաղաքացիական օբյեկտների վրա: Հակաօդային պաշտպանության արդյունավետ գործարկման արդյունքում անօդաչու թռչող սարքերի մեծ մասը

համատեքստում համաչափության սկզբունքի գնահատում, և, հետևաբար, այս հիմնախնդիրն առանձին ուսումնասիրության առարկա է:

[3] «Кремль заявил о попытке нанесения удара беспилотниками по резиденции Путина», BBC NEWS Русская служба (3 мая 2023), на: https://www.bbc.com/russian/news-65468449

հաջողվել է վնասազերծել: Երեք դրոն չի հաջողվել խոցել, սակայն դրանք շեղվել են ռադիոէլեկտրոնային հակազդման միջոցների կիրառման արդյունքում. թեև հարվածել են բնակելի շենքերի, սակայն էական վնաս չեն հասցրել: Ըստ ՌԴ պաշտպանության նախարարության պաշտոնական վարկածի՝ այդ հարվածները ենթադրաբար Կիևի կողմից նախաձեռնված ահաբեկչական ակտ էին Մոսկվայի և մերձմոսկովյան շրջանի վրա:[4]

Ավելի ուշ՝ հուլիսի 4-ին ՌԴ պաշտպանության նախարարությունը հայտարարեց, որ հակաօդային պաշտպանության և ռադիոէլեկտրոնային հակազդման միջոցներով հաջողվել է ճնշել Մոսկվայի շրջանի և Նոր Մոսկվայի օբյեկտների վրա, այդ թվում՝ նաև «Վնուկովո» օդանավակայանի մոտակայքում դրոններով իրականացված հերթական հարձակումը: Անվտանգության նկատառումներով Դաշնային օդային տրանսպորտի գործակալությունը ժամանակավորապես դադարեցրել էր «Վնուկովո» միջազգային օդանավակայանի աշխատանքները, իսկ փորձագետները իրենց անհանգստությունն էին հայտնել, որ քաղաքացիական փոխադրումներ իրականացնող օդանավի հետ դրոնի հնարավոր հավանական բախումը կարող էր հանգեցնել ողբերգության՝ վտանգելով հարյուրավոր մարդկանց կյանքեր: Դաշնային իշխանությունները այս միջադեպի կապակցությամբ էլ համոզված էին, որ տեղի ունեցածը հերթական ահաբեկչական հարձակում էր:[5]

ՔՆԱԹՍ-երի արագ տարածումը և լայն կիրառման հնարավորությունները միաժամանակ առաջ են բերում դրանք ահաբեկչական նպատակով օգտագործելու սպառնալիքներ: Թեև ՀՀ-ում ՔՆԱԹՍ-երի միջոցով ահաբեկչական գործողություն

---

[4] «Новая атака дронов на Москву. Что известно на данный момент», BBC NEWS (30 мая 2023), на: https://www.bbc.com/russian/news-65751661

[5] «БПЛА сбили над Москвой и областью. Что известно о новом акте украинского терроризма» (04.06.2023), на: https://360tv.ru/tekst/proisshestviya/chto-izvestno-o-novom-akte-ukrainskogo-terrorizma/

իրականացվելու դեպք դեռևս չի գրանցվել[6], սակայն ակնհայտ է, որ տեխնոլոգիական սրընթաց զարգացմանը զուգահեռ, մեծանում է նաև ՔՆԱԹՍ-երի ահաբեկչական նպատակներով օգտագործման գրավչությունն ու հավանականությունը: Ցանկացած ՔՆԱԹՍ տեսականորեն կարող է հարմարեցվել և փոխակերպվել ահաբեկչական գործողության գործիքի: Այսպես, օրինակ, ցանկացած ՔՆԱԹՍ-ին կարելի է ամրացնել պայթուցիկ նյութ կամ մահացու հետևանքներ առաջացնող որևէ քիմիական կամ կենսաբանական նյութ, և դա օգտագործել ահաբեկչություն իրականացնելու նպատակներով: ՔՆԱԹՍ-երը կարող են նաև օգտագործվել ահաբեկչական գործողությունների պլանավորման նպատակով՝ տեղեկատվություն հավաքագրելու, տարածքի նկատմամբ հսկողություն իրականացնելու համար և այլն: Նոր մարտահրավերներին դիմակայելուն և դրանցով պայմանավորված սպառնալիքներին հակազդելուն ուղղված պետության գործողությունների արդյունավետությունը մեծապես պայմանավորված է պետության պատրաստվածությամբ և ձեռնարկած կանխարգելիչ գործողությունների արդյունավետությամբ: Այլ կերպ ասած՝ ինչպես ցույց է տալիս միջազգային փորձի ուսումնասիրությունը, արդյունավետ ռազմավարական մոտեցումն այն է, որ պետությունը ոչ թե սպասի սպառնալիքների վրա հասնելուն և ձախողված հակազդեցության արդյունքում բացասական փորձի վրա ձևավորի հետևանքների հաղթահարման ռազմավարություն, այլ հակառակը՝ նախապես ձեռնարկի ռազմավարական միջոցառումներ կանխարգելելու սպառնալիքները կամ նվազեցնելու դրանց վրա հասնելու հավանականությունը:

---

[6] Գլխավոր դատախազությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ վերջին 5 տարիների ընթացքում ՔՆԱԹՍ-երով կատարված հանցագործությունների դեպքում հարուցված (նախաձեռնված) քրեական գործերը (վարույթները) թվով չորսն են և վերաբերում են թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների իրացնելու նպատակով ապօրինի շրջանառությանը կամ դրանց իրացնելուն, այդ թվում՝ ձերբակալված կամ կալանավորված անձանց պահելու վայրերում կամ քրեակատարողական հիմնարկներում:

Բազմաթիվ են դեպքերը, երբ պլանավորվել է իրականացնել ահաբեկչական գործողություն անօդաչու թռչող սարքերի միջոցով: Այսպես, օրինակ, դեռ 1994 թվականին Աում Շինրիկյոն փորձեց օգտագործել հեռակառավարվող ուղղաթիռ՝ բնակչության մեջ զարինի գազ ցողելու համար, սակայն ուղղաթիռը կործանվեց, և այդ փորձարկումը ձախողվեց[7], 2014 թվականին ինքնաշեն ՔՆԱԹՍ-երին ամրակցված պայթուցիկներ կիրառվեցին ԴԱԵՇ-ի կողմից Իրաքում և Սիրիայում ռազմական գործողությունների ժամանակ[8], 2018 թվականի հունվարին ահաբեկիչները կիրառել են միաժամանակ տասնյակից ավելի ինքնաշեն ԱԹՍ-ներ Խմեյմիմում և Տարտուսում ռուսական ռազմաբազաների վրա հարձակում իրականացնելու համար[9], 2018 թվականի օգոստոսին Վենեսուելայի նախագահ Նիկոլաս Մադուրոի նկատմամբ իրականացվեց մահափորձ ԱԹՍ-ներով, որոնց ամրակցված էր պայթուցիկ նյութ[10] և այլն:

ՔՆԱԹՍ-երի ահաբեկչական նպատակներով օգտագործումը գրավիչ են դարձնում բազմաթիվ գործոններ, ինչպես, օրինակ՝

- ՔՆԱԹՍ-եր ձեռք բերելու կամ նույնիսկ սեփական ուժերով ինքնաշեն ՔՆԱԹՍ-եր պատրաստելու դյուրինությունը և ցածր ծախսատարությունը[11],

---

[7] Robert J. Bunker, “Terrorist and Insurgent Unmanned Aerial Vehicles: Use, Potentials, and Military Implications” (Carlisle, PA: Strategic Studies Institute, U.S. Army War College, August 2015) pp.7-8 citing Gips; and James M. Smith, “Aum Shinrikyo,” Eric A. Croddy, James J. Wirtz, and Jeffrey A. Larsen, eds., “Weapons of Mass Destruction: An Encyclopedia of Worldwide Policy, Technology, and History”, Santa Barbara, CA: ABC Clio, 2005, p. 32.

[8] Joby Warrick, “Use of Weaponized Drones by Isis Spurs Terrorism Fears”, Washington Post (21 February 2017) at: https://www.washingtonpost.com/world/national-security/use-of-weaponized-drones-by-isis-spurs-terrorism-fears/2017/02/21/9d83d51e-f382-11e6-8d72-263470bf0401_story.html

[9] «Что известно об атаках на российские военные объекты в Сирии», (12.01.2018), на: https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/4864038

[10] «На президента Венесуэлы совершено покушение. Мадуро заявляет, что его спас "щит любви"», BBC news русская служба (04.08.2018) на: https://www.bbc.com/russian/news-45073271

[11] ՔՆԱԹՍ-երի միջին շուկայական արժեքն այսօր էլեկտրոնային գնման հարթակներում տատանվում է մի քանի հարյուր ԱՄՆ դոլարից մինչև մի քանի հազար ԱՄՆ դոլարի միջև:

- ՔՆԱԹՍ-երի օգտագործման դյուրինությունը,
- ՔՆԱԹՍ-երի կիրառումը հնարավորություն է տալիս ահաբեկչական գործողությունն իրականացնել առանց իրադարձությունների կիզակետում ֆիզիկապես գտնվելու անհրաժեշտության, ինչն այլ առավելությունների հետ մեկտեղ նաև նպաստում է հարձակումն իրականացնողների հնարավոր հոգեբանական արգելքների նվազեցմանը,
- ՔՆԱԹՍ-երի կիրառումը նպաստում է խաղաղ բնակչության շրջանում ավելի ուժեղ հոգեբանական ճնշում գործադրելուն՝ մեծացնելով վախի, տագնապի ու խուճապի աստիճանը,
- ՔՆԱԹՍ-երի կիրառումը հնարավորություն է ընձեռում խնայել մարդկային, ժամանակային և ֆինանսական ռեսուրսներ, միաժամանակ ՔՆԱԹՍ-երի տեխնիկական բնութագրիչները (էմոցիաների բացակայությունը, մարդկանցից ավելի լավ խոչընդոտներ և դժվարություններ հաղթահարելու կարողությունները, մարդկանց կամ ավանդական տեխնիկական միջոցների համար դժվարանցանելի վայրերում գործելու հնարավորությունը, դիմացկունությունը և այլն) առերևույթ նպաստում են ահաբեկչական գործողությունների իրականացման արդյունավետությանը,
- ՔՆԱԹՍ-երի կիրառմամբ նույնիսկ փոքր ահաբեկչական խմբերը կամ առանձին ահաբեկիչներ հնարավորություն են ստանում զուգահեռ իրականացնել միաժամանակ մի քանի ահաբեկչական գործողություն, ինչը բնականաբար կբարձրացնի ահաբեկչական գործողության արդյունավետությունը ահաբեկչի տեսանկյունից, կավելացնի խուճապը, տագնապն ու վախը խաղաղ բնակչության լայն շրջանում, և իրավիճակը կդարձնի դժվար կառավարելի պետության կողմից հակաահաբեկչական գործողությունների ձեռնարկման առումով,

- մեծանում է նաև բազմաթիվ ՔՆԱԹՍ-եր միաժամանակ համատեղ կառավարելու և ՔՆԱԹՍ-երի երամ կիրառելու հնարավորությունը, ինչն էապես բարդացնում է անվտանգային խնդիրների արդյունավետ իրականացումը,[12]
- ՔՆԱԹՍ-ը հնարավոր է կիրառել ահաբեկչական հարձակումներ իրականացնելու նպատակներով՝ առանց այն կառավարող անձանց կողմից պետության սահմանը ֆիզիկապես հատելու, հեռավորության վրա,
- ՔՆԱԹՍ-երով ահաբեկչական գործողություն իրականացնելը զգալիորեն դժվարացնում է հանցագործներին հայտնաբերելու հավանականությունը և հնարավորություն է տալիս ահաբեկիչներին ավելի արդյունավետ խուսափել պատասխանատվությունից,
- ՔՆԱԹՍ-երի հայտնաբերումն ավելի դժվար է սովորաբար կիրառվող ռադարային համակարգերով, քան ավելի մեծ չափի թռիչքային սարքերի հայտնաբերումը,
- այն հանգամանքը, որ հաշվի առնելով տեխնիկական միջոցի համեմատաբար նոր լինելը, բազմաթիվ պետություններում ՔՆԱԹՍ-երի իրավական կարգավորումները բավարար չեն դրանց կիրառման օրինականության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու համար:

Նոր իրողությունները հաշվի առնելով՝ ահաբեկչության դեմ պայքարի տեսանկյունից ՔՆԱԹՍ-երի կիրառմամբ պայմանավորված սպառնալիքները

---

[12] UNCCT, *Preventing Terrorists from Acquiring Weapons Technical guidelines to facilitate the implementation of Security Council resolution 2370 (2017) and related international standards and good practices on preventing terrorists from acquiring weapons* (2022) p. 43, at: https://www.un.org/securitycouncil/ctc/sites/www.un.org.securitycouncil.ctc/files/files/documents/2022/Mar/technical_guidelines_to_facilitate_the_implementation_of_security_council_resolution_2370_2017_and_related_international_standards_and_good_practices_on_preventing_terrorists_from_acquiring_weapons.pdf

նվազեցնելու նպատակով պետությունները պետք է մի շարք գործնական և համաժամանակյա միջոցներ ձեռնարկեն:[13]

2.2. ՔՆԱԹՍ-երով ահաբեկչական հարձակումներ իրականացնելու դեմ պայքարի միջոցառումները

ՔՆԱԹՍ-երի ահաբեկչական կիրառման դեմ պայքարի միջոցառումները ներառում են՝

- ՔՆԱԹՍ-երի ահաբեկչական կիրառման հավանականության, այդ թվում՝ ՔՆԱԹՍ-երի ահաբեկչական կիրառման համատեքստում երկրի պաշտպանության և անվտանգության համակարգերում բացերի, առավել կարևոր ենթակառուցվածքների վրա հարձակումների հնարավոր հետևանքների համապարփակ վերլուծությունը, կարիքների գնահատումը, այդպիսի սպառնալիքների նվազեցմանն ուղղված կարգավորումների սահմանումը վերաբերելի ռազմավարական փաստաթղթերում և դրանց իմպլեմենտացիան,
- ՔՆԱԹՍ-երի կիրառման համատեքստում հակաահաբեկչական գործողությունների համար օգտագործվող հատուկ տեխնոլոգիաների արտադրությունը կամ ձեռքբերումը և համապատասխան ենթակառուցվածքների

[13] ՔՆԱԹՍ-երի կիրառման համատեքստում հակաահաբեկչական գործողություններին և միջոցառումներին վերաբերող տարբեր երկրների լավագույն փորձին առավել մանրամասն ծանոթանալու համար տե՛ս UN Office of counter-terrorism, *Protecting vulnerable targets from terrorist attacks involving unmanned aircraft systems (UAS) GOOD PRACTICES GUIDE: Specialized module* (2022), at: https://www.un.org/counterterrorism/sites/www.un.org.counterterrorism/files/2118451e-vt-mod5-unmanned_aircraft_systems_final-web.pdf: ՔՆԱԹՍ-երի կիրառման արդյունքում ահաբեկչական գործողությունների իրականացման սպառնալիքները նվազեցնելուն ուղղված հանձնարարականներ նախատեսված են նաև «Անօդաչու թռչող սարքերի ահաբեկչական կիրառման դեմ պայքարի լավ փորձի մասին» Բեռլինի հուշագրում, տե՛ս Berlin Memorandum on Good Practices for Countering Terrorist Use of Unmanned Aerial Systems, Global counterterrorism forum, at: http://www.thegctf.org/LinkClick.aspx?fileticket=j5gj4fSJ4fI%3d&portalid=1

բարելավումը (օրինակ՝ ՔՆԱԹՍ-երի հեռավար նույնականացման և դրա հիման վրա թռիչքները ուղիղ ռեժիմում հետևելու հնարավորություն ընձեռող համակարգի ներդրումը[14], ՔՆԱԹՍ-երի

հայտնաբերման կամ չեզոքացման համակարգերի ներդրումը[15], թվային քարտեզների համակարգի և սահմանափակ թռիչքների գոտիներում և թռիչքների համար

[14] Այսպես, օրինակ, ԱՄՆ Դաշնային ավիացիոն վարչության կողմից 2019 թվականին մշակվել, իսկ 2023 թվականի սեպտեմբերից գործարկվելու է բոլոր գրանցման ենթակա ՔՆԱԹՍ-երի պարտադիր հեռավար նույնականացման համակարգը, որը հնարավորություն է տալիս համապատասխան գերատեսչություններին հետևել ՔՆԱԹՍ-ի թռիչքի հետագծին՝ սկսած թռիչքը մեկնարկելու պահից մինչև ՔՆԱԹՍ-ի գործարկումը դադարեցնելու պահը, իսկ նշված կանոնից բացառություն են կազմում միայն կոնկրետ որոշված վայրերում իրականացվող ՔՆԱԹՍ-երով թռիչքները: Նմանօրինակ համակարգ է մշակվել և 2021 թվականից փուլային եղանակով ներդրվում է Ավիացիոն անվտանգության եվրոպական գործակալության կողմից նաև ԵՄ անդամ երկրներում (տե՛ս ASD-STAN prEN 4709-002 P1, Aerospace series-Unmanned Aircraft Systems — Part 002: Direct Remote Identification, at: https://asd-stan.org/downloads/asd-stan-pren-4709-002-p1/):

[15] Այսպես, պետությունները պատասխանատու են անօդաչու թռչող սարքերին հակազդելու կառուցակարգեր մշակելու և ներդրելու համար՝ նվազեցնելով ՔՆԱԹՍ-երի կիրառմամբ ահաբեկչական հարձակումների սպառնալիքները: Մասնավորապես, 2017 թվականի օգոստոսի 2-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի (այսուհետ նաև՝ ԱԽ) կողմից ընդունվեց 2370 բանաձևը, որով սահմանվում են հակաահաբեկչական միջոցառումների համատեքստում պետությունների պարտավորությունները փոքր և թեթև զենքերի ապօրինի շրջանառության հակազդման հարցում (տե՛ս UN SC, Resolution 2370 (2017) Adopted by the Security Council at its 8017th meeting, on 2 August 2017, at: https://digitallibrary.un.org/record/1298189?ln=en):
2021 թվականի 2617 բանաձևում ԱԽ-ը արտահայտել է իր մտահոգությունը ահաբեկիչների կողմից անօդաչու թռչող սարքերով ահաբեկչական հարձակումներ իրականացնելու գլոբալ միտումների վերաբերյալ: Իսկ 2022 թվականին հրապարակվեց ՄԱԿ-ի ահաբեկչության դեմ պայքարի ստորաբաժանման կողմից մշակած Տեխնիկական ուղեցույցները, որոնք հեշտացնում են ԱԽ 2370 (2017) բանաձևի և հարակից կանխարգելման միջազգային չափանիշների ու լավ փորձի իմպլեմենտացիան, որի երկրորդ ենթամոդուլն ամբողջությամբ (էջեր 40-70) նվիրված է ահաբեկիչների կողմից անօդաչու թռչող սարքերի և դրանց բաղադրիչների ձեռքբերմանն ու օգտագործմանը հակազդելու միջոցառումներին, ներառյալ՝ համապատասխան սարքավորումների և համակարգերի ձեռքբերման անհրաժեշտությանը (տե՛ս UNCCT, Technical guidelines, *supra* n.12, pp. 52, 60-64):
Հաշվի առնելով նոր մարտահրավերները՝ պետությունների կողմից ձեռնարկվում են քայլեր ԱԹՍ-ների ահաբեկչական նպատակներով օգտագործմանը հակազդելու համակարգերի ներդրման և կիրառման ուղղությամբ:

արգելված գոտիներում վիրտուալ սահմանների համակարգի պահպանմանն ուղղված տեխնիկական պահանջների ներդրումը[16])

- Հատուկ ծառայությունների և պաշտպանության ոլորտի աշխատակիցների համար թեմատիկ թրենինգների, դասընթացների և սիմուլյացիոն խաղերի իրականացումը,
- ՔՆԱԹՍ-երի կիրառմամբ իրականացվող ահաբեկչական հարձակումներին հակազդելու ժամանակ պետական մարմինների առավել համակարգված աշխատանք իրականացնելու նպատակով բոլոր վերաբերելի պետական մարմինների աշխատակիցների համար գործողությունների և միջգերատեսչական համագործակցության ուղեցույցների, արձանագրությունների ընդունումը,
- Առավել խոցելի օբյեկտների (ենթակառուցվածքներ, հանրային կուտակման վայրեր և այլն) պաշտպանության և անվտանգության ամրապնդմանն ուղղված կազմակերպական և իրավական միջոցառումներ իրականացնելը[17],

---

[16] Այսպիսի համակարգի փուլային ներդրում է իրականացվում, օրինակ, ԵՄ օդային տարածքում, և 2024 թվականից բոլոր ՔՆԱԹՍ-երի նկատմամբ գործելու են այդ ներդրվող համակարգին համապատասխան թռիչքներ կատարելու համար անհրաժեշտ տեխնիկական պահանջները (տե՛ս EASA introduces standard for European drone map, 14,02,2022, at: https://www.dronewatch.eu/easa-introduces-standard-for-european-drone-map/; What's the Cx label for drones? 21.04.2023, at: https://www.coolblue.nl/en/advice/what-is-the-cx-label-for-drones.html):

[17] Այս համատեքստում հետաքրքրական է, մասնավորապես, ահաբեկչական հարձակումներից կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության վերաբերյալ ՄԱԿ ԱԽ 2341 բանաձևը, որով պետություններին կոչ է արվում, *inter alia,* դիտարկել կարևոր ենթակառուցվածքների վրա ահաբեկչական հարձակումների վտանգը մեղմելուն ուղղված և առկա սպառնալիքները գնահատող ու այդ գիտելիքի հիման վրա հակազդման միջոցներ սահմանող ռազմավարություններ մշակելու կամ եղած ռազմավարությունները բարելավելու հնարավորությունը (տե՛ս Резолюция 2341 (2017), принятая Советом Безопасности на его 7882-м заседании (13 февраля 2017 года), п.2, на: https://undocs.org/ru/S/RES/2341(2017):

- Մասնավոր սեկտորի և գիտահետազոտական հաստատությունների հետ համագործակցությունը և նրանց ներուժի կիրառումը՝ պետության անվտանգային մակարդակը բարձրացնելու համար[18],
- ՔՆԱԹՍ-երի շրջանառության պետական վերահսկման ուժեղացումը, ՔՆԱԹՍ-երին վերաբերող իրավահարաբերությունների արդյունավետ իրավական կարգավորումների, պետական կամ ինստիտուցիոնալ մակարդակներով հատուկ ռազմավարական փաստաթղթերի[19] կամ օրենքի[20] մշակումն ու ընդունումը:[21]

---

[18] *Global Programme on Countering Terrorist Threats against Vulnerable Targets "CTED Trends Alert, May 2019, Greater Efforts Needed to Address the Potential Risks Posed by Terrorist Use of Unmanned Aircraft Systems"* (UN 2022) pp. 10, 13, 16 at: https://www.un.org/counterterrorism/sites/www.un.org.counterterrorism/files/2118451e-vt-mod5-unmanned_aircraft_systems_final-web.pdf ; *CTED Trends Alert, Greater Efforts Needed To Address The Potential Risks Posed By Terrorist Use of Unmanned Aircraft Systems* (May 2019), p. 6, at: https://www.un.org/securitycouncil/ctc/sites/www.un.org.securitycouncil.ctc/files/files/documents/2021/Jan/cted-trends-alert-may_2019.pdf
Այս առումով լավ փորձ կարող է դիտարկվել, օրինակ, Միացյալ Թագավորության պաշտպանության նախարարության «Պաշտպանության և անվտանգության ակսելերատոր» նախաձեռնությունը, որի շրջանակում հայտարարվել էր մրցույթ և սկիզբ դրվել համագործակցության մի շարք կազմակերպությունների հետ՝ դրոններին հակազդելու համակարգերի վերաբերյալ առաջարկների համատեքստում (տե՛ս, մասնավորապես, TBAT innovation, DASA: Countering Drones [phase 1], at: https://tbat.co.uk/funding-calls/dasa-countering-drones/; Transparency data, Defence and Security Accelerator funded contracts: 1 April 2020 to 31 March 2021, Section 6: Countering Drones Phase 2, at: https://www.gov.uk/government/publications/accelerator-funded-contracts/defence-and-security-accelerator-funded-contracts-1-april-2020-to-31-march-2021):

Ընդ որում, վերոհիշյալ միջոցառումներից համապատասխան արդյունավետ իրավական կարգավորումների ընդունումը նույնիսկ չի պահանջում լուրջ ֆինանսական ռեսուրսներ և պետք է դիտարկվի որպես պետության քաղաքականության առաջնահերթություն ահաբեկչության դեմ պայքարի արդյունավետ կազմակերպման համատեքստում: Այդպիսի իրավական դրույթները պետք է առնվազն կարգավորեն հետևյալ իրավահարաբերությունները.

---

[19] Տե՛ս, օրինակ, HM Government, UK Counter-Unmanned Aircraft Strategy (2019) at: https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/840789/Counter-Unmanned_Aircraft_Strategy_Web_Accessible.pdf; U.S. Department of Defense Counter-Small Unmanned Aircraft Systems Strategy, at: https://media.defense.gov/2021/Jan/07/2002561080/-1/-1/1/DEPARTMENT-OF-DEFENSE-COUNTER-SMALL-UNMANNED-AIRCRAFT-SYSTEMS-STRATEGY.PDF; ԵՄ հակաահաբեկչական օրակարգի ՔՆԱԹՍ-երին վերաբերող դրույթները՝ Brussels, 9.12.2020, COM(2020) 795 final, COMMUNICATION FROM THE COMMISSION TO THE EUROPEAN PARLIAMENT, THE EUROPEAN COUNCIL, THE COUNCIL, THE EUROPEAN ECONOMIC AND SOCIAL COMMITTEE AND THE COMMITTEE OF THE REGIONS A Counter-Terrorism Agenda for the EU: Anticipate, Prevent, Protect, Respond, (“EU Counter-terrorism Agenda”) at: https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:52020DC0795

[20] Տե՛ս, օրինակ, Սինգապուրի «Անօդաչու սարքերի (բնակչության պաշտպանության և անվտանգության) մասին» 2015 թվականի օրենքը, որով փոփոխություններ իրականացվեցին Օդային երթևեկության և հասարակական կարգի մասին օրենքներում՝ նպատակ ունենալով կարգավորել անօդաչու սարքերի օգտագործման հետ կապված հարաբերությունները, ելնելով հանրային անվտանգության և պաշտպանության նկատառումներից (Unmanned Aircraft (Public Safety and Security) Bill No.13/2015, at: https://www.parliament.gov.sg/docs/default-source/Bills-Introduced/unmanned-aircraft-(public-safety-and-security)-bill-13-2015.pdf), ինչպես նաև «Օդային երթևեկության մասին» օրենքում փոփոխություններ իրականացնելու մասին» Սինգապուրի 2019 թվականի օրենքը (Air Navigation (Amendment) Bill No.27/2019, at: https://www.parliament.gov.sg/docs/default-source/default-document-library/air-navigation-(amendment)-bill-27-2019.pdf):

[21] Այսպես, ՄԱԿ-ի ահաբեկչության դեմ պայքարի ստորաբաժանման կողմից մշակած ԱԽ 2370 (2017) բանաձևի և հարակից կանխարգելման միջազգային չափանիշների ու լավ փորձի իմպլեմենտացիան հեշտացնող տեխնիկական ուղեցույցների համաձայն՝ պետությունները պետք է ունենան համապարփակ քաղաքականություն, որը սահմանում է ամբողջ պետական կառավարման ԱԹՍ-ներին հակազդելու ռազմավարությունը (տե՛ս UNCCT, Technical guidelines, *supra* n.12, pp. 46-51, clauses 2.1.1., 2.1.3):

- Բոլոր տեսակների ՔՆԱԹՍ-երի կիրառման կանոնները (ներառյալ՝ հատուկ նշանակության օբյեկտներից, կարևոր ենթակառուցվածքներից և նմանօրինակ այլ օբյեկտներից թռիչքի ժամանակ որոշակի նվազագույն հեռավորություն պահպանելու պարտադիրությունը, բնակելի տարածքներում, հասարակական կուտակումների վայրերում ՔՆԱԹՍ-երի կիրառման սահմանափակումները, միայն որոշակի առավելագույն թույլատրելի բարձրության վրա թռիչքներ կատարելու թույլատրելիությունը, որոշակի ժամերի թռիչքներ կատարելու սահմանափակումները, կիրառման համար թույլատրելի ՔՆԱԹՍ-երի չափով և քաշով կամ օգտագործման նպատակով պայմանավորված սահմանափակումներն ու կարգավորումները, ՔՆԱԹՍ-երի կիրառման կանոնների նկատմամբ վերահսկողության և խախտումների դեպքում պատասխանատվության մոտեցումներն ու կառուցակարգերը, ՔՆԱԹՍ-երի պարտադիր ապահովագրության սահմանումը) [22],

- ՔՆԱԹՍ-երի պետական գրանցման կամ լիցենզավորման կարգի սահմանումը՝ ապահովելու համար երկրում ՔՆԱԹՍ-երի շրջանառության նկատմամբ վերահսկողությունը,

- ՔՆԱԹՍ-երի ներմուծման, արտահանման, պետության տարածքով տրանզիտի հատուկ կանոնների սահմանումը, ներառյալ, օրինակ՝ համապատասխան պետական մարմիններին պարտադիր ծանուցման կանոնների նախատեսումը,

- ՔՆԱԹՍ-երի արտադրության, շրջանառության և օգտագործման նկատմամբ մշտադիտարկում կամ վերահսկողություն իրականացնելու մեջ ներգրավված պետական մարմինների հստակ գործառույթների սահմանումը, միջգերատեսչական համագործակցության կառուցակարգերի սահմանումը,

---

[22] *CTED Trends Alert, Greater Efforts Needed To Address The Potential Risks Posed By Terrorist Use of Unmanned Aircraft Systems (May* 2019), pp. 4-7, at: https://www.un.org/securitycouncil/ctc/sites/www.un.org.securitycouncil.ctc/files/files/documents/2021/Jan/cted-trends-alert-may_2019.pdf

- Քրեական օրենսգրքի համապատասխան կարգավորումների սահմանումը, որոնք նպատակ ունեն հատուկ կանոնակարգել ՔՆԱԹՍ-երի միջոցով որոշակի հանցագործություններ իրականացնելու առանձնահատկությունները (ներառյալ՝ ահաբեկչական գործողություններ իրականացնելը ՔՆԱԹՍ-երի կիրառմամբ՝ որպես ծանրացնող հանգամանք սահմանելը):

2.3. Միջազգային փորձի ուսումնասիրություն

Մի շարք պետություններ (այդ թվում՝ տարածաշրջանի պետություններից) արդեն տևական ժամանակ ջանքեր են գործադրում ՔՆԱԹՍ-երի իրավական կարգավորման ուժեղացման ուղղությամբ՝ հատուկ հաշվի առնելով, մասնավորապես, ՔՆԱԹՍ-երի ահաբեկչական նպատակով օգտագործվելու մեծ հավանականությունը:

Այսպես, Ռուսաստանի Դաշնությունում կիրառվում են մի շարք իրավական սահմանափակումներ ՔՆԱԹՍ-երի օգտագործման մասով: ՌԴ-ում սահմանված է պարտադիր գրանցում Օդային տրանսպորտի դաշնային գործակալությունում՝ ցանկացած ՔՆԱԹՍ-ի համար, որի քաշը գերազանցում է 150 գրամը՝ նախկին 250 գրամի փոխարեն:[23] 30կգ քաշը գերազանցող ցանկացած ՔՆԱԹՍ ենթակա է գրանցման ՌԴ անվտանգության դաշնային ծառայությունում, իսկ ՌԴ Օդային օրենսգրքի համաձայն՝ անհրաժեշտ է նաև հատուկ հավաստագրում, որն իրականացվում է քաղաքացիական օդանավերի, օդանավերի շարժիչների և

[23] Правила государственного учета беспилотных гражданских воздушных судов с максимальной взлетной массой от 0,15 килограмма до 30 килограммов, ввезенных в российскую федерацию или произведенных в российской федерации, утверждены постановлением правительства российской федерации от 25 мая 2019 г. N 658, на http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_325695/119b2b9c504757c864ea19fac68cce7d9d95e58d/#dst100011 , см также: “Как новый закон меняет правила использования беспилотников”, на: http://duma.gov.ru/news/46465/

պտուտակների պարտադիր հավաստագրման կազմակերպման և անցկացման համար պատասխանատու լիազոր մարմնի կողմից: Միևնույն ժամանակ, պետական գրանցումից բացի ՔՆԱԹՍ-ի կիրառման իրավական կարգավորումները սահմանված են ՌԴ օդային տարածքի օգտագործման դաշնային կանոններում:[24] Մասնավորապես, նախատեսված են խիստ սահմանափակումներ բնակելի վայրերում իրականացվող թռիչքների մասով՝ նախատեսելով պարտադիր թույլտվության կարգ: Թույլտվությունը ստացվում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնից, իսկ դաշնային նշանակության քաղաքում ցանկացած բնակելի վայրի օդային տարածքում թռիչքի իրականացման համար՝ համապատասխան գործադիր մարմնից: Երրորդ անձանց (առանձնատներ, կազմակերպություններ և այլն) օդային տարածքում թռիչք իրականացնելու համար անհրաժեշտ է նաև տվյալ սուբյեկտի (սեփականատիրոջ) թույլտվությունը: ՌԴ տրանսպորտի նախարարության հրամանով հատուկ սահմանվում են որոշակի քաղաքներում այն օդային տարածքները, որոնցում արգելվում է իրականացնել ՔՆԱԹՍ-երով թռիչքներ:[25] Արգելվում է իրականացնել թռիչքներ հատուկ պաշտպանվող օբյեկտների օդային տարածքներում, օդանավակայանների մոտակայքում: Արգելվում են նաև գիշերային ժամերին, գործարկողի տեսադաշտից դուրս և 150 մետրից ավելի բարձր օդային տարածքում ՔՆԱԹՍ-ով թռիչքների իրականացումը: Նկարահանման նպատակով ՔՆԱԹՍ-ի կիրառումը պահանջում է լրացուցիչ թույլտվություն համապատասխան պետական կառավարման մարմնից: Բացի այդ, հատուկ վերահսկողություն է

---

[24] Федеральные правила использования воздушного пространства РФ, Утверждены Постановлением Правительства Российской Федерации от 11 марта 2010 г. N 138, на: http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_98957/2696fa16ed088ac15dd783e2d9c0ea558732f3fe/

[25] Приказ Минтранса России от 11.05.2022 N 172 "Об установлении запретных зон" (Зарегистрировано в Минюсте России 14.06.2022 N 68853), на: https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_419561/

նախատեսված ՔՆԱԹՍ-երի ՌԴ տարածք ներմուծման և ՌԴ տարածքից արտահանման համար: Այսպես, 2022 թվականի հուլիսին ընդունված կառավարության որոշման համաձայն՝ ՔՆԱԹՍ-երը, որոնք նախատեսված են օպերատորի տեսադաշտից դուրս կառավարվող՝ 30 րոպեից մինչև 1 ժամ տևողությամբ, կայուն վերահսկվող թռիչքի համար 46,3 կմ/ժ (25 հանգույց) և ավելի արագությամբ քամու ժամանակ թռիչքի համար կամ 1 ժամ և ավելի տևողությամբ թռիչքների համար, ներառվել են երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների ցանկում, որոնք կարող են օգտագործվել զենքի և ռազմական տեխնիկայի ստեղծման գործընթացում:[26] ՌԴ տարածքում վերոհիշյալ նկարագրին համապատասխանող ՔՆԱԹՍ-երի տեղափոխման համար անհրաժեշտ է ՌԴ Տեխնիկական և արտահանման վերահսկողության դաշնային ծառայության համապատասխան արտոնագիրը: Արտահանման և ներմուծման հատուկ հսկողության ենթակա ապրանքները ներառված են անձնական օգտագործման ապրանքների հետ չկապված ապրանքների կատեգորիաների ցանկում և պետք է անցնեն սահմանին հայտարարագրման գործընթաց:[27]

Ղազախստանում նույնպես գործում են մի շարք սահմանափակումներ ՔՆԱԹՍ-երի կիրառման մասով՝ Ղազախստանի Հանրապետության ներդրումների և զարգացման նախարարի 2017 թվականի, ինչպես նաև արդյունաբերության և

---

[26] Постановление Правительства Российской Федерации от 19 июля 2022 г. N 1299 "Об утверждении списка товаров и технологий двойного назначения, которые могут быть использованы при создании вооружений и военной техники и в отношении которых осуществляется экспортный контроль", пп. 2.1 и 9.1.12., см на: https://www.alta.ru/tamdoc/22ps1299/
Միևնույն ժամանակ, եթե ՔՆԱԹՍ-ն իր տեխնիկական բնութագրիչներով չի ընկնում հատուկ վերահսկվող ապրանքների տակ, ապա անհրաժեշտ է ստանալ դրա նույնականացման եզրակացությունը կամ իրականացնել հաշվառում:
[27] Решение N 107 "Об отдельных вопросах, связанных с товарами для личного пользования» п. 20 приложения 6, см. на: https://www.alta.ru/tamdoc/17sr0107/#pril6

ենթակառուցվածքների զարգացման նախարարի հրամաններով[28]: Մասնավորապես, 250 գրամ քաշը գերազանցող բոլոր ՔՆԱԹՍ-երը ենթակա են գրանցման, մինչդեռ ցանկացած ՔՆԱԹՍ-ը, որի քաշը գերազանցում է 1,5 կգ-ը, ինչպես նաև հատուկ թռիչքներ իրականացնող 250 գրամը գերազանցող ՔՆԱԹՍ-երը ենթակա են հատուկ հաշվառման: Ցանկացած բարձրության վրա ավիացիոն աշխատանքների կատարման նպատակով թռիչքները, քաղաքների կամ ավանների խիտ բնակեցված տարածքներով թռիչքները, 50 մետր բարձրության վրա և ավելի բարձր իրականացվող թռիչքները, քաղաքացիական օդանավակայանից 5,5 կմ հեռավորության սահմաններում կատարվող թռիչքները համարվում են հատուկ թռիչքներ և ենթակա են լրացուցիչ սահմանափակումների, ներառյալ՝ պարտադիր հաշվառում և վերահսկողության նպատակով նույնականացման համարի օգտագործման պարտադիրությունը, թռիչքի համար թույլտվություն ստանալու և թռիչքի պլանը հաստատելու պայմանը, ՔՆԱԹՍ-ի օպերատորի կողմից հատուկ դասընթաց անցնելու և հավաստագրման պարտադիրությունը:[29] ՔՆԱԹՍ-երի կիրառումը արգելվում է թռիչքի իրականացման և վայրէջքի ժամանակ՝ ցանկացած անձից, մեքենայից, շինությունից հորիզոնական 50 մետրից փոքր հեռավորության վրա, իսկ թռիչքի ժամանակ՝ ցանկացած անձից, մեքենայից, շինությունից

---

[28] Приказ Министра по инвестициям и развитию Республики Казахстан от 30 июня 2017 года № 409. Зарегистрирован в Министерстве юстиции Республики Казахстан 24 августа 2017 года № 15553 «Об утверждении Правил государственной регистрации гражданских воздушных судов Республики Казахстан и прав на них», на: https://adilet.zan.kz/rus/docs/V1700015553 ; Приказ и.о. Министра индустрии и инфраструктурного развития Республики Казахстан от 31 декабря 2020 года № 706. Зарегистрирован в Министерстве юстиции Республики Казахстан 5 января 2021 года № 22031 «Об утверждении правил эксплуатации беспилотных летательных аппаратов в воздушном пространстве Республики Казахстан», на https://adilet.zan.kz/rus/docs/V2000022031#z3

[29] Приказ и.о. Министра индустрии и инфраструктурного развития Республики Казахстан от 31 декабря 2020 года № 706. Зарегистрирован в Министерстве юстиции Республики Казахстан 5 января 2021 года № 22031 «Об утверждении правил эксплуатации беспилотных летательных аппаратов в воздушном пространстве Республики Казахстан», п. 9, на https://adilet.zan.kz/rus/docs/V2000022031#z3

հորիզոնական 100 մետրից ավելի մոտ հեռավորության վրա, բոլոր դեպքերում՝ մարդկանց և տրանսպորտային միջոցներից՝ հորիզոնական 150 մետրից ավելի մոտ հեռավորության վրա, արգելված և սահմանափակ թռիչքների գոտիներում: [30] Առերևույթ Ղազախստանի տարածք ՔՆԱԹՍ-երի ներմուծման հատուկ վերահսկողության և հավաստագրման գործընթաց առկա չէ:[31]

Բելառուսում ՔՆԱԹՍ-երի կիրառման իրավական կարգավորումներն առավելապես նախատեսված են Բելառուսի Հանրապետությունում ավիամոդելների[32] կիրառման՝ Նախարարների խորհրդի կողմից հաստատված կանոններով[33]: Մասնավորապես, առանց հատուկ թույլտվության արգելվում է ՔՆԱԹՍ-ով թռիչք կատարել որոշակի տարածքներում, ներառյալ սահմանային գոտիները, ինչպես նաև բնակելի վայրերը (բացառությամբ գյուղային բնակավայրերի):[34] Առկա է ՔՆԱԹՍ-ով թռիչք կատարելու համար արգելված տարածքների ինտերակտիվ քարտեզ[35]: Թույլատրելի տարածքներում թռիչքները կարելի է իրականացնել առավելագույնը 100 մետր բարձրության վրա, իսկ 500 գրամ քաշը գերազանցող ՔՆԱԹՍ-երը ենթակա են հատուկ նույնականացման: ՔՆԱԹՍ-ով թռիչք իրականացնելու համար անհրաժեշտ է ներկայացնել թռիչքի պլանը և օդային տարածքն օգտագործելու հայտ

---

[30] *Ibid.*, п. 26.

[31] GOV.UK, Foreign travel advice Kazakhstan, Local laws and customs, at: https://www.gov.uk/foreign-travel-advice/kazakhstan/local-laws-and-customs

[32] Բելառուսի օրենսդրության համաձայն «ավիամոդել» հասկացությունը ներառում է նաև ՔՆԱԹՍ-երը (տե՛ս Указ Президента Республики Беларусь № 81 от 25 февраля 2016 г., п. 1.1., Постановление государственного комитета по авиации Республики Беларусь и Министерства Обороны Республики Беларусь № 7/30 от 1 июня 2004 г. Об утверждении Авиационных правил полетов в воздушном пространстве Республики Беларусь):

[33] Правила использования авиамоделей в Республике Беларусь, утвержденными постановлением Совета Министров Республики Беларусь от 16.08.2016 №636.

[34] Постановление государственного комитета по авиации Республики Беларусь и Министерства Обороны Республики Беларусь № 7/30 от 1 июня 2004 г. Об утверждении Авиационных правил полетов в воздушном пространстве Республики Беларусь, п. 103

[35] Տե՛ս https://360pano.by/no_drons_by2.html

Օդային երթևեկության կառավարման միասնական համակարգի կենտրոն, իսկ թռիչքի ընթացքում տեսանկարահանում և լուսանկարահանում իրականացնելու համար անհրաժեշտ է ստանալ Բելառուսի Զինված ուժերի գլխավոր շտաբի թույլտվությունը:[36] Ինչ վերաբերում է Բելառուսի տարածք ՔՆԱԹՍ-երի ներկրման ու արտահանման կանոններին, ապա գործում է համեմատաբար ազատականացված գործընթաց և կիրառելի ընթացակարգերը պայմանավորված են յուրաքանչյուր դեպքում սահմանված ռադիոհաճախականության տիրույթում ՔՆԱԹՍ-ի առավելագույն թույլատրելի հզորությամբ[37]: Ռազմական կազմավորումների և ներքին գործերի մարմինների աշխատակիցները, ինչպես նաև անվտանգություն ապահովող ռազմականացված հիմնարկների աշխատակիցները իրավասու են իրենց հայեցողությամբ ցանկացած եղանակով վնասազերծել ՔՆԱԹՍ-ը և կասեցնել թռիչքը, եթե թռիչքն իրականացվում է ՔՆԱԹՍ-ով թռիչք իրականացնելու համար արգելված տարածքում կամ վայրում:[38]

Ղրղզստանում ՔՆԱԹՍ-ով թռիչքները կարգավորվում են Ղրղզստանի Հանրապետության ավիացիոն կանոններով[39]: Մասնավորապես, ՔՆԱԹՍ-ով թռիչքները իրականացվում են միայն որոշակի դասի օդային տարածքներում՝ թռիչքի

---

[36] Порядок использования авиамоделей и беспилотных летательных аппаратов в воздушном пространстве Республики Беларусь, на: https://mosk.minsk.gov.by/sluzhby-i-podrazdeleniya/prokuratura/11301-poryadok-ispolzovaniya-aviamodelej-i-bespilotnykh-letatelnykh-apparatov-v-vozdushnom-prostranstve-respubliki-belarus

[37] Министерство связи и информатизации Республики Беларусь, «Какие радиоуправляемые модели и квадрокоптеры можно ввозить и использовать на территории Республики Беларусь без разрешительных документов РУП «БелГИЭ»?», на: https://mpt.gov.by/ru/faq/kakie-radioupravlyaemye-modeli-i-kvadrokoptery-mozhno-vvozit-i-ispolzovat-na-territorii

[38] Указ Президента Республики Беларусь №215 от 05.06.2019 о пресечении полетов авиамоделей и беспилотных летательных аппаратов, на: https://president.gov.by/bucket/assets/uploads/documents/2019/215uk.pdf

[39] Авиационные правила Кыргызской Республики (апкр-2), Утверждено приказом Министерства транспорта и коммуникаций Кыргызской Республики от 27 января 2016 г., на: http://cbd.minjust.gov.kg/act/view/ky-kg/200041

պլանի և ներքին գործերի համապատասխան մարմնի թույլտվության հիման վրա: Ընդ որում, թռիչքների համաձայնեցումն իրականացվում է ազգային անվտանգության ծառայության մարմինների, պետական պաշտպանության համապատասխան մարմնի և տեղական ինքնակառավարման մարմինների հետ: ՔՆԱԹՍ-ը գործարկողը գործարկումից անմիջապես հետո և թռիչքի ավարտին պարտավոր է անընդհատ կապի մեջ լինել պետության ներքին գործերի համապատասխան մարմինների հետ՝ հընթացս փոխանցելով որոշակի տեղեկատվություն ՔՆԱԹՍ-ի գործարկման վերաբերյալ: Նշված կանոնից բացառություն է կազմում միայն սպորտային և ժամանցային նշանակության ՔՆԱԹՍ-երը (մինչև 2 ժամ թռիչքային կարողությամբ՝ մինչև 300 մետր բարձրության վրա): ՔՆԱԹՍ-երով թռիչքներն արգելվում են օդանավակայանների տարածքում, կարող են նախատեսվել նաև հատուկ տարածքներ, որոնցում գործում են որոշակի սահմանափակումներ:[40] Բաց տիրույթում առկա տեղեկությունների համաձայն՝ ՔՆԱԹՍ-երը կարելի է սահմանով անցկացնել Ղրղզստան՝ առանց լրացուցիչ սահմանափակումների:

Վերլուծության շրջանակում առանձին ուսումնասիրության առարկա են դարձել նաև Ադրբեջանի և Թուրքիայի իրավական կարգավորումները ՔՆԱԹՍ-երի մասով: Այսպես, Ադրբեջանում ՔՆԱԹՍ-երի կիրառման կանոնները նախատեսվել են դեռ 2017 թվականին:[41] ՔՆԱԹՍ-երը ենթակա են պետական գրանցման Ադրբեջանի քաղաքացիական ավիացիայի պետական վարչությունում, իսկ կոմերցիոն բնույթի թռիչքները ՔՆԱԹՍ-ով իրականացվում են միայն թույլտվության առկայության պարագայում: Արգելվում է իրականացնել թռիչք ՔՆԱԹՍ-ով քաղաքներից և բնակավայրերից 150 մետր և առավել փոքր հեռավորության վրա: Նախատեսված են

---

[40] Авиационные правила Кыргызской Республики (апкр-2), Утверждено приказом Министерства транспорта и коммуникаций Кыргызской Республики от 27 января 2016 г., Приложение 6, на: http://cbd.minjust.gov.kg/act/view/ky-kg/200041

[41] Armiya.az, “Утверждены правила использования гражданских БПЛА”, https://tinyurl.com/3yj363ec

սահմանափակումներ օդանավակայանների տարածքում և մոտակայքում թռիչքների իրականացման մասով: Թռիչքի ընթացքում ՔՆԱԹՍ-ը պետք է գտնվի 50 և ավելի մետր հեռավորության վրա ցանկացած անձից կամ այլ օբյեկտներից, իսկ թռիչքի իրականացման առավելագույն բարձրությունը 122 մետր է: ՔՆԱԹՍ-ի օպերատորը պարտավոր է ցույց տալ ՔՆԱԹՍ-ի կառավարման որոշակի փորձառություն:[42] Ըստ որոշ հրապարակումների՝ արգելվում է ՔՆԱԹՍ-ով իրականացնել երրորդ անձանց և օբյեկտների տեսանկարահանում կամ լուսանկարահանում:[43] Հատկանշական է, որ վերոհիշյալ կարգավորումների հետ մեկտեղ, ըստ որոշ աղբյուրներում առկա տեղեկատվության, Ադրբեջանի տարածք ՔՆԱԹՍ անցկացնելու համար անհրաժեշտ է նախապես ստանալ թույլտվություն թվով 5 գերատեսչություններից՝ կապի նախարարություն, հատուկ ազգային անվտանգության ծառայություն, ազգային անվտանգության ծառայություն, պետական սահմանային ծառայություն և պաշտպանության նախարարություն:[44] Միևնույն ժամանակ, համաձայն հրապարակումների, արգելվում է օտարերկրյա քաղաքացու կողմից ՔՆԱԹՍ-ի ներմուծումը Ադրբեջան:[45]

Թուրքիայում ևս գործում են մի շարք սահմանափակումներ ՔՆԱԹՍ-երի գործարկման և ներմուծման մասով: Մասնավորապես, 500 գրամ քաշը գերազանցող ՔՆԱԹՍ-երը ենթակա են պարտադիր պետական գրանցման: Ընդ որում, ՔՆԱԹՍ-ի նման գրանցում իրավասու են իրականացնել միայն Թուրքիայի քաղաքացիները: ՔՆԱԹՍ-ի քաշը չպետք է գերազանցի 4 կգ-ը: Արգելվում է իրականացնել ՔՆԱԹՍ-

---

[42] Drone laws for a safer airspace, Drone laws in Azerbaijan, at: https://drone-laws.com/drone-laws-in-azerbaijan/#:~:text=Drones%20shall%20not%20approach%20cities,during%20take%2Doff%20and%20landing

[43] Turan.az, “New regulations on the use of drones do not soften the rules for their use”, at: https://www.turan.az/ext/news/2021/3/free/Social/en/2392.htm

[44] *Ibid.*

[45] “Flying a Camera Drone in Asia: Risks and Regulations”, https://www.xyzasia.com/home/flying-camera-drone-asia-risks-regulations

ով թռիչք մարդաշատ վայրերում, օդանավակայանների մոտակայքում, ինչպես նաև պաշտպանական, անվտանգային կամ պատմական նշանակություն ունեցող մի շարք այլ օբյեկտների օդային տարածքներում: Արգելվում է օգտագործել ՔՆԱԹՍ գիշերային ժամերին և 120 մետրը գերազանցող բարձրության վրա: Արգելվում է խախտել երրորդ անձանց անձնական կյանքի անձեռնմխելիությունը ՔՆԱԹՍ-ով տեսանկարահանելու և լուսանկարահանելու միջոցով: Կոմերցիոն նպատակով ՔՆԱԹՍ-ի կիրառման համար այն օգտագործողը պարտավոր է ստանալ համապատասխան վկայական: Թուրքիա 500 գրամ քաշը գերազանցող ՔՆԱԹՍ-ի ներմուծումը օտարերկրյա քաղաքացու կողմից հնարավոր է միայն Թուրքիայի քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից նախապես տրամադրված հատուկ թույլտվության առկայության դեպքում (որի համար կարող է անհրաժեշտ լինել ներկայացնել դատվածության վերաբերյալ տեղեկատվություն), իսկ Թուրքիայի քաղաքացիների կողմից ՔՆԱԹՍ-ի ներմուծումը հնարավոր է՝ ՔՆԱԹՍ-ի տեխնիկական համապատասխանության վկայականի առկայության պարագայում:[46]

Հարկ է հակիրճ անդրադարձ կատարել նաև այլ պետությունների իրավական կարգավորումներին: Մասնավորապես, արդեն 2019 թվականի դրությամբ ուսումնասիրված 34 պետություններից[47] 34-ում կիրառվում էին թռիչքի տարածության սահմանափակումներ, 31 պետության[48] օրենսդրությամբ ՔՆԱԹՍ-երը

---

[46] Տես, մասնավորապես՝ UAV Coach, “Drone laws in Turkey”, at: https://uavcoach.com/drone-laws-in-turkey/; WAZZA Blog, “Коптер и Турция – правила полетов, проверки на таможне”, at: https://blog.wazza.com.ua/drony/pravila-poletov/kopter-i-turciya-pravila-poletov-proverki-na-tamozhne/; Ivan Fischer in Brussels Morning, “Must-Known Drone Laws in Turkey (in 2023)”, 21 December 2022, at: https://brusselsmorning.com/must-known-drone-laws-in-turkey-in-2023/28851/

[47] Ավստրալիա, Ավստրիա, Բելգիա, Կանադա, Չիլի, Չեխիա, Դանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հունաստան, Հունգարիա, Իսլանդիա, Իռլանդիա, Իսրայել, Իտալիա, Ճապոնիա, Հարավային Կորեա, Լատվիա, Լյուքսեմբուրգ, Մեքսիկա, Նիդեռլանդներ, Նոր Զելանդիա, Նորվեգիա, Լեհաստան, Պորտուգալիա, Սլովակիա, Սլովենիա, Իսպանիա, Շվեդիա, Շվեյցարիա, Թուրքիա, Մեծ Բրիտանիայի Թագավորություն:

[48] *Supra* n. 47 ցանկից բացառություն էին կազմում Էստոնիան, Նիդեռլանդները և Թուրքիան:

դասակարգվում էին ըստ քաշի, 31 պետությունում[49] սահմանափակվում էր մարդաշատ վայրերի օդային տարածքում ՔՆԱԹՍ-ով թռիչք իրականացնելը, 29 պետությունում[50] թռիչքի իրականացման համար պահանջվում էր թույլտվություն, 26 պետության իրավական կարգավորումներով նախատեսված էին սահմանափակումներ որոշակի օդային տարածքներում ՔՆԱԹՍ-երով թռիչք իրականացնելու նկատմամբ[51], 23 պետությունում[52] կիրառվում էր ՔՆԱԹՍ-երի պարտադիր գրանցման համակարգ, 23 պետության[53] կարգավորումների համաձայն պարտադիր էր թռիչքների ժամանակ շենքերից որոշակի հեռավորության պահպանումը, 22 պետությունում[54] ՔՆԱԹՍ-ը գործարկողին գործարկման համար անհրաժեշտ էր ունենալ որոշակի թույլտվություն կամ վկայագիր, 14 պետությունում[55] կարգավորման (վերահսկման) առարկա էր ՔՆԱԹՍ-ով իրականացվող թռիչքների նպատակը:[56]

ՔՆԱԹՍ-երի կարգավորման ԵՄ ներկայիս մոտեցմամբ ենթադրվում է շարունակական միջոլորտային և միջինստիտուցիոնալ ջանքերի գործադրում

---

[49] *Supra* n. 47 ցանկի պետությունները, բացառությամբ Հունգարիայի, Նորվեգիայի, Իսպանիայի:
[50] *Supra* n. 47 ցանկի պետությունները, բացառությամբ Հունաստանի, Հունգարիայի, Իտալիայի, Հարավային Կորեայի:
[51] *Supra* n. 47 ցանկի պետությունները, բացառությամբ Կանադայի, Չիլիի, Չեխիա, Էստոնիայի, Դանիայի, Հունգարիայի, Լյուքսեմբուրգի, Նիդեռլանդների:
[52] *Supra* n. 47 ցանկի պետությունները, բացառությամբ Ավստրալիայի, Էստոնիայի, Գերմանիայի, Իսրայելի, Ճապոնիայի, Լյուքսեմբուրգի, Մեքսիկայի, Նոր Զելանդիայի, Պորտուգալիայի, Շվեյցարիայի, Թուրքիայի:
[53] *Supra* n. 47 ցանկի պետությունները, բացառությամբ Ավստրալիայի, Ավստրիայի, Չիլիի, Հունգարիայի, Իսրայելի, Մեքսիկայի, Լյուքսեմբուրգի, Նիդեռլանդների, Իսպանիայի, Շվեդիայի, Շվեյցարիայի:
[54] *Supra* n. 47 ցանկի պետությունները, բացառությամբ Ավստրիայի, Չեխիայի, Դանիայի, Էստոնիայի, Իսլանդիայի, Իռլանդիայի, Ճապոնիայի, Հարավային Կորեայի, Լատվիայի, Պորտուգալիայի, Շվեդիայի, Շվեյցարիայի:
[55] Ավստրալիա, Ավստրիա, Կանադա, Չեխիա, Ֆրանսիա, Հունաստան, Իսրայել, Նիդեռլանդներ, Լեհաստան, Պորտուգալիա, Սլովակիա, Իսպանիա, Շվեդիա, Միացյալ Թագավորություն:
[56] Nikolaos Tsiamis, Loukia Efthymiou and Konstantinos P. Tsagarakis, “A Comparative Analysis of the Legislation Evolution for Drone Use in OECD Countries”, MDPI drones (1 Oct 2019), p.4, at: file:///C:/Users/l.yeremyan/Downloads/drones-03-00075-v3%20(4).pdf

պետական և ԵՄ անդամ երկրների միջպետական համագործակցության մակարդակներում:[57] ԵՄ անդամ երկրներում ՔՆԱԹՍ-երի տեխնիկական չափանիշների և օգտագործման (այդ թվում՝ արտադրության և շրջանառության) համապարփակ նվազագույն միասնական չափորոշիչները սահմանվեցին 2019 թվականին[58]: Այսպես, ԵՄ 2019/945 որոշմամբ մանրամասն կարգավորված են ՔՆԱԹՍ-երի արտադրությանը ներկայացվող հատուկ պահանջները և ՔՆԱԹՍ-եր արտադրողների պարտականությունները, ներառյալ՝ ՔՆԱԹՍ-ի հեռավար նույնականացման ներկառուցված տեխնիկական հնարավորության վերաբերյալ, ՔՆԱԹՍ-երի օգտագործման համար թույլտվություն ստանալու դեպքերը և պայմանները, ՔՆԱԹՍ-երի ԵՄ տարածքում շրջանառության պայմանները և կանոնները, ներառյալ՝ ներմուծողների և դիստրիբյուտորների (վաճառողների)

---

[57] ՔՆԱԹՍ-երի կիրառմամբ պայմանավորված ահաբեկչական սպառնալիքների նվազեցմանն ուղղված ԵՄ այսպիսի համապարփակ մոտեցումներն իրենց արտացոլումն են գտել, օրինակ, ԵՄ անվտանգության միության 2020 թվականի ռազմավարության և ահաբեկչության դեմ պայքարի նորացված օրակարգի մեջ (EU counter-terrorism agenda, *supra* n.19), Քաղաքացիական, պաշտպանության և օդային արդյունաբերությունների միջև սիներգիայի վերաբերյալ ԵՄ գործողությունների ծրագրում (տե՛ս OPINION of European Economic and Social Committee, Communication from the Commission to the European Parliament, the European Council, the Council, the European Economic and Social Committee and the Committee of the Regions - Action Plan on synergies between civil, defence and space industries [COM(2021) 70 final], at: https://www.eesc.europa.eu/en/our-work/opinions-information-reports/opinions/action-plan-synergies-between-civil-defence-and-space-industries), ԵՄ-ի Համատեղ վերլուծական կենտրոնի բազմաթիվ աշխատանքներում (տե՛ս https://joint-research-centre.ec.europa.eu/scientific-activities-z/drones-counter-drones-and-autonomous-systems_en?wt-search=yes), ԵՄ կառույցների այլ աշխատանքային փաստաթղթերում (տե՛ս, օրինակ՝ Commission Staff Working Document, EU Drone Sector state of play, Accompanying the document Communication from the Commission to the European Parliament, the Council, the European Economic and Social Committee and the Committee of the Regions “A Drone Strategy 2.0 for a Smart and Sustainable Unmanned Aircraft Eco-System in Europe” (COM(2022) 652 final), at: https://transport.ec.europa.eu/system/files/2022-11/SWD_2022_366_drone_strategy_2.0.pdf) և այլն:

[58] COMMISSION DELEGATED REGULATION (EU) 2019/945 of 12 March 2019 on unmanned aircraft systems and on third-country operators of unmanned aircraft systems, at: https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32019R0945 (այսուհետ՝ նաև 2019/945 որոշում); COMMISSION IMPLEMENTING REGULATION (EU) 2019/947 of 24 May 2019 on the rules and procedures for the operation of unmanned aircraft (այսուհետ՝ նաև 2019/947 որոշում):

պարտականությունները և տեխնիկական փաստաթղթերին ներկայացվող պահանջները, ինչպես նաև երրորդ երկրների ՔՆԱԹՍ-երի օպերատորների նկատմամբ կիրառվող պայմանները՝ ԵՄ միասնական օդային տարածքում ՔՆԱԹՍ-երի շահագործման մասով:[59]

Իսկ ԵՄ 2019/947 որոշմամբ սահմանվում են ՔՆԱԹՍ-երի՝ ԵՄ միասնական տարածքում շահագործման նվազագույն կանոնները և չափորոշիչները, մասնավորապես, ըստ ՔՆԱԹՍ-երի կիրառման հետևանքով ռիսկի մակարդակի դրանք դասակարգելով երեք հիմնական տեսակի՝ «բաց», «հատուկ» և «հավաստագրված», և սահմանելով յուրաքանչյուր տեսակը համարժեք կարգավորելու անհրաժեշտությունը:[60] Նույն փաստաթղթով նաև նախատեսված է պետությունների պարտականությունը՝ սահմանելու հատուկ ընթացակարգեր ՔՆԱԹՍ-երի մակնշման և նույնականացման համար, ՔՆԱԹՍ-երի օպերատորների գրանցման[61] համար[62], ինչպես նաև ՔՆԱԹՍ-երի թռիչքները որոշակի օբյեկտների օդային տարածքներում իրականացնելու սահմանափակումների իրավական հիմքերը[63] և որպես U տարածքի[64] ձևավորման համար պարտադիր պահանջ՝ այն է՝

---

[59] 2019/945 և 2019/947 որոշումներով չեն կարգավորվում միայն այն ՔՆԱԹՍ-երը, որոնք նախատեսված են փակ տարածքի ներսում օգտագործման համար:

[60] COMMISSION IMPLEMENTING REGULATION (EU) 2019/947 of 24 May 2019 on the rules and procedures for the operation of unmanned aircraft (“Regulation 2019/947” at: https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32019R0947), (6):

[61] Այսպիսի գրանցումը, որպես կանոն, պետք է պարտադիր լինի ցանկացած 250 գրամը գերազանցող ՔՆԱԹՍ-երի օպերատորների համար, ինչպես նաև ցանկացած այնպիսի ՔՆԱԹՍ շահագործող օպերատորի, որն ունի անձնական տվյալներ գրանցելու տեխնիկական հնարավորություն՝ ելնելով անձնական տվյալների պաշտպանության նկատառումներից: Օպերատորների գրանցման կանոնը կիրառելի չէ ԵՄ 2009/48 դիրեկտիվով խաղալիք համարվող ՔՆԱԹՍ-երի պարագայում (*Ibid.* (15), (16)):

[62] *Ibid.* (13)

[63] *Ibid.* (21)

[64] U տարածքը նոր ծառայությունների ամբողջություն է, որը հիմնված է թվայնացման և ավտոմատացման բարձր մակարդակի վրա, և որը նախատեսված է մեծ թվով ՔՆԱԹՍ-երի (այդ թվում՝ օպերատորի տեսադաշտից դուրս) օդային տարածքում անվտանգ, պաշտպանված և արդյունավետ շահագործումը ապահովելու համար (տե՛ս https://joinup.ec.europa.eu/collection/rolling-plan-ict-standardisation/u-space):

ՔՆԱԹՍ-երի գրանցման համակարգ ու աշխարհագրական տվյալները ֆիքսելու և նույնականացվելու ներկառուցված տեխնիկական հնարավորություններ ունենալը:[65] Այսօր արդեն ԵՄ-ն ձեռնամուխ է եղել Ս տարածքի ձևավորման գործընթացին, որի շահագործման վերջին փուլը պլանավորվում է ավարտել մինչև 2030 թվականը:[66] Ս տարածքին վերաբերող իրավական փաթեթն ընդունվել է 2021 թվականի ապրիլին և հենց Ս տարածքի հայեցակարգի համատեքստում է ներդրվել ՔՆԱԹՍ-երի ուղիղ ռեժիմում հեռահար նույնականացման պարտադիր համակարգը:[67] Ի լրումն վերոհիշյալ իրավական և կազմակերպական լուծումների՝ ԵՄ օդային տարածքում փուլային սկզբունքով ներդրվում են նաև թվային քարտեզների ու սահմանափակ թռիչքների գոտիներում և թռիչքների համար արգելված գոտիներում վիրտուալ սահմանների ձևավորման համակարգը և սահմանվում են դրանց պահպանմանն ուղղված ՔՆԱԹՍ-երին ներկայացվող պարտադիր տեխնիկական պահանջները:[68]

Գործող կարգավորումների համաձայն՝ վերոհիշյալ «բաց», «հատուկ» և «հավաստագրված» շահագործման տեսակներից յուրաքանչյուրն ունի իր ենթատեսակները՝ որպես կանոն, պայմանավորված կիրառելի գործառնական սահմանափակումներով:[69]

---

[65] Regulation 2019/947, *supra* n. 60, (26)

[66] European Commission website, Mobility and Transport, “New EU rules on dedicated airspace for drones enter into force”, at: https://transport.ec.europa.eu/news/new-eu-rules-dedicated-airspace-drones-enter-force-2023-01-26_en

[67] *Supra* n.14

[68] *Ibid.*

[69] Այդպիսի սահմանափակումներն են, օրինակ, ՔՆԱԹՍ-ի 25 կգ-ից ավելի քաշը, շահագործման նպատակները և համապատասխանաբար՝ թույլատրելի թռիչքային տարածքների սահմանումը, թռիչքի առավելագույն բարձրությունը, օպերատորի տեսադաշտից դուրս թռիչք իրականացնելու թույլատրելիությունը, փաթեթներ տեղափոխելու թույլատրելիությունը և այլն:

Այսպես ամենամեղմ իրավական կարգավորումները նախատեսված են «բաց» տեսակի[70] շահագործման համար[71] և մասնավորապես՝ մինչև 250 գրամ քաշով ՔՆԱԹՍ-երի շահագործման համար: Այս ենթատեսակի համար չի պահանջվում ՔՆԱԹՍ-ը շահագործողի գրանցում, բացառությամբ, եթե ՔՆԱԹՍ-ը հագեցած է տեսախցիկով կամ սենսորով և միաժամանակ խաղալիք չէ[72], ինչպես նաև չի պահանջվում շահագործողի վերապատրաստում, և սահմանված չէ շահագործողի թույլատրելի նվազագույն տարիքը:[73] Մինչդեռ «բաց» տեսակի շահագործման 250 գրամը գերազանցող և մինչև 25 կգ քաշով յուրաքանչյուր ՔՆԱԹՍ-ի շահագործող պետք է լինի 16 տարին լրացած և պարտավոր է գրանցվել, անցնել համապատասխան դասընթաց և հանձնել քննություն:[74] Բաց տեսակի շահագործման ՔՆԱԹՍ-երով իրականացվող թռիչքները գնահատվում են որպես համեմատաբար ավելի պակաս ռիսկային և, հետևաբար, թռիչքի իրականացման համար հատուկ թույլտվություն չեն պահանջում:[75]

«Հատուկ» տեսակի ՔՆԱԹՍ-երի շահագործման օրինակներ են 4 կգ քաշը գերազանցող և բնակավայրերի օդային տարածքում, ինչպես նաև 25 կգ քաշը գերազանցող ՔՆԱԹՍ-ի շահագործումը, փաթեթներ տեղափոխելու համար օգտագործվող ՔՆԱԹՍ-ի շահագործումը, ՔՆԱԹՍ-ի շահագործումը օպերատորի տեսադաշտից դուրս, ՔՆԱԹՍ-ի շահագործումը 120 մետրից բարձր օդային

---

[70] Բաց տեսակի շահագործման շրջանակում տարբեր կարգավորումներ են նախատեսված, մասնավորապես, մինչև 250 գրամ քաշով ՔՆԱԹՍ-երի և 250 գրամից մինչև 25 կգ քաշով ՔՆԱԹՍ-երի համար:
[71] Regulation 2019/947, *supra* n. 60, (8)
[72] Regulation 2019/947, *supra* n. 60, (16)
[73] EASA Pro, Open Category - Civil Drones, at: https://www.easa.europa.eu/en/domains/civil-drones/drones-regulatory-framework-background/open-category-civil-drones
[74] *Ibid.*
[75] EASA Pro, Civil drones (unmanned aircraft), at: https://www.easa.europa.eu/en/domains/civil-drones

տարածքում:[76] ՔՆԱԹՍ-երի «հատուկ» տեսակի շահագործման համար, որպես կանոն, անհրաժեշտ է ստանալ թույլտվություն: [77] Նման թույլտվություն ստանալու համար, օպերատորից, *inter alia*, պահանջվում է իրականացնել ՔՆԱԹՍ-ի շահագործման անվտանգության սպառնալիքների գնահատում[78]:

Անվտանգային սպառնալիքները ամենաբարձրն են համարվում «հավաստագրված» շահագործման տեսակի պարագայում: Այս կարգավորումն առավելապես միտված է ապագայի մարտահրավերներին դիմակայելուն և վերաբերում է, օրինակ, անօդաչու թռչող սարքերով ուղևորների փոխադրումներին կամ բեռների ներպետական կամ միջազգային փոխադրումներին և այլն: ՔՆԱԹՍ-ի «հավաստագրված» շահագործման համար պարտադիր են դառնում ՔՆԱԹՍ-ի և դրա օպերատորի հավաստագրման և հեռավար օդաչուի լիցենզիայի ձեռքբերումը, ինչպես նաև կիրառելի են դառնում սովորական ավիացիային վերաբերող բոլոր հիմնական անվտանգային պահանջները:[79]

Ամերիկայի Միացյալ Նահանգներում ՔՆԱԹՍ-երին վերաբերող նվազագույն իրավական կարգավորումները սահմանվում են դաշնային մակարդակով՝ Դաշնային ավիացիոն վարչության (ԴԱՎ) [80] կողմից, իսկ նահանգային և նույնիսկ մունիցիպալ մակարդակներով կարող են սահմանվել ավելի խիստ կարգավորումներ: Ըստ դաշնային կանոնների 250 գրամը գերազանցող ցանկացած ՔՆԱԹՍ ենթակա է պարտադիր գրանցման ԴԱՎ-ում: Գրանցված ՔՆԱԹՍ-երին պետք է տրամադրվեն

---

[76] EASA Pro, Specific Category - Civil Drones, at: https://www.easa.europa.eu/en/domains/civil-drones-rpas/specific-category-civil-drones

[77] Բացառություն են կազմում այն ՔՆԱԹՍ-երը որոնք շահագործվում են 2024 թվականի հունվարի 1-ից պարտադիր դարձող Եվրոպական STS (standard scenario) կանոններին համապատասխան, կամ եթե օպերատորը ստացել է ազգային ավիացիոն կազմակերպության կողմից հատուկ արտոնությունների հավաստագիր:

[78] Regulation 2019/947, *supra* n. 60, (9)-(11)

[79] EASA Pro, Certified Category - Civil Drones, at: https://www.easa.europa.eu/en/domains/civil-drones/drones-regulatory-framework-background/certified-category-civil-drones

[80] Federal Aviation Administration (FDA), Drones: https://www.faa.gov/uas

տարբերակիչ համարներ, որոնք պետք է որևէ եղանակով փակցված լինեն ՔՆԱԹՍ-ի վրա թռիչքների ժամանակ (այս նույնականացման կանոնն ուժի մեջ է մտնելու 2023 թվականի սեպտեմբերի 16-ից): Մինչև 25 կգ ՔՆԱԹՍ-երով չի թույլատրվում թռիչք իրականացնել գիշերային ժամերին, բացառությամբ, եթե ՔՆԱԹՍ-ն ունի հատուկ լուսավորության համակարգ և կիրառվում է մասնագիտական նպատակով: ՔՆԱԹՍ-ով թռիչք կատարելու առավելագույն թույլատրելի բարձրությունը 400 ֆուտ է (մոտ 122 մետր)[81], առավելագույն թույլատրելի արագությունը՝ 100 մղոն/ժամ: ՔՆԱԹՍ-ի օպերատորը թռիչք իրականացնելիս պարտավոր է՝

- խուսափել այլ թռչող սարքերի մոտակայքում, ինչպես նաև մարդկանց կուտակումների հատվածում թռիչքներ իրականացնելուց, չշահագործել ՔՆԱԹՍ-ը այդպիսի թռիչքների համար արգելված տարածքներում,

- միշտ պահպանել ՔՆԱԹՍ-ը տեսադաշտում, շահագործել ՔՆԱԹՍ-ը «զգույշ և խոհեմ» կերպով,

- չշահագործել ՔՆԱԹՍ-ը շարժվող ինքնաթիռից, ինչպես նաև չշահագործել ՔՆԱԹՍ-ը այլ շարժվող մեքենայից[82],

- չշահագործել մեկից ավելի ՔՆԱԹՍ միաժամանակ:[83]

Միևնույն ժամանակ, ԱՄՆ-ում դաշնային մակարդակով բոլոր 25 կգ-ը չգերազանցող ՔՆԱԹՍ-երը իրավական կարգավորվածության տեսանկյունից պայմանականորեն բաժանվում են երկու հիմնական կատեգորիաների[84]՝

---

[81] Ավելի բարձր թռիչքները թույլատրվում են, եթե ՔՆԱԹՍ-ը թռիչքի ընթացքում մնում է համապատասխան կառույցից 400 ֆուտ հեռավորության վրա:

[82] Այս կանոնից բացառություն են կազմում նոսր բնակեցված տարածքների վրա իրականացվող թռիչքները այնպիսի ՔՆԱԹՍ-երով, որոնցով չի տեղափոխվում որևէ իր, կամ որոնք չեն շահագործվում մասնագիտական (շահույթ հետապնդող) նպատակով:

[83] FAA, Small Unmanned Aircraft Systems (UAS) Regulations (“Part 107”), at: https://www.faa.gov/newsroom/small-unmanned-aircraft-systems-uas-regulations-part-107

[84] Առանձին կատեգորիա կարելի է համարել նաև իրավապահ մարմինների կողմից օգտագործվող ՔՆԱԹՍ-երը (տե՛ս FAA, Public Safety and Government, at: https://www.faa.gov/uas/public_safety_gov):

մասնագիտական նպատակով շահագործվող և ռեկրեացիոն (ժամանցային) նպատակով[85] շահագործվող ՔՆԱԹՍ-երի:[86] Այսպես, բացի մինչև 25 կգ-ը բոլոր ՔՆԱԹՍ-երին վերաբերելի ԴԱՎ-ի վերոհիշյալ ընդհանուր կարգավորումներից, ռեկրեացիոն նպատակով ՔՆԱԹՍ-ով թռիչք իրականացնելու համար այն շահագործողը պարտավոր է անցնել ավիացիոն գիտելիքների և անվտանգության օնլայն թեսթավորում և ստանալ դրա վերաբերյալ հաստատումը:[87] Մինչդեռ ոչ ռեկրեացիոն նպատակով շահագործվող ՔՆԱԹՍ-ի օպերատորը պարտավոր է ստանալ հատուկ հեռավար օդաչուի վկայական[88] կամ իրականացնել ՔՆԱԹՍ-ի շահագործումը այդպիսի վկայական ունեցող անձի անմիջական հսկողության ներքո:[89] Միևնույն ժամանակ, ոչ ռեկրեացիոն նպատակով ՔՆԱԹՍ շահագործող օդաչուների համար ԴԱՎ-ի կանոններով սահմանված են որոշակի լրացուցիչ իրավունքներ, ինչպես օրինակ, որոշ պայմանների պահպանմամբ գիշերային ժամերին կամ մարդկանց կուտակումների տարածքների վրա թռիչքներ

---

[85] Այս համատեքստում կարևոր է ճիշտ որակել թռիչքի նպատակը: Այսպես, ռեկրեացիոն են համարվում զուտ զվարճանքի կամ սեփական հաճույքի համար ՔՆԱԹՍ-ի շահագործումը, իսկ ոչ ռեկրեացիոն նպատակով իրականացվող թռիչք է համարվում ցանկացած թռիչք, որն իրականացվում է մասնագիտական նպատակով կամ որից ենթադրվում է որոշակի շահույթի ստացում: Օրինակ, որևէ ծառայություն մատուցելու կամ մասնագիտական նպատակով լուսատեսանկարահանում իրականացնելը կամ նույնիսկ ոչ առևտրային կազմակերպության գործունեությանը նպաստելու համար մասնագիտական թռիչքը ռեկրեացիոն չի համարվի:

[86] FAA, Certificated Remote Pilots including Commercial Operators, at: https://www.faa.gov/uas/commercial_operators

[87] FAA, Recreational Flyers & Community-Based Organizations, at: https://www.faa.gov/uas/recreational_flyers

[88] Վկայականը կարող է տրամադրվել 16 տարին լրացած, անգլերեն իմացող ցանկացած անձին, ով ԴԱՎ համապատասխան կենտրոնում բարեհաջող կանցնի թեսթավորումը: Տե՛ս Pilot Institute, Federal Drone Laws in the United States, at: https://pilotinstitute.com/drones/ ; FAA, Part 107, *supra* n. 83; Advexur, unmanned systems and solutions, “The New FAA Part 107 Regulations - What They Mean For Commercial Drone Operators?”, at: https://advexure.com/blogs/news/new-faa-part-107-drone-regulations-commercial-drone

[89] FAA, Part 107, *supra* n. 83

իրականացնելը:[90] ԱՄՆ դաշնային մակարդակով ՔՆԱԹՍ կարգավորումների համատեքստում կարևոր է ընդգծել նաև, որ 2023 թվականի սեպտեմբերից ԱՄՆ ամբողջ տարածքում 250 գրամը գերազանցող բոլոր ՔՆԱԹՍ-երի նկատմամբ ներդրվելու է պարտադիր հեռավար նույնականացման համակարգ[91], որը ենթադրելու է ՔՆԱԹՍ-ի կարողությունը համապատասխան շահառուներին տրամադրել նույնականացման և թռիչքի վերաբերյալ տեղեկատվություն (թռիչքի վայրը, բարձրությունը, օպերատորի գտնվելու վայրը, նստեցման վայրը և այլն):[92] Այս համակարգի ներդրումն ԱՄՆ-ում պայմանավորված է ՔՆԱԹՍ-երի մասնագիտական նպատակներով ավելի լայն շահագործմանը նպաստող ապահով ենթակառուցվածքներ ստեղծելու անհրաժեշտությամբ: Դաշնային մակարդակով այս նոր ներդրվող համակարգով արդեն ՔՆԱԹՍ-երի թռիչքները կդառնան ավելի վերահսկելի, իսկ նահանգային իրավակարգավորումների տարբերությունները մեծ ազդեցություն չեն ունենա ՔՆԱԹՍ-երի շահագործման համատեքստում անվտանգության ապահովման վրա:

Այսպիսով, ակնհայտորեն, պետությունների կողմից կարգավորվում են իրենց օդային տարածքում ՔՆԱԹՍ-ով իրականցվող թռիչքները և սահմանափակումներ կամ վերահսկողություն են նախատեսում ՔՆԱԹՍ-երի շրջանառության, ներառյալ՝ պետության տարածք ներմուծելու մասով՝ ձգտելով այդպիսով նվազեցնել ՔՆԱԹՍ-երով ընդհանուր առմամբ հանցանքներ իրականացնելու և հատկապես ՔՆԱԹՍ-երով ահաբեկչական հարձակումներ իրականացնելու վտանգները:[93]

---

[90] FAA, Operations Over People General Overview, at: https://www.faa.gov/uas/commercial_operators/operations_over_people

[91] FAA, Recreational Flyers & Community-Based Organizations, at: https://www.faa.gov/uas/recreational_flyers

[92] FAA, Remote Identification for Drone Pilots, at: https://www.faa.gov/uas/getting_started/remote_id

[93] Հատուկ կարգավորման ենթակա են ՔՆԱԹՍ-երի տեխնիկական չափանիշները, ներառյալ՝ դրանց արտադրության և արտադրողներին ներկայացվող պահանջները, շրջանառության և շրջանառությունն իրականացնողների նկատմամբ պահանջները, ՔՆԱԹՍ-երի շահագործման սահմանափակումներն ու

2.4. Իրավիճակի վերլուծությունը ՀՀ-ում

Հաշվի առնելով ՔՆԱԹՍ-երի կիրառման հիմնական սպառնալիքները՝ հատկապես տարածաշրջանային այս լարված իրավիճակում, Ադրբեջանի կողմից իրականացվող ագրեսիայի համատեքստում, տրամաբանական կլիներ, որ ահաբեկչության դեմ պայքարի տեսանկյունից ՔՆԱԹՍ-երի կիրառմամբ պայմանավորված սպառնալիքները նվազեցնելու, ՔՆԱԹՍ-երի ահաբեկչական հարձակումներ իրականացնելու նպատակներով օգտագործմանը հակազդելուն ուղղված միջոցառումները, ներառյալ և հատկապես՝ համապատասխան կարգավորիչ իրավական դաշտի մշակումը, դիտարկվեր Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների համար որպես առաջնահերթություն:

Հատկապես վերջին երկու-երեք տարիների ընթացքում ՔՆԱԹՍ-երի թիվը Հայաստանում զգալիորեն մեծացել է, և ՀՀ օդային տարածքում հաճախ կարելի է տեսնել գործարկվող քաղաքացիական նշանակության անօդաչու թռչող սարքեր: Միևնույն ժամանակ, լուրջ սպառնալիքներ են առաջանում ՔՆԱԹՍ-երի օգտագործման տեսանկյունից՝ հաշվի առնելով ՀՀ սահմանին իրավիճակն ու Ադրբեջանի կողմից ՀՀ ինքնիշխան տարածքի վրա ագրեսիվ հարձակման նախապատրաստման և կազմակերպման համար ՔՆԱԹՍ-երի օգտագործման բարձր հավանականությունը: Այս իրողությունն առաջ է բերում մի շարք հարցեր:

կարգավորումները, վարչական գործընթացները, ներառյալ՝ գրանցումների, թույլտվությունների տրամադրման, լիցենզավորման կառուցակարգերը, ՔՆԱԹՍ-երի շահագործումն իրականացնող անձանց ներկայացվող պահանջները (օրինակ՝ ՔՆԱԹՍ շահագործողների փորձառության պահանջներ կամ տարիքային սահմանափակումներ կամ սահմանափակումներ, օրինակ՝ ըստ քաղաքացիության գործոնի), այլ իրավական կարգավորումները, ներառյալ՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության լրացուցիչ երաշխիքների սահմանումը, քրեական օրենսգրքով համապատասխան հատուկ կարգավորումների սահմանումը:

Իրականացված վերլուծության արդյունքում պարզվում է, որ Հայաստանի Հանրապետությունում ՔՆԱԹՍ-երի կարգավորման իրավական հատվածն ըստ էության դատարկ է, իսկ ՔՆԱԹՍ-երով իրականացվող ահաբեկչական հարձակումներին դիմակայելու և հակազդելու ՀՀ կարողությունների վերաբերյալ տեղեկությունները լավագույն դեպքում հայտնի չեն: Գործող իրավական կարգավորումների համատեքստում ՔՆԱԹՍ-երի շահագործման գործնական և իրավական կարգավորումների հիմնական պատասխանատու մարմինն է ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեն (այսուհետ՝ նաև Կոմիտե): Դեռևս 2018 թվականի օգոստոսին Կոմիտեն հայտարարություն էր տարածել, որի համաձայն՝ անօդաչու թռչող սարքերի հստակ շահագործման վերաբերյալ կանոնակարգը գտնվում էր մշակման փուլում եվրոպական միջազգային ավիացիոն կազմակերպությունների կողմից[94] և տրամաբանորեն մշակվելուց հետո, եվրոպական կարգերի պահանջներին համապատասխան, պետք է իմպլեմենտացվեր նաև ՀՀ-ում: 2022 թվականի նոյեմբերին, Կոմիտեն հանդես եկավ նոր հայտարարությամբ՝ իր ֆեյսբուքյան էջում, որում հիշեցրեց ՔՆԱԹՍ-երի օպերատորներին, որ անօդաչու թռչող համակարգերի՝ ՀՀ օդային տարածքում շահագործումը կարգավորվում է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2007 թվականի ապրիլի 11-ին ընդունված թիվ 56-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ուսումնական և հատուկ բնույթի թռիչքների իրականացման կարգի» 18-21-րդ կետերով սահմանված պահանջների համաձայն:[95] «Լույս» հիմնադրամի կողմից իրականացված հարցմանն ի պատասխան՝ տեղեկանում ենք, որ 2018 թվականից 5 տարի անց անօդաչու թռչող սարքերի

---

[94] Տե՛ս «Դրոնների շահագործման նոր կանոնակարգ կմշակվի», 168.am (11.10.2018), ինչպես նաև Կոմիտեի ֆեյսբուքյան էջը՝ https://www.facebook.com/118681645240747/photos/a.155241954918049/521004881675086/?type=3

[95] Տե՛ս https://shorturl.at/anoyH

կանոնակարգերը դեռ մշակված չեն և գտնվում են մշակման փուլում: Այսպիսով, վերլուծելով ՔՆԱԹՍ-երի կարգավորմանը վերաբերող ՀՀ իրավական դաշտը կարելի է մտահոգությամբ փաստել, որ Հայաստանի Հանրապետությունում առ այսօր.

- բացակայում է ՔՆԱԹՍ-երի պետական գրանցման, լիցենզավորման կամ այլ եղանակով ՔՆԱԹՍ-երի շահագործման թույլատվության որևէ համակարգ,
- բացակայում է ՔՆԱԹՍ-ի օպերատորի (շահագործողի) հավաստագրման կամ լիցենզավորման որևէ համակարգ,
- առկա չէ ՀՀ-ում շահագործվող ՔՆԱԹՍ-երի և ՔՆԱԹՍ-երի սեփականատերերի կամ շահագործողների որևէ ռեեստր, ինչը նշանակում է, որ պետությունը ամբողջությամբ զրկված է ՀՀ տարածքում առկա ՔՆԱԹՍ-երի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հնարավորությունից և նույնիսկ չի տիրապետում ՀՀ տարածքում ՔՆԱԹՍ-երի վերաբերյալ որևէ վիճակագրությանը,
- բացակայում են ՔՆԱԹՍ-եր արտադրող կազմակերպությունների հաշվառման կամ լիցենզավորման որևէ ընթացակարգեր, ՔՆԱԹՍ-երի արտադրություն իրականացնելու որևէ հատուկ ընթացակարգ,
- առկա չէ ՔՆԱԹՍ-եր արտադրող կազմակերպությունների ռեեստր, և, հետևաբար, պետությունը չի տիրապետում այն տեղեկատվությանը, թե որ կազմակերպություններն են ներկայումս իրականացնում ՔՆԱԹՍ-երի արտադրություն և զրկված է այդպիսի արտադրության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու հնարավորությունից,
- առկա չէ ՔՆԱԹՍ-երի շրջանառության նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնելու որևէ գործիքակազմ,
- իրավական և կազմակերպական հարթության մեջ հստակեցված չէ, թե որ պետական մարմիններն են ներգրավված ՔՆԱԹՍ-երի արտադրության, շրջանառության և օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու մեջ, հստակեցված չեն պետական կառավարման մարմինների գործառույթներն այս

մասով, ինչպես նաև բացակայում են տվյալ հարցով միջգերատեսչական համագործակցության տեսլականն ու կառուցակարգերը[96],

➢ ՔՆԱԹՍ-երն ըստ էության դուրս են ՀՀ ներքին գործերի նախարարության (ՆԳՆ) և ՀՀ ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ) վերահսկողությունից, հաշվի առնելով, որ ՆԳՆ-ն ՔՆԱԹՍ-երի օգտագործման և շրջանառության նկատմամբ մշտադիտարկման կամ վերահսկողության գործառույթներ չունի, իսկ ԱԱԾ-ն կարող է իրականացնել վերահսկողական գործառույթ անօդաչու թռչող սարքերի ներմուծման նկատմամբ միայն այն դեպքում, եթե ներմուծվող սարքերը կամ դրանց բաղկացուցիչ մասերը պարունակում են ծածկագրային (կրիպտոգրաֆիկական) կամ տեղեկատվության գաղտնի ստացման համար նախատեսված միջոցներ՝ ՀՀ ԱԱԾ տնօրենի 2015 թվականի մարտի 11-ի թիվ 2-Ն և 2015 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 8-Ն հրամանների համաձայն:[97]

---

[96] Մասնավորապես, ի պատասխան «Լույս» հիմնադրամի հարցմանը՝ այս խնդրի շուրջ Կոմիտեից ստացված պատասխանից տեղեկանում ենք, որ անօդաչու թռչող սարքերի վերահսկողությունը և կանոնակարգումը իրականացնելու գործընթացում ներգրավված գերատեսչություններն ու նրանց գործառույթները կհստակեցվեն, երբ մշակվեն համապատասխան կանոնակարգերը:

[97] Ի պատասխան «Լույս» հիմնադրամի հարցմանը՝ ՆԳՆ-ից տեղեկանում ենք, որ ՔՆԱԹՍ-երի արտադրության, շրջանառության, օգտագործման, ինչպես նաև ՀՀ ներմուծման նկատմամբ մշտադիտարկում կամ վերահսկողություն ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից չի իրականացվում: Միևնույն ժամանակ, ՆԳՆ-ն տեղեկացնում է, որ գործառույթների մասով որպես ՔՆԱԹՍ-երի կիրառման նկատմամբ վերաբերելի պետական վերահսկողական գործառույթ կարող է դիտարկվել «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 22[1] հոդվածի 1-ին մասի զ) կետը: Հարկ է նշել, որ այս դրույթի համաձայն. «Սահմանային շերտ մուտք գործած անձանց արգելվում է՝ ... առանց համապատասխան թույլտվության օգտագործել անօդաչու թռչող սարքեր, տեսալուսանկարահանել սահմանակից պետության տարածքը, սահմանային շերտում տեղակայված ինժեներական կառույցները և արգելափակոցները, սահմանապահ զորքերի կողմից օգտագործվող շենքերը, շինությունները, դիտաշտարակները, տրանսպորտային միջոցները, ...»: Նույն հոդվածի վերջին պարբերության համաձայն՝ նշյալ պահանջը խախտող անձանց. «սահմանապահ վերակարգերը բերման են ենթարկում սահմանապահ ուղեկալ, կազմվում է սահմանային ռեժիմը խախտելու մասին ակտ, վերցվում են անցագրերը, առգրավվում են զենքը և արգելված այլ միջոցները, իսկ սահմանային ռեժիմը խախտողները հանձնվում են ոստիկանության մարմիններին:»: ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 200-րդ հոդվածի համաձայն. «Սահմանային շերտ մուտք գործելու կամ այնտեղ գտնվելու, ինչպես նաև բնակվելու կանոնները խախտելը՝ առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով»:

➢ ՔՆԱԹՍ-երի միջոցով ահաբեկչության հակազդման համատեքստում օրենսդրորեն սահմանված միակ պետական գործառույթը հակաօդային պաշտպանության զորքերի սահմանային շերտի օդային տարածությունում պետական սահմանի պաշտպանության գործառույթն է[98]:

«Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 221 հոդվածի վերլուծության համատեքստում հատկանշական է, որ համապատասխան թույլտվություն ստանալու կարգն առերևույթ բացակայում է: «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 22[1] հոդվածով սահմանված ճիշտ նույն դրույթի վրա է հղում կատարել նաև ԱԱԾ-ն՝ ընդգծելով, որ օդային տարածությունում սահմանի պահպանության լիազորություններով օժտված են հակաօդային պաշտպանության զորքերը:
ԱԱԾ-ի նշած՝ ՀՀ ԱԱԾ տնօրենի 2015 թվականի մարտի 11-ի թիվ 2-Ն և 2015 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 8-Ն հրամաններով կարգավորվող գործառույթը վերաբերում է ոչ թե կոնկրետ անօդաչու թռչող սարքերին, այլ դրանցով կարգավորվում են համապատասխանաբար՝ ՀՀ կողմից երրորդ երկրների հետ առևտրի դեպքում տեղեկատվության գաղտնի ստացման համար նախատեսված հատուկ տեխնիկական միջոցների ՀՀ մաքսային տարածք ներմուծման և ՀՀ մաքսային տարածքից արտահանման ... կանոնակարգը և ՀՀ մաքսային տարածք ներմուծումը և մաքսային տարածքից արտահանումը սահմանափակված՝ տեղեկատվության գաղտնի ստացման համար նախատեսված հատուկ տեխնիկական միջոցների ... ցանկերը, և ՀՀ կողմից երրորդ երկրների հետ առևտրի դեպքում ծածկագրային միջոցների ՀՀ մաքսային տարածք ներմուծման և ՀՀ մաքսային տարածքից արտահանման, ծածկագրային միջոցների և իրենց կազմում ծածկագրային միջոցներ պարունակող ապրանքների բնութագրերի ծանուցման կանոնակարգերը և ծանուցման ենթակա տեխնիկական և կրիպտոգրաֆիկական բնութագրերով ծածկագրային միջոցներ հանդիսացող կամ իրենց կազմում ծածկագրային (կրիպտոգրաֆիկական) միջոցներ պարունակող ապրանքների (արտադրանքի) տեսակների ու ՀՀ մաքսային տարածք ներմուծումը և մաքսային տարածքից արտահանումը սահմանափակված ծածկագրային միջոցների ցանկերն ու ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից տրվող եզրակացության (թույլատրման փաստաթղթի) միասնական ձևի լրացման մեթոդական ցուցումները:
[98] Հակաօդային պաշտպանության զորքերն իրավասու են՝ թռչող սարքին առաջարկել պատասխանելու հարցման ազդանշաններին, հարցում կատարել Հայաստանի Հանրապետության օդային տարածք մտնելու նպատակների մասին, առաջարկել փոխելու թռիչքի ուղղությունը դեպի թռիչքների համար առանձնացված օդային միջանցքներ, առաջարկել վայրէջք կատարելու միջազգային օդանավակայաններում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մոտակա օդանավակայանում կամ համապատասխան այլ տարածքում, Հայաստանի Հանրապետության անվտանգությանն սպառնալու դեպքում կամ Հայաստանի Հանրապետության նկատմամբ թշնամական որևէ գործողություն կատարելիս ուղեկցել և ստիպել վայրէջք կատարել օդանավակայաններում կամ համապատասխան այլ տարածքում, իսկ թռչող սարքի կողմից համապատասխան գործողությունները շարունակվելու դեպքում հակաօդային պաշտպանության զորքերի ստորաբաժանումները իրավասու են ոչնչացնել այդ թռչող սարքը՝ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 24-ի 1794-Ն որոշմամբ սահմանված կարգով: Նշված որոշման համաձայն՝ հեռակառավարվող անօդաչու համակարգերի կողմից սահմանված կանոնների խախտման դեպքում պետք է ձեռնարկվեն միջոցներ հեռակառավարման կետի տեղորոշման, դրա հետ կապի դուրս գալու և սահմանված կանոնների խախտումը վերացնելու ցուցումներ տալու ուղղությամբ: Նույն որոշման 8-րդ կետի համաձայն՝ նախազգուշացում

➢ Առկա չեն ՔՆԱԹՍ-երի և մասնավորապես դրանց կիրառմամբ ահաբեկչական գործողություններին հակազդման մասով ռազմավարական որևէ փաստաթղթեր, ինչպես նաև բացակայում են բավարար իրավական կարգավորումները՝ ապահովելու բնակչության անվտանգությունն ու պաշտպանությունը ՔՆԱԹՍ-երի ապօրինի օգտագործման և մասնավորապես՝ դրանցով ահաբեկչական հարձակումներ իրականացնելու վտանգից: ՀՀ-ում գործող միակ վերաբերելի կարգավորումը ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության դեռևս 2007 թվականի ապրիլին ընդունած 56-Ն հրամանն է: *Հրամանի համաձայն՝ մինչև 50 կգ ՔՆԱԹՍ-երի շահագործումը ՀՀ-ում ըստ էության չի կարգավորվում:* Մասնավորապես, վերոհիշյալ հրամանի համաձայն գործող սահմանափակումներն են.

իրականացնելուց հետո խախտողի խոցման միջոցով հակաօդային պաշտպանության միջոցներ (զենք և (կամ) մարտական տեխնիկա) կիրառվում է, եթե՝ ... ահաբեկչական գործողությունների իրականացման համար օդանավ-խախտողի հնարավոր օգտագործման, կամ օդանավի առևանգման և մարդկանց զոհվելու իրական վտանգի ու էկոլոգիական աղետի առաջացման մասին հավաստի տեղեկատվության առկայության պարագայում սպառվել են ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ սահմանված կանոնների խախտումը դադարեցնելու կամ հարկադիր վայրէջքի համար անհրաժեշտ բոլոր հնարավոր միջոցները: Ահաբեկչական գործողությունների սպառնալիքների չեզոքացման կամ կանխման համար միջոցները ձեռնարկվում են «Ահաբեկչության դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ահաբեկչական վտանգի աստիճանին համաչափ ձեռնարկվող միջոցների սկզբունքի հիման վրա: Այստեղ հարկ է ընդգծել, որ վերոհիշյալ կարգավորումները, հատկապես այն մասով, որ նշված որոշման համաձայն «հեռակառավարվող անօդաչու համակարգերի կողմից սահմանված կանոնների խախտման դեպքում պետք է ձեռնարկվեն միջոցներ հեռակառավարման կետի տեղորոշման, դրա հետ կապի դուրս գալու և սահմանված կանոնների խախտումը վերացնելու ցուցումներ տալու ուղղությամբ» առերևույթ համաչափ չեն կարող դիտվել ահաբեկչության դեմ պայքարի համատեքստում: Նման եզրահանգումը պայմանավորված է այն հանգամանքով, որ մի կողմից՝ հակաահաբեկչական գործողություններում առանցքային է օպերատիվությունը, իսկ մինչև հակաօդային պաշտպանության զորքերը փորձեն պարզել և հասկանալ, թե ինչ դրոն է, բաց կթողնվի հավանական ահաբեկչական գործողությանը հակազդման հնարավորությունը, մյուս կողմից՝ հեռակառավարվող թռչող սարքի չեզոքացումը հնարավոր է իրականացնել առանց անձանց կյանքին կամ առողջությանը վտանգի սպառնալիքի, և հետևաբար՝ համաչափության սկզբունքի տեսանկյունից առավել տրամաբանական է թվում ահաբեկչական գործողության վերաբերյալ կասկածի պարագայում, այն էլ սահմանային շերտում, միանգամից ձեռնարկել ՔՆԱԹՍ-ի չեզոքացմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումները:

1) թռիչքները աերոդրոմների տեղորոշիչ կետից մինչև 5 կմ շառավղով շրջանում կարող են իրականացվել համապատասխան թույլտվության հիման վրա,

2) մինչև 4 կգ քաշ ունեցող ՔՆԱԹՍ-երով մինչև 120 մետր բարձրությամբ թռիչքները, ինչպես նաև 4 կգ-ից մինչև 50 կգ քաշ ունեցող ՔՆԱԹՍ-երով մինչև 50 մետր բարձրության վրա իրականացվող թռիչքները[99] կարող են իրականացվել առանց որևէ թույլտվության,

3) որևէ պահանջ կամ սահմանափակում նախատեսված չէ ՔՆԱԹՍ-ի օպերատորի մասնագիտական պատրաստվածության մասով[100],

4) թույլտվություն է պահանջվում միայն հատուկ բնույթի թռիչք իրականացնելու համար, ինչպիսիք են գյուղատնտեսության և շինարարության կարիքների համար թռիչքները, դիտարկումների, այդ թվում՝ լուսանկարչական աշխատանքների, քարտեզագրության, չափագրման համար թռիչքները, օդանավավարության բարդ (աերոբատիկ) թռիչքները, գովազդի նպատակներով թռիչքները, սպորտային և սիրողական նպատակներով թռիչքները[101],[102]

---

[99] 4 կգ-ից մինչև 50 կգ քաշ ունեցող ՔՆԱԹՍ-երով թռիչք իրականացնելու պարագայում հեռակառավարվող անօդաչու համակարգի հարաբերական բարձրությունը և թռիչքի գործընթացում չներգրավված անձանց միջև ընկած հեռավորությունը պետք է լինի համաչափ, սակայն ոչ պակաս, քան 50 մետրը:

[100] Սահմանված միակ պահանջը օպերատորի կողմից թռիչքի կատարման ընթացքում լուսանդրադարձիչ բաճկոն կրելու պարտավորությունն է:

[101] Հատուկ բնույթի թռիչք է համարվում նաև կառավարության 2016 թվականի մարտի 3-ի թիվ 188-Ն որոշմամբ հաստատված թույլտվություն չպահանջող օդային հաղորդակցությունների որոշ տեսակների ցանկով սահմանված թռիչքները: Այս որոշման համաձայն՝ հաստատված թույլտվություն չպահանջող թռիչքներն են փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական, որոնողափրկարարական և հրդեհաշիջման աշխատանքների իրականացման նպատակներով թռիչքները, բնակչության տարահանման նպատակով թռիչքները, ոստիկանության գործառույթներով պայմանավորված թռիչքները, շտապ և անհետաձգելի բժշկական օգնության համար պացիենտի կամ բուժաշխատողների տեղափոխման նպատակով թռիչքները և պետական մարմիններում կամ պետական կառավարչական հիմնարկներում շահագործվող օդանավերով, կենսաբանական, քիմիական, ճառագայթային գործոնով պայմանավորված՝ արտակարգ իրավիճակների ժամանակ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումներ իրականացնելու համար անձանց տեղափոխման նպատակով թռիչքները:

[102] Ի պատասխան «Լույս» հիմնադրամի հարցմանը՝ Կոմիտեից տեղեկանում ենք, որ Կոմիտեն ՔՆԱԹՍ-երով իրականացված թռիչքների համապատասխան բազա վարում է 2020 թվականի հունվարի 1-ից սկսած: 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի մարտի 31-ն ընկած

➢ բացակայում է և հասանելի չէ տեղեկատվությունն այն մասին, թե ՔՆԱԹՍ-երի կիրառման համատեքստում արդյո՞ք հակաահաբեկչական գործողությունների համար գործարկվում են համապատասխան համակարգեր կամ ենթակառուցվածքներ, ինչպես նաև տեղեկատվությունն այն մասին, թե արդյո՞ք համապատասխան գերատեսչությունների կողմից գործարկվում են առավել խոցելի օբյեկտների նկատմամբ, ներառյալ՝ կարևոր ենթակառուցվածքները և հանրային կուտակման վայրերը, ՔՆԱԹՍ-երի միջոցով ահաբեկչական գործողություններին հակազդելու արդյունավետ համակարգեր և միջոցառումներ[103],

---

ժամանակահատվածը Կոմիտեում ստացվել է ՔՆԱԹՍ-ով հատուկ բնույթի թռիչքների իրականացման 10 հայտ (բոլորն իրավաբանական անձանցից), որոնցից 9-ը թույլատրվել է, իսկ մեկը մերժվել է ապահովագրական վկայականի բացակայության հիմքով:
Ստացված պատասխանով տրամադրված տվյալների, Կոմիտեի 2022 թվականի նոյեմբերի հայտարարության և առկա պրակտիկայի վերլուծությունից կարելի է եզրահանգել, որ հրամանի «սիրողական նպատակներով թռիչքներ» եզրույթը մեկնաբանվում է նեղ իմաստով և կիրառելի չէ ՔՆԱԹՍ-երի նկատմամբ:

[103] Ի պատասխան «Լույս» հիմնադրամի հարցմանը՝ ԱԱԾ-ն «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և կառավարության 1998 թվականի մարտի 13-ի թիվ 173 որոշմամբ հաստատված ցանկի 32-րդ կետի համաձայն չի տրամադրել համապատասխան տեղեկատվությունն այն հիմնավորմամբ, որ հայցվող տեղեկատվությունը պարունակում է պետական գաղտնիք, և դրանցով բացահայտվում են հետախուզական, հակահետախուզական կամ օպերատիվ-հետախուզական գործունեության ուժերը, միջոցները, մեթոդները և ծրագրերը: Այս կապակցությամբ նախ հարկ է ընդգծել, որ վերոհիշյալ որոշման 32-րդ կետը վերաբերում է նախագահական, կառավարական կամ այլ ձևի հատուկ կապի և տեղեկատվության, պետական ծածկագրերի, դրանց վերլուծման մեթոդների կամ միջոցների, ծածկագրման միջոցների, գաղտնագրման համակարգերին վերաբերող տեղեկությունների գաղտնիությանը, ինչպիսին հարցմամբ հայցվող տեղեկատվությունը չի հանդիսանում: Հավանաբար ԱԱԾ-ն ի նկատի ուներ վերոնշյալ որոշման 33-րդ կետը, որով գաղտնի տեղեկությունների ցանկին է դասվում «հետախուզական, հակահետախուզական կամ օպերատիվ հետախուզական գործունեության ուժերը, միջոցները, մեթոդները, ծրագրերը, վիճակը կամ արդյունքները բացահայտող տեղեկությունները, ինչպես նաև այդ գործունեությունները ֆինանսավորելու մասին տվյալները, եթե դրանք բացահայտում են թվարկված տեղեկությունները:»:
Այս առումով, սակայն, հարկ է ընդգծել, որ հարցումը բաղկացած էր երկու բաղադրիչից՝ 1) ՔՆԱԹՍ-երի կիրառման համատեքստում հակաահաբեկչական գործողությունների համար համապատասխան համակարգերի կամ ենթակառուցվածքների, ինչպես նաև առավել խոցելի օբյեկտների ՔՆԱԹՍ-երի միջոցով ահաբեկչական գործողություններին հակազդելու արդյունավետ համակարգերի և միջոցառումների առկայության և գործարկման փաստի վերաբերյալ տեղեկատվություն, 2) նման համակարգերի, ենթակառուցվածքների կամ միջոցառումների առկայության պարագայում, դրանց վերաբերյալ ընդհանրական տեղեկություններ: Ակնհայտ է, որ առնվազն նման համակարգերի, ենթակառուցվածքների և միջոցառումների առկայության մասին տեղեկատվությունը որևէ կերպ չի

➢ բացակայում են ՔՆԱԹՍ-երի՝ ՀՀ տարածք անցկացնելու նկատմամբ պետական (մաքսային) վերահսկողության արդյունավետ կառուցակարգերը (ինչպես,

---

կարող դիտարկվել որպես հետախուզական, հակահետախուզական կամ օպերատիվ հետախուզական գործունեության ուժերը, միջոցները, մեթոդները, ծրագրերը, վիճակը կամ արդյունքները բացահայտող տեղեկություն: Ինչ վերաբերում է հայցվող տեղեկատվության երկրորդ բաղադրիչին, ապա ընդհանրական տեղեկատվությունն այդպիսի համակարգերի, ենթակառուցվածքների և միջոցառումների մասին (օրինակ՝ ՔՆԱԹՍ-երի հեռավար նույնականացման և դրա հիման վրա թռիչքները ուղիղ ռեժիմում հետևելու հնարավորություն ընձեռող համակարգ, համապատասխան իրավիճակների դեպքում ՔՆԱԹՍ-երի հայտնաբերման կամ չեզոքացման համակարգեր, ՔՆԱԹՍ-երով ահաբեկչական գործողությունների իրականացման համատեքստում խոցելի ենթակառուցվածքների պաշտպանությանն ուղղված ռազմավարական փաստաթղթերի մշակում, զորավարժությունների իրականացում և այլն) ուսումնասիրված այլ պետությունների կողմից չի դիտարկվում և տրամաբանորեն չի կարող դիտարկվել որպես պետական գաղտնիք: Այսպես, օրինակ, հրապարակային տեղեկատվություն է, որ ՆԱՏՕ-ի Հաղորդակցության և տեղեկատվության գործակալությունը 2022 թվականին Նիդեռլանդներում իրականացրել է անօդաչու թռչող սարքերի հակազդման համակարգերի տեխնիկական փոխգործակցության զորավարժություններ՝ ուղղված ՆԱՏՕ-ի անդամ երկրների օդային տարածքում ՔՆԱԹՍ-երի կիրառման արդյունքում առաջացող ահաբեկչական գործողությունների իրականացման սպառնալիքներիի նվազեցմանը, որոնց ընթացքում փորձարկվել են ՔՆԱԹՍ-երով իրականացվող ահաբեկչական գործողություններին հակազդելու տարբեր համակարգեր (տե՛ս NCI Agency holds NATO's live-testing counter-drone exercise, 28 September 2022, https://www.ncia.nato.int/about-us/newsroom/nci-agency-holds-natos-livetesting-counterdrone-exercise.html): ՔՆԱԹՍ-երին հակազդելու տեխնիկական համակարգի գործարկման մասին տեղեկատվություն է տարածվել նաև, օրինակ, 2018թ. դեկտեմբերի 19-ին Միացյալ Թագավորությունում (ՄԹ) Գեթուիքի օդանավակայանի տարածքում երկու դրոններին հակազդելու գործողությունների ժամանակ (տե՛ս The Guardian, The mystery of the Gatwick drone by Samira Shackle, at: https://www.theguardian.com/uk-news/2020/dec/01/the-mystery-of-the-gatwick-drone, իսկ ՄԹ-ում համապատասխան հակազդման համակարգերի գործարկման վերաբերյալ առավել համապարփակ տեղեկատվություն հրապարակված է նաև՝ ADS Policy Paper Counter-drone technologies, at: https://www.adsgroup.org.uk/wp-content/uploads/sites/21/2019/10/ADS-policy-paper-on-counter-drone-use-cases-October-2019.pdf): ԱՄՆ-ում դրոններին ռազմական կամ հակաահաբեկչական համատեքստում հակազդման համար կիրառվող որոշ տեխնոլոգիաների մասին տե՛ս The Defense Post, US Air Force Shoots Down Drone Swarm With THOR Microwave Weapon by Joe Saballa, at: https://www.thedefensepost.com/2023/05/18/us-drone-swarm-thor/: ՌԴ-ում դրոններին հակաօդային և ռադիոէլեկտրոնային հակազդման միջոցների առկայության և կիրառման մասին պաշտոնական տեղեկատվություն տարածվեց, օրինակ, 2023թ. մայիսի 30-ին Մոսկվայի և մերձմոսկովյան որոշ շրջանների և հուլիսի 4-ին Մոսկվայի շրջանի և Նոր Մոսկվայի վրա ԱԹՍ-ների հարձակման ժամանակ (տե՛ս Русская служба Би-би-си, Павел Аксенов, Атака дронов на Москву: что это были за беспилотники, как смогли преодолеть ПВО - и другие главные вопросы (30.05.2023), на: https://www.bbc.com/russian/features-65756412; БПЛА сбили над Москвой и областью. Что известно о новом акте украинского терроризма, (04.06.2023), на: https://360tv.ru/tekst/proisshestviya/chto-izvestno-o-novom-akte-ukrainskogo-terrorizma/) և այլն:

օրինակ, պարտադիր հայտարարագրումը, թույլտվության ստացումը կամ ըստ քաղաքացիության սահմանափակումների կիրառումը):

Մինչդեռ անվիճելի է, որ ՔՆԱԹՍ-երի արտադրության, շրջանառության և օգտագործման, ինչպես նաև ՀՀ տարածք ներմուծման նկատմամբ մշտադիտարկում և վերահսկողություն իրականացնելու արդյունավետ կառուցակարգերը և գործիքակազմն անհրաժեշտ են և պետք է դիտարկվեն որպես առաջնահերթություն՝ նպատակ ունենալով նվազեցնել ՔՆԱԹՍ-երի օգտագործմամբ ապօրինի գործողությունների, մասնավորապես՝ դրանցով ահաբեկչական ակտերի իրականացման սպառնալիքները և ուժեղացնել դրանց արդյունավետ հակազդման հնարավորությունները: Առանց համապատասխան վերահսկողության և հատուկ գործնական միջոցառումների դժվար կլինի կանխել ՔՆԱԹՍ-երով իրականացվող հանցանքները, ներառյալ և հատկապես՝ ահաբեկչական հարձակումները ՀՀ ինքնիշխան տարածքում, այդ տարածքի նկատմամբ ոտնձգությունները, և հակազդել դրանց:

3. ՔՆԱԹՍ-Ի ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ՝ ԱՆՁԻ ԿՅԱՆՔԻՆ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ԿԱՄ ԳՈՒՅՔԻՆ ՉԿԱՆԽԱՄՏԱԾՎԱԾ ՎՆԱՍ ՀԱՍՑՆԵԼՈՒ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀՀ-ՈՒՄ

Չնայած ՔՆԱԹՍ-երի տեխնիկական չափորոշիչների սրընթաց զարգացումներին, բարձր է համարվում ՔՆԱԹՍ-երի շահագործման արդյունքում երրորդ անձանց առողջությանը, կյանքին կամ գույքին չկանխամտածված վնաս հասցնելու հավանականությունը, որը կարող է պայմանավորված լինել տարբեր գործոններով՝ սկսած թռիչքի ընթացքում ծագած տեխնիկական խափանումներից մինչև մարդակային գործոնը (օրինակ, եթե ՔՆԱԹՍ-ը շահագործողը որևէ պատճառով կորցնում է կառավարումը):

Այսպես, օրինակ, լայն լուսաբանում ստացավ 2014 թվականին տեղի ունեցած պատահարը, երբ եռամարտիկ Ռայջա Օգդենը արևմտյան Ավստրալիայում մրցումների ժամանակ վնասվածքներ ստացավ եռամարտի մրցակիցներին նկարահանելու համար օգտագործվող ՔՆԱԹՍ-ի օպերատորի կողմից դրա կառավարումը կորցնելու և ՔՆԱԹՍ-ի չկանխատեսված անկման արդյունքում:[104] Նմանօրինակ դեպք է արձանագրվել նաև 2015 թվականին ԱՄՆ-ի Սիեթլ քաղաքում, երբ շքերթի ժամանակ շուրջ 46 սանտիմետրանոց փոքրիկ ՔՆԱԹՍ-ը բախվել է մի շենքի և ընկել ամբոխի մեջ՝ հարվածելով և վնաս պատճառելով մի քսանհինգամյա կնոջ:[105] 2015 թվականի հունիսին միջադեպ տեղի ունեցավ երգիչ Էնրիկե Իգլեսիասի

---

[104] "Australian triathlete injured after drone crash", BBC (7 April 2014) at: https://www.bbc.com/news/technology-26921504

[105] Steve Miletich, The Seattle Times, "Man convicted in drone crash that injured woman during Seattle's Pride Parade" (Jan 13, 2017) at: https://www.seattletimes.com/seattle-news/law-justice/man-convicted-in-drone-crash-that-injured-woman-during-seattles-pride-parade/

հետ Մեքսիկայում, երբ համերգի ժամանակ երգչի գլխի ուղղությամբ շարժվող նկարահանող դրոնը ձեռքով կանգնեցնելու արդյունքում ծանր վնասվածքներ պատճառվեցին վերջինիս ձեռքերի մատներին:[106] 2019 թվականի սեպտեմբերին Ղրղզստանում նկարահանող ՔՆԱԹՍ-ի կիրառման արդյունքում տեղի ունեցավ միջադեպ, երբ տեղական ռադիոյի հաղորդավարներից մեկի կողմից հանրային հետաքրքրություն ներկայացնող մի ընտանիքի պատկանող առանձնատան տարածքում ՔՆԱԹՍ-ով նկարահանում իրականացնելու փորձի ժամանակ սարքավորումն ընկել էր այգեպանի գլխին և վերջինս ստացել էր մարմնական վնասվածքներ:[107] Հայտնի են նաև ՔՆԱԹՍ-երով վնաս պատճառելու մի շարք այլ դեպքեր:[108] Միևնույն ժամանակ, հավանական է, որ ՔՆԱԹՍ-երով անձի կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս հասցնելու բազմաթիվ դեպքեր էլ պարզապես չեն լուսաբանվում:

Այսպիսով, ՔՆԱԹՍ-երով պատճառվող վնասների գործերը կարելի է դիտարկել որպես իրավական ոլորտի նոր միտում և ՔՆԱԹՍ-երի շահագործմամբ պայմանավորված ռիսկ: Ընդ որում, ՔՆԱԹՍ-ի կիրառման արդյունքում պատճառված վնասի համար պատասխանատվության հարցերը առայժմ խորապես ուսումնասիրված չեն և ներկայացնում են հատուկ հետաքրքրություն, քանի որ կախված իրավիճակից՝ ծագում է ոչ միայն ՔՆԱԹՍ-ը շահագործողի պատասխանատվության, այլև որոշ դեպքերում նաև ՔՆԱԹՍ-ը արտադրողի կամ

---

[106] Տե՛ս GTAKG website, “Drone Accidents and Personal Injuries”, at: https://www.gtakg.com/drone-accidents-personal-injuries/

[107] Տե՛ս «Власти Киргизии отказались контролировать полеты дронов» (08.10.2019), на: https://fergana.agency/news/111490/

[108] Տե՛ս, օրինակ՝ Wisner, Baum website, “Drone Accident Lawyers Representing Victims of Drone Crashes in California and Nationwide”, at: https://www.wisnerbaum.com/aviation-accident/drone-crashes/; GTAKG website, *supra* n. 106, at: https://www.gtakg.com/drone-accidents-personal-injuries/; BFV Blog, “Personal Injury and Property Damage with Drones”, at: https://www.bfvlaw.com/personal-injury-and-property-damage-with-drones/

ծրագրային ապահովումն իրականացրած անձի պատասխանատվության հարցը (երբ, օրինակ, ՔՆԱԹՍ-ը շահագործվել է տվյալ իրավական համակարգում սահմանված բոլոր կանոններին համապատասխան, սակայն շահագործողից չկախված՝ արտադրական թերության կամ ծրագրային սխալի պատճառով դուրս է եկել վերջինիս վերահսկողությունից, որի արդյունքում վնաս է պատճառվել երրորդ անձի առողջությանը, կյանքին կամ գույքին):[109]

ՔՆԱԹՍ-ի կիրառման արդյունքում երրորդ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս պատճառելու պարագայում պատասխանատվության հարցերի իրավական կարգավորման առավել արդյունավետ կառուցակարգերը ներառում են պարտադիր ապահովագրության սահմանումը, ՔՆԱԹՍ-երի թռիչքների նկատմամբ պետական վերահսկողության հնարավորությունը, ինչպես նաև այսպես կոչված սև արկղի պարտադիր տեղադրումը ՔՆԱԹՍ-ում:

Այս առումով առավել զարգացած իրավական կարգավորումներ են գործում ԵՄ տարածքում: Մասնավորապես, ԵՄ օդային տարածքում շահագործվող լիցենզավորման ենթակա (20 կգ քաշը գերազանցող) ՔՆԱԹՍ-երի նկատմամբ[110], ինչպես նաև կոմերցիոն նպատակով շահագործվող ՔՆԱԹՍ-երի նկատմամբ կիրառելի են պարտադիր ապահովագրության պահանջները:[111] ՔՆԱԹՍ-երով պատճառված վնասի փոխհատուցումն ապահովելու նպատակով Եվրոպական խորհրդարանը 2017 թվականի փետրվարի 16-ին ընդունված բանաձևով

---

[109] ՔՆԱԹՍ-ի շահագործման արդյունքում հասցված վնասի համար պատասխանատվության հարցը և ՔՆԱԹՍ-ով պատճառվող վնասների ապահովագրման հարցն առավել արդիական կդառնան բարձր ինքնավարությամբ ՔՆԱԹՍ-երի կիրառմամբ:

[110] REGULATION (EC) No 785/2004 OF THE EUROPEAN PARLIAMENT AND OF THE COUNCIL of 21 April 2004 on insurance requirements for air carriers and aircraft operators, at: https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32004R0785

[111] María de Miguel Molina Virginia Santamarina Campos Ed., “Ethics and Civil Drones European Policies and Proposals for the Industry” (2018) p.39, at: https://link.springer.com/content/pdf/10.1007/978-3-319-71087-7.pdf?pdf=button

ներկայացրել է առաջարկություններ ավտոմեքենաների օրինակով նաև բոլոր ՔՆԱԹՍ-երի մասով պարտադիր ապահովագրության մեխանիզմի սահմանման վերաբերյալ:[112] Միևնույն ժամանակ, ԵՄ պետությունների մեծամասնությունը ազգային մակարդակով սահմանել է պարտադիր ապահովագրության կառուցակարգը ՔՆԱԹՍ-երի տարբեր տեսակների շահագործման համար:[113] Պետական մակարդակով պարտադիր ապահովագրության կարգավորումներ նախատեսված են, մասնավորապես, Բելգիայում, Չեխիայում, Դանիայում, Ֆինլանդիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Հունաստանում, Հունգարիայում, Լատվիայում, Լյուքսեմբուրգում, Նիդեռլանդներում, Լեհաստանում, Պորտուգալիայում, Սլովակիայում, Սլովենիայում, Իսպանիայում, Շվեդիայում:[114]

ՔՆԱԹՍ-ով պատճառված վնասի քաղաքացիական պատասխանատվության հարցերի իրավական կարգավորման ԵՄ օդային տարածքում գործող կառուցակարգերից է նաև ՔՆԱԹՍ-երի նույնականացման և թռիչքների վերահսկման համակարգը: ԵՄ օդային տարածքի կարգավորման համատեքստում առկա է նաև ընդհանուր կոնսենսուս հետագայում որպես ՔՆԱԹՍ-երի պարտադիր տեխնիկական պահանջ սահմանել սև արկղի առկայությունը, որը հնարավորություն կընձեռի ՔՆԱԹՍ-ով միջադեպի պարագայում պարզել դրա իրական պատճառները և որոշել պատասխանատվության սուբյեկտին:[115]

---

[112] P8_TA (2017)0051 Civil Law Rules on Robotics European Parliament resolution of 16 February 2017 with recommendations to the Commission on Civil Law Rules on Robotics (2015/2103(INL)) (2018/C 252/25), clauses 57, 59, at: https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:52017IP0051&rid=9

[113] Տե՛ս EASA website, EASA Pro FAQ n.116469, at: https://www.easa.europa.eu/en/faq/116469

[114] Nikolaos Tsiamis, Loukia Efthymiou and Konstantinos P. Tsagarakis, “A Comparative Analysis of the Legislation Evolution for Drone Use in OECD Countries”, MDPI drones (1 Oct 2019), p.4.

[115] Steven De Schrijver (Partner, Astrea, Belgium), “Commercial Use of Drones: Commercial Drones Facing Legal Turbulence: Towards a New Legal Framework in the EU”, US-China Law Review, August 2019, Vol. 16, No. 8, 338-354 doi:10.17265/1548-6605/2019.08.004, p.345

Այս համատեքստում, Հայաստանի Հանրապետությունում ՔՆԱԹՍ-երի կիրառման արդյունքում երրորդ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս պատճառելու պարագայում պատասխանատվության հարցերի, մասնավորապես, փոխհատուցման ապահովման, ինչպես նաև պատասխանատվության սուբյեկտը որոշելուն նպաստող իրավական կարգավորման հատուկ կառուցակարգեր նախատեսված չեն: Միաժամանակ, անհրաժեշտ է ընդգծել, որ ՔՆԱԹՍ-երի մասով ներկայումս իրավական թերկարգավորման պայմաններում ՔՆԱԹՍ-երի կիրառման արդյունքում երրորդ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս պատճառելու պարագայում պատասխանատվության հարցերը նույնիսկ տեսականորեն չեն կարող արդյունավետ եղանակով կարգավորվել: Առաջին հերթին անհրաժեշտ է ՔՆԱԹՍ-երի պետական վերահսկողական իրավակարգավորումների սահմանումը:

4. ՔՆԱԹՍ-ԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ՄԱՍՆԱՎՈՐ և ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՒ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՈՉ ԻՐԱՎԱՉԱՓ ԵՂԱՆԱԿՈՎ ՄՇԱԿՄԱՆԸ ՀԱԿԱԶԴԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

Ժամանակակից նկարահանող ՔՆԱԹՍ-երը, հագեցված լինելով բազմաթիվ տեսանկարահանում, լուսանկարահանում իրականացնող տեսախցիկներով, աուդիոձայնագրման, տեսապատկերները մշակելու և տարբեր օբյեկտների ճանաչման հնարավորությամբ, տարբեր (ներառյալ՝ բիոմետրիկ) տիպի սենսորներով, GPS համակարգերով և այլն, այսօր կարող են հնարավորություն ընձեռել անձնական տվյալները և մարդու մասնավոր կյանքին վերաբերող տեղեկությունները հավաքել ու մշակել դյուրին, աննկատ եղանակով: Ավելին, ՔՆԱԹՍ-երով հնարավոր է ֆիքսել

դետալներ, որոնք սովորական աչքով տեսանելի կամ լսելի չէին լինի: Այդպիսի ՔՆԱԹՍ-երի կիրառման արդյունքում առավել հավանական են անձնական տվյալների մշակման սահմանված իրավական պահանջների խախտումները, մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության խախտումը՝ ոչ իրավաչափ եղանակով հավաքագրելով, պահպանելով կամ այլ կերպ մշակելով ՔՆԱԹՍ-երի կողմից արձանագրված անձնական տվյալները, մարդուն ոչ իրավաչափ հետապնդման, անհանգստություն պատճառելու, չարտոնագրված նկարահանումներ ու ձայնագրություններ կատարելու, վոյերիզմով զբաղվելու, ՔՆԱԹՍ-երի միջոցով ստացված նյութը ոչ իրավաչափ օգտագործելու և այլ եղանակներով: Ժամանակակից սերունդների նկարահանող ՔՆԱԹՍ-երը ստեղծում են այնպիսի նոր հնարավորություններ, որոնք մինչ այս առկա ավանդական տեխնիկական միջոցներով հասանելի չէին: ՔՆԱԹՍ-ով հեշտությամբ կարելի է, խախտելով անձանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության ողջամիտ ակնկալիքները, նկարահանել բարձրահարկ շենքի նույնիսկ ամենաբարձր հարկերում բնակվող անձանց բնակարանի ներսն ու առօրյան[116], հաղթահարելով ուրիշի առանձնատան դարպասները՝ կարելի է իրականացնել չարտոնագրված ձայնագրություններ և նկարահանումներ, և այլն: Ավելին, ՔՆԱԹՍ-երը կարող են երկար ժամանակ մնալ աննկատ, այդպիսի տեխնիկական միջոցով հնարավոր է անձի հետապնդում իրականացնել՝ ներխուժելով մասնավոր կյանք ավելի տևական ժամանակ, քան այլ

[116] Այսպես, դեռ 2014 թվականին լայն հրապարակում ստացավ Սիեթլում բնակվող Լիզա Փլեյս անունով կնոջ հետ պատահած միջադեպը, երբ 26-րդ հարկում բնակվող կինը հանկարծակի իր բնակարանի պատուհանից նկատեց իրեն նկարահանող դրոնը և անմիջապես հաղորդեց այդ մասին ոստիկանություն, որի հիմքով նախաձեռնվեց վարույթ: Տե՛ս UPI, “Undressed Seattle woman reports peeping Tom drone spying through her window” (24 June 2014) at: https://www.upi.com/Top_News/US/2014/06/24/Undressed-Seattle-woman-reports-peeping-Tom-drone-spying-through-her-window/8021403637472/

միջոցներով: Իսկ արհեստական բանականության սրընթաց զարգացումն առավել արդիական է դարձնում խնդիրը:

Հաշվի առնելով ՔՆԱԹՍ-երի կիրառմամբ պայմանավորված նոր սպառնալիքները, բազմաթիվ պետություններ մշակել են դրանք նվազեցնելու իրավական երաշխիքներ: Այդպիսի անուղղակի կազմակերպաիրավական երաշխիքներից է, մասնավորապես, պետությունների գերակշռող մեծամասնությունում գործող և *supra* վերլուծված ՔՆԱԹՍ-երի գրանցման կամ հաշվառման կամ ՔՆԱԹՍ-երով իրականացվող թռիչքների համար հատուկ թույլտվություն ստանալու կառուցակարգերը, ՔՆԱԹՍ-ով թռիչք իրականացնելու համար թույլատրելի օդային տարածքների մասով նախատեսված սահմանափակումները: Տարբեր պետություններում գործող մի շարք իրավական երաշխիքներ էլ ուղղակիորեն միտված են անձնական տվյալների և մասնավոր ու ընտանեկան կյանքի պաշտպանությանը: Այդպիսի երաշխիքներից են ՔՆԱԹՍ-ով նկարահանում իրականացնելու համար համապատասխան պետական մարմնից հատուկ թույլտվություն ստանալու օրենսդրական պահանջը (օրինակ՝ ՌԴ, Բելառուս) կամ առանց մասնավոր տարածքի սեփականատիրոջ՝ այդ մասնավոր տարածքի, կամ առանց համապատասխան անձի թույլտվության՝ այդ անձի ՔՆԱԹՍ-ով տեսանկարահանումը, լուսանկարահանումը (օրինակ՝ ՌԴ, Ադրբեջան, Թուրքիա):

Իսրայելում մասնավոր կյանքի պաշտպանության երաշխիքները ՔՆԱԹՍ-երի կիրառման համատեքստում կարգավորվում են ընդհանրական մասնավոր կյանքի պաշտպանության մասին օրենքով:[117]

---

[117] Protection of Privacy Law, 5741 – 1981, at: https://www.gov.il/BlobFolder/legalinfo/legislation/en/ProtectionofPrivacyLaw57411981unofficialtranslatio.pdf
Այս օրենքով մանրամասն կարգավորված են այն գործողությունները և իրավիճակները, որոնք կարող են գնահատվել որպես անձի մասնավոր կյանքի անձեռնմխելության նկատմամբ ոտնձգություն, և որոնք բարձր հավանականությամբ կարող են իրականացվել հենց ՔՆԱԹՍ-երի կիրառմամբ՝ ներառյալ, բայց

ԱՄՆ-ում տեղական մակարդակով սահմանվում են ՔՆԱԹՍ-երի կիրառման համատեքստում մասնավոր կյանքի պաշտպանության հատուկ իրավական երաշխիքներ, ներառյալ՝ առանց սեփականատիրոջ թույլտվության մասնավոր սեփականությունը նկարահանելու արգելքը, ինչպես նաև առանց սեփականատիրոջ համաձայնության մասնավոր սեփականության օդային տարածքով որոշակի նվազագույն բարձրության վրա թռիչքի իրականացման պահանջը, մասնավոր սեփականության օդային տարածքում ՔՆԱԹՍ-երի թռիչքն ու այդպիսի տարածքում նկարահանում իրականացնելու քրեականացումը, առանց անձի գրավոր համաձայնության՝ հանրայնացնելու նպատակով վերջինիս տեսանկարահանելու և լուսանկարահանելու արգելքի սահմանումը, տվյալ պահի դրությամբ գաղտնիության ողջամիտ ակնկալիք ունեցող անձին ՔՆԱԹՍ-ով դիտավորությամբ դիտելը, նկարելը կամ ձայնագրելը քրեականացնելը, ընդհուպ մինչև հատուկ ՔՆԱԹՍ-երի շահագործման համատեքստում մասնավոր կյանքի պաշտպանությանն ուղղված օրենսդրական ակտերի ընդունումը:[118]

Մեկ այլ իրավական կարգավորում, որն անուղղակիորեն ուղղված է ՔՆԱԹՍ-երի միջոցով մասնավոր կյանքի անձեռնմխելիության և անձնական տվյալների պաշտպանության խախտումների սպառնալիքների նվազեցմանը, բնակարանի անձեռնմխելիության պաշտպանությանն ուղղված կարգավորումներն են: Այսպես, մի շարք ուսումնասիրված պետություններում[119] բնակարանի անձեռնմխելիությունը

չսահմանափակվելով մասնավոր տարածքում անձի՝ առանց թույլտվության լուսատեսանկարահանելը, օրենսդրությամբ արգելված որևէ եղանակով լսում իրականացնելը, անձին անհանգստություն պատճառելով հետապնդելը, և այլն: Նույն օրենքով նախատեսվում են նաև անձնական տվյալների պաշտպանությանն ուղղված դրույթներ, սահմանվում է «զգայուն տեղեկատվություն» եզրույթը և այլն, կարգավորվում է մասնավոր կյանքի անձեռնմխելիության խախտման պարագայում պատասխանատվության հարցը:

[118] Kurt W. Smith, “Drone Technology: Benefits, Risks, and Legal Considerations”, Seattle Journal of Environmental Law (volume 5, issue 1), pp.296-297

[119] Տե՛ս ՌԴ ՔՕ հոդված 139, Ղազախստանի ՔՕ հոդված 149, Ղրղզստանի ՔՕ հոդված 194, Բելառուսի ՔՕ հոդված 202, Թուրքիայի ՔՕ հոդված 116, Ադրբեջանի ՔՕ հոդված 157, ինչպես նաև Չեխիայի ՔՕ

խախտելը նախատեսված է որպես քրեորեն հետապնդվող արարք: Միևնույն ժամանակ, հարկ է ընդգծել, որ ուսումնասիրված պետությունների մեծամասնությունն առայժմ քրեական օրենսգրքի շրջանակում հատուկ անդրադարձ չի կատարում ՔՆԱԹՍ-ի միջոցով բնակարանի անձեռնմխելիության խախտմանը՝ ընդհանրական կարգավորում նախատեսելով համապատասխան արարքի համար: Սա նշանակում է, որ ՔՆԱԹՍ-ի միջոցով բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու դեպքերը կմեկնաբանվեն դատական պրակտիկայի համատեքստում:[120]

Միևնույն ժամանակ, հարկ է ընդգծել, որ առավել արդյունավետ իրավական կառուցակարգեր կարող են դիտարկվել այն կառուցակարգերը, որոնք հատուկ և ուղղակիորեն ուղղված են կարգավորելու ՔՆԱԹՍ-ի միջոցով տեսալուսանկարահանելու և ձայնագրություններ իրականացնելու գործընթացը: Մինչդեռ այնպիսի ընդհանրական կարգավորումները, որոնք սահմանում են, օրինակ, ՔՆԱԹՍ-երով թռիչքներ իրականացնելիս նվազագույն հեռավորություն կամ, օրինակ, վերաբերում են ՔՆԱԹՍ-ի քաշին, չեն կարող դիտվել որպես արդյունավետ՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության և անձնական տվյալների պաշտպանության տեսանկյունից, քանի որ սրընթաց տեխնիկական զարգացման պայմաններում խնդիր չի ներկայացնի թեթև քաշով, բայց գերհզոր սենսորներով ՔՆԱԹՍ-երի արտադրությունը, որոնց միջոցով հնարավոր կլինի իրականացնել որակյալ տեսալուսանկարահանում կամ ձայնագրություն նաև մեծ հեռավորության վրա՝ առավել դյուրին դարձնելով ՔՆԱԹՍ-երի միջոցով մասնավոր կյանքի

հոդված 238, Գերմանիայի ՔՕ հոդված 123, Խորվաթիայի ՔՕ հոդված 122, Հունգարիայի ՔՕ հոդված 221, Սլովենիայի ՔՕ հոդված 152 և այլն:

[120] ՀՀ ՔՕ-ով (հոդված 207), ինչպես և ուսումնասիրված պետություններում, չի մասնավորեցվում բնակարանի անձեռնմխելիությունը ՔՆԱԹՍ-ի կամ այլ հեռավար կառավարվող կամ ինքնակառավարվող համակարգի միջոցով խախտումը:

անձեռնմխելիության դեմ ոտնձգություններն ու ոչ իրավաչափ եղանակով անձնական տվյալների մշակումը:

ԱՄՆ-ում դաշնային մակարդակով դեռևս 2017 թվականին սենատոր Էդվարդ Մարքին հանդես եկավ հետաքրքիր նախաձեռնությամբ, որի համաձայն՝ ԱՄՆ-ում անօդաչու թռչող սարքերի շահագործման ընթացքում մասնավոր կյանքի պաշտպանությունը պետք է կարգավորվեր հատուկ օրենսդրական ակտով:[121] Այս օրենսդրական նախաձեռնության հիմնական նպատակն էր ապահովել, որպեսզի ՔՆԱԹՍ-երի կիրառումը տեղի ունենա մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական սկզբունքներին համապատասխան: Մասնավորապես, ըստ նախաձեռնության, ՔՆԱԹՍ-ի օգտագործման թույլտվություն ստանալու գործընթացում անհրաժեշտ փաստաթղթերից պետք է լիներ նաև ՔՆԱԹՍ-ով անձնական տվյալների և մասնավոր կյանքի անձեռնմխելիության պաշտպանության սկզբունքներին համապատասխան տվյալների հավաքագրման և մշակման վերաբերյալ հայտատուի հայտարարությունը՝ երաշխավորված գործնական կիրառման կառուցակարգերով:[122] Հարկ է նաև ընդգծել, որ ԱՄՆ-ում դաշնային մակարդակով դեռ 2015 թվականին ԱՄՆ Նախագահ Բարաք Օբամայի ցուցումով[123]

---

[121] S.631 - Drone Aircraft Privacy and Transparency Act of 2017115th Congress (2017-2018), at: https://www.congress.gov/bill/115th-congress/senate-bill/631; Adam Zwickle, Hillary B. Farber, Joseph A. Hamm, “Comparing public concern and support for drone regulation to the current legal framework”, Behavioral Sciences & the Law (January 2019) p. 4, at: https://onlinelibrary.wiley.com/doi/abs/10.1002/bsl.2357

[122] Ըստ առաջարկի՝ այսպիսի հայտարարությունը պետք է պարունակի տեղեկատվություն ՔՆԱԹՍ-ը շահագործելու վայրի մասին, ՔՆԱԹՍ-ի շահագործման առավելագույն ժամանակը, երրորդ անձանց վերաբերյալ տեղեկություններ հավաքելու և մշակելու մտադրության մասին, անձնական տվյալները մշակելու համար պահանջվող տեղեկությունների մասին, ընդ որում՝ տրամադրված հայտարարությունը ենթակա է հրապարակման համացանցում (տե՛ս https://www.congress.gov/bill/115th-congress/senate-bill/631/text):

[123] The White House ռեբսիտե, Office of the Press Secretary, “Presidential Memorandum: Promoting Economic Competitiveness While Safeguarding Privacy, Civil Rights, and Civil Liberties in Domestic Use of Unmanned Aircraft Systems” (15.02.2015) at: https://obamawhitehouse.archives.gov/the-press-office/2015/02/15/presidential-memorandum-promoting-economic-competitiveness-while-safegua

ուսումնասիրվել է ՔՆԱԹՍ-երի շահագործման համատեքստում, *inter alia*, մասնավոր կյանքի անձեռնմխելիության պաշտպանության խնդիրը: Ուսումնասիրության արդյունքներով ԱՄՆ-ի հեռահաղորդակցության և տեղեկատվության ազգային վարչության կողմից ՔՆԱԹՍ-երի օպերատորների համար պատրաստվել է ՔՆԱԹՍ-երի շահագործման համատեքստում մասնավոր կյանքի անձեռնմխելիության ապահովման գործողությունների լավ փորձի ուղեցույց:[124]

ՔՆԱԹՍ-երի շահագործման համատեքստում մասնավոր և ընտանեկան կյանքի ու անձնական տվյալների պաշտպանության խիստ և արդյունավետ մոտեցում է որդեգրված ԵՄ պետությունների տարածքում:[125] Այս իմաստով առավել կարևոր իրավական գործիքներից է, մասնավորապես՝ ԵՄ տվյալների պաշտպանության 2016/679 ընդհանուր կանոնակարգը (այսուհետ՝ նաև GDPR), որի պահանջները տարածվում են ինչպես մասնավոր անձանց, այնպես էլ պետական կառույցների և պաշտոնատար անձանց նկատմամբ: Գործող կարգավորումների համաձայն ՔՆԱԹՍ

---

[124] Computerworld US website, “US releases privacy 'best practices' for drone use: the guidance released by NTIA for drone users is voluntary” (20.05.2016) at: https://www.computerworld.com/article/3073472/us-releases-privacy-best-practices-for-drone-use.html

[125] ԵՄ անդամ պետություններում այս պաշտպանության գործիքները ներառում են. Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների կոնվենցիայի 8-րդ հոդվածը և այդ մասով դատական պրակտիկան, Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին կոնվենցիան (2018 թվականի փոփոխություններով՝ Կոնվենցիա 108 +) և դրան առնչվող փաստաթղթերը, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի R (87) 15 հանձնարարականը՝ ոստիկանական ոլորտում անձնական տվյալների օգտագործման վերաբերյալ, Նախարարների կոմիտեի CM/Rec (2010) 13 հանձնարարականը՝ պրոֆիլավորման համատեքստում անձնական տվյալների ավտոմատ մշակման առնչությամբ, ԵՄ Հիմնարար իրավունքների խարտիայի 7-րդ հոդվածը (մասնավոր կյանքի անձեռնմխելիություն) և 8-րդ հոդվածը (անձնական տվյալների պաշտպանություն), 2016/679 ԵՄ տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգը (GDPR), որը գործում է 2018 թվականի մայիսից, 2008 թվականի նոյեմբերի 27-ի ԵՄ Խորհրդի շրջանակային 2008/977/JHA որոշումը՝ քրեական գործերով ոստիկանության և դատական համագործակցության շրջանակներում մշակվող անձնական տվյալների պաշտպանության մասին, 2000 թվականի դեկտեմբերի 18-ի (EC) 45/2001 կանոնակարգը՝ ՏԻՄ կողմից անձնական տվյալների մշակումից ֆիզիկական անձանց պաշտպանության և ազատ տեղաշարժի մասին, 2002 թվականի հուլիսի 12-ի 2002/58/ EC հրահանգը, որը վերաբերում է անձնական տվյալների պաշտպանությանը էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում:

շահագործողը չի կարող հանրայնացնել որևէ երրորդ անձանց կամ երրորդ անձանց պատկանող օբյեկտներին (օրինակ՝ տրանսպորտային միջոց կամ բնակելի տարածք) վերաբերող տվյալներ կամ պատկերներ, որոնցով հնարավոր կլիներ դրանց նույնականացումը:[126] ԵՄ տարածքում գործող GDPR-ը պարունակում է դրույթներ, որոնք վերաբերում են սարքավորման արտադրության ամբողջ գործընթացում անձնական տվյալների ու մասնավոր կյանքի պաշտպանության նկատառումները հաշվի առնելու պարտադիրությունը (ներառյալ՝ տեխնիկական գործիքներով և հնարավորություններով սարքավորման արտադրության փուլում դրա հագեցումը՝ privacy by design), որոնք վերաբերելի են նաև ՔՆԱԹՍ-երին:[127]

ԵՄ մակարդակում պարբերաբար տարբեր նախաձեռնություններ են իրականացվում, որոնք միտված են նպաստելու մասնավոր կյանքի անձեռնմխելիության և անձնական տվյալների պաշտպանության սկզբունքներին համապատասխան՝ ՔՆԱԹՍ-երի արտադրությանն ու շահագործմանը: Այդպիսի մի նախաձեռնություն էր, օրինակ, ԵՄ անձնական տվյալների պաշտպանության խորհրդի կողմից 2015 թվականին հրապարակած փաստաթուղթը ՔՆԱԹՍ-երի շահագործմամբ պայմանավորված անձնական տվյալների և մասնավոր կյանքի պաշտպանությանը վերաբերող խնդիրների մասին՝ անդրադառնալով ինչպես ՔՆԱԹՍ-երի կիրառմամբ պայմանավորված նոր մարտահրավերներին և սպառնալիքներին, այնպես էլ դրանք հաղթահարելու ձևերին:[128] Մեկ այլ նախաձեռնություն ԵՄ հանձնաժողովի կողմից ֆինանսավորված «Դրոնների

---

[126] Տե՛ս Steven De Schrijver, *supra* n.115, pp.349-350 (նշված կանոնից բացառությունները վերաբերում են իրավապահ մարմիններին, լրագրողներին, ինչպես նաև մասնավոր տարածքներում ՔՆԱԹՍ-ի կենցաղային (ժամանցային) նպատակներով շահագործող մասնավոր անձանց):
[127] Steven De Schrijver, *supra* n. 115, p. 350.
[128] Opinion of the European Data Protection Supervisor on the Communication from the Commission to the European Parliament and the Council on "A new era for aviation - Opening the aviation market to the civil use of remotely piloted aircraft systems in a safe and sustainable manner", at: https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A52015XX0211%2801%29

կանոնները» ծրագիրն էր, որի շրջանակում պատրաստվել են տարբեր ուղեցույցներ, խորհուրդներ, էլեկտրոնային դասընթացներ, չեքլիսթեր և այլ նյութեր՝ մատչելի եղանակով հասանելի դարձնելով ՔՆԱԹՍ-եր արտադրողների և շահագործողների համար մասնավոր կյանքի անձեռնմխելիության և անձնական տվյալների պաշտպանությանն ուղղված բոլոր կանոնները:[129] Ընդ որում, «Դրոնների կանոնները» ծրագրի շրջանակում մշակված նյութերը ԵՄ Ավիացիոն անվտանգության գործակալության կողմից ճանաչվել են որպես պաշտոնական ուղեցույց:[130]

Այս համատեքստում ուսումնասիրվել է նաև առանձին պետությունների մակարդակով ձեռնարկվող միջոցառումները: Այսպես, մասնավորապես, Բելգիայի անձնական տվյալների պաշտպանության իրավասու մարմնի կողմից խորհուրդ է տրվում ՔՆԱԹՍ-երի տեխնիկական չափորոշիչները համապատասխանեցնել շահագործման նպատակին, ինչպես նաև արտադրության փուլում ՔՆԱԹՍ-ը հագեցնել այնպիսի ծրագրերով, որոնք ուղղված են երրորդ անձանց մասնավոր կյանքի և անձնական տվյալների պաշտպանության երաշխավորմանը (օրինակ, որ մարդկանց դեմքերը կամ տրանսպորտային միջոցի նույնականացման համարները ավտոմատ կերպով փակվեն, խոսակցության բովանդակությունը բացահայտող կամ խոսողին նույնականացնելու հնարավորություն ընձեռող ձայնագրությունները ավտոմատ եղանակով ջնջվեն և այլն):[131] Բելգիայի քաղաքացիական ավիացիայի իրավասու մարմնի 2016 թվականի ապրիլի 10-ի հրամանագրի համաձայն՝ ի թիվս ՔՆԱԹՍ-երի շահագործման այլ պահանջների, փաստաթղթի վերաբերելի

---

[129] Steven De Schrijver, *supra* n. 115, p. 351.
[130] Dr Rachel Finn and Panagiotis Loukinas, “Privacy, data protection and drone operations: the new EASA Guidance”, at: https://trilateralresearch.com/data-governance/privacy-data-protection-and-drone-operations-the-new-easa-guidance
[131] Steven De Schrijver, *supra* n. 115, p. 350.

հատվածներում հղում է կատարվում անձնական տվյալների պաշտպանության և մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական սկզբունքներն ամրագրող օրենսդրության կանոնների պահպանման պարտադիրության վրա:[132]

Իսկ, օրինակ, Շվեդիայում Վճռաբեկ վարչական դատարանի կողմից 2016 թվականին ընդունվեց որոշում, որի համաձայն՝ լուսատեսանկարահանող ՔՆԱԹՍ-երի շահագործման համար պահանջվում է հատուկ թույլտվություն:[133]

ՔՆԱԹՍ-երի շահագործմամբ պայմանավորված մասնավոր կյանքի անձեռնմխելիության և անձնական տվյալների պաշտպանության ռիսկերին իրավական արձագանքման քայլեր են իրականացվել նաև աշխարհի մի շարք այլ պետություններում: Այսպես, Միացյալ Թագավորությունում ՔՆԱԹՍ-ի վրա տեսախցիկի առկայության պարագայում ՔՆԱԹՍ-ով թռիչք իրականացնելիս պետք է պահպանվի առնվազն 50 մետր հեռավորություն ցանկացած այլ անձից և ՔՆԱԹՍ-ը շահագործողին չպատկանող ցանկացած տրանսպորտային միջոցից, շենքից, շինությունից, ինչպես նաև առնվազն 150 մետր հեռավորություն այնպիսի վայրերում, որոնցում թռիչքն իրականացնելու պահին առկա են մարդկանց կուտակումներ:[134] Իսկ այս կանոններից շեղումներով թռիչքներ իրականացնելու համար անհրաժեշտ է ստանալ Քաղաքացիական ավիացիայի լիազոր մարմնից թույլտվություն:[135]

Ի լրումն վերոհիշյալ կարգավորումների՝ պետություններում, որպես կանոն, քրեականացված են անձնական կյանքի անձեռնմխելիության և անձնական տվյալների պաշտպանության դեմ ուղղված արարքները, որոնք ՔՆԱԹՍ-երի միջոցով

---

[132] María de Miguel Molina Virginia Santamarina Campos Ed., *supra* n. 111, p.65.
[133] BBC News, “Sweden bans cameras on drones” (25 October 2016), at: https://www.bbc.com/news/technology-37761872
[134] María de Miguel Molina Virginia Santamarina Campos Ed., *supra* n. 111, p.53.
[135] David Hodgkinson and Rebecca Johnston, *Aviation Law and Drones: unmanned aircraft and the future of Aviation,* Routledge, 2018, p. 20; Des Butler, “Drones and Invasions Of Privacy: An International Comparison Of Legal Responses”, UNSW Law Journal Volume 42/3 (2019) p.1054.

կատարելու ռիսկերը ակնհայտորեն բարձր են, ինչպես, օրինակ, մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը խախտելը, անձնական տվյալների մշակման կանոնները խախտելը, բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը, ինչպես նաև վոյերիզմը և անձին հետապնդելը (stalking):[136] Տարբեր պետություններում քրեական օրենսգիրքը տարբեր ծավալներով և հետևապես նաև տարբեր մակարդակների արդյունավետությամբ է անդրադառնում համապատասխան արարքների կարգավորմանը:

Այսպես, օրինակ, ՌԴ-ի և Ղրղզստանի քրեական օրենսգրքերով (այսուհետ՝ նաև ՔՕ) համեմատաբար սահմանափակ կարգավորում է նախատեսված, որի համաձայն քրեական պատասխանատվություն է առաջացնում մասնավոր կամ ընտանեկան կյանքի գաղտնիք կազմող տեղեկությունների հավաքագրումը կամ տարածումը (ՌԴ քրեական օրենսգրքի հոդված 137, Ղրղզստանի քրեական օրենսգրքի հոդված 190)[137]: Ավելի ընդգրկուն կարգավորում է նախատեսված Ղազախստանի քրեական օրենսգրքով: Մասնավորապես, Ղազախստանի ՔՕ 147-րդ հոդվածով նախատեսված է քրեական պատասխանատվություն հետևյալ արարքների համար.

1) անձնական տվյալների պաշտպանությանն ուղղված միջոցառումները չկատարելը այդպիսի միջոցառումները կատարելու պարտավորություն ունեցող անձի կողմից, եթե դրա արդյունքում էական վնաս է հասցվել անձի իրավունքներին և օրինական շահերին,

---

[136] Հատկապես վոյերիզմը և անձին անհանգստություն պատճառելով հետապնդելը անձնական կյանքի անձեռնմխելիության դեմ ուղղված այն ապօրինի արարքներից են, որոնք առավել հեշտությամբ կարող են իրականացվել հենց ՔՆԱԹՍ-ի օգտագործմամբ:

[137] Ղրզստանի քրեական օրենսգրքով կիրառվում է «մասնավոր կյանքի վերաբերյալ խորհրդապահական բնույթի տեղեկություն» եզրույթը՝ հստակ տարանջատելով այն նույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված «ընտանեկան գաղտնիք» եզրույթից: Մինչդեռ ՌԴ-ում քրեորեն պատժելի արարք է համարվում բացառապես «մասնավոր կամ ընտանեկան կյանքի գաղտնիք» կազմող տեղեկությունների ոչ իրավաչափ մշակումը:

2) անձնական կամ ընտանեկան կյանքի գաղտնիք կազմող տեղեկությունների ապօրինի հավաքագրումը,

3) այլ անձնական տվյալների ապօրինի հավաքագրումն ու մշակումը (բացառությամբ՝ տարածելուց), որը զգալի վնաս է հասցրել անձի իրավունքներին կամ օրինական շահերին[138],

4) անձնական կամ ընտանեկան գաղտնիք հանդիսացող տեղեկությունների՝ առանց համաձայնության տարածումը, ինչպես նաև այլ անձնական տվյալների տարածումը, եթե դրա արդյունքում էական վնաս է հասցվել անձի իրավունքներին և օրինական շահերին:[139]

Բելառուսում կարգավորումը որոշակիորեն նման է Ղազախստանի ՔՕ կարգավորմանը և քրեորեն պատժելի է համարվում մասնավոր կյանքին վերաբերող կամ անձնական տվյալների դիտավորությամբ ոչ իրավաչափ եղանակով մշակելը, որի արդյունքում հասցվել է էական վնաս անձի իրավունքներին և օրինական շահերին (ՔՕ հոդված 203[1]), ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանության միջոցառումները չկատարելը այդպիսի պարտավորություն ունեցող անձի կողմից, որն անզգուշությամբ առաջացրել է անձնական տվյալների տարածումը և հասցրել է ծանր հետևանքներ (ՔՕ հոդված 203[2]):

Հետաքրքիր է այս մասով Ադրբեջանի ՔՕ կարգավորումը: Մասնավորապես, նախատեսված է քրեական պատասխանատվություն (տուգանքի կամ հասարակական աշխատանքների կամ ուղղիչ աշխատանքների ձևով) անձնական

---

[138] Նույն հոդվածի 3-րդ մասով որպես որակյալ հանցակազմ է նախատեսված, *inter alia*, մասնավոր կամ ընտանեկան կյանքի գաղտնիք կազմող տեղեկությունների ապօրինի հավաքագրումը, կամ այլ անձնական տվյալների ապօրինի հավաքագրումն ու մշակումը (բացառությամբ՝ տարածելուց), որը զգալի վնաս է հասցրել անձի իրավունքներին կամ օրինական շահերին, և որն իրականացվել է գաղտնի տեղեկատվություն ստանալու համար նախատեսված հատուկ տեխնիկական միջոցներով:

[139] Տվյալ հոդվածի 5-րդ մասով նախատեսված է ևս մեկ որակյալ հանցակազմ, որով կարգավորվում է վերոնշյալ 4-րդ կետով նախատեսված արարքը որոշակի եղանակներով իրականացնելը կամ որոշակի կատեգորիաների անձանց նկատմամբ իրականացնելը:

կամ ընտանեկան գաղտնիք կազմող տեղեկությունները ոչ իրավաչափ եղանակով մշակելու համար, ինչպես նաև այդպիսի տեղեկություններ պարունակող փաստաթղթերը, վիդեո, ֆոտո և աուդիո նյութերը հրապարակելու համար (ՔՕ հոդված 156): Միևնույն ժամանակ, նույն հոդվածի երկրորդ մասով՝ որպես որակյալ հանցակազմ նախատեսված է վերոհիշյալ արարքը ՔՆԱԹՍ կիրառելու միջոցով իրականացնելը, որի համար նախատեսված է ազատազրկման ձևով պատասխանատվություն[140]:

Առավել համապարփակ կարգավորումներ են նախատեսված, մասնավորապես, Թուրքիայում: Այստեղ, ի թիվս այլոց, ՔՕ-ով պատժելի արարքներ են՝

- գաղտնալսման կամ որևէ ձայնագրող սարքի կիրառությամբ անձանց միջև խոսակցությունը լսելը՝ առանց այդ անձանց համաձայնության, ինչպես նաև այդպիսի խոսակցությունը որևէ եղանակով հրապարակելը (հոդված 133),

- անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը խախտելը և որպես որակյալ հանցակազմեր՝ նույն արարքը ձայնի կամ պատկերների ձայնագրման միջոցով իրականացնելը, ինչպես նաև ձայնագրված պատկերը կամ ձայնը որևէ եղանակով հրապարակելը (հոդված 134),

- անձնական տվյալները ոչ իրավաչափ եղանակով մշակելը (հոդվածներ 135 և 136),

- այլ անձին պատկանող անձնական տվյալները օրենքով սահմանված դեպքերում և կարգով չոչնչացնելը (հոդված 138): [141]

ԵՄ անդամ պետություններում, հաշվի առնելով անձնական տվյալների իրավական պաշտպանության բարձր շեմը, բացի մասնավոր կյանքի

---

[140] Ադրբեջանի քրեական օրենսգիրք, հոդված 156.2.2. (տե՛ս https://continent-online.com/Document/?doc_id=30420353#pos=1821;-46)

[141] Տե՛ս https://www.wipo.int/edocs/lexdocs/laws/en/tr/tr171en.pdf կամ https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF(2016)011-e

անձեռնմխելիության խախտումից, անձնական տվյալների մշակման կարգավորումների խախտումն էլ հիմնականում նախատեսված է քրեական օրենսգրքում՝ որպես հանցագործություն:[142]

Ամփոփելով՝ ՔՆԱԹՍ-երի կիրառմամբ պայմանավորված նոր մարտահրավերներին դիմակայելու համար մասնավոր կյանքի անձեռնմխելիության և անձնական տվյալների պաշտպանության խնդրի առավել արդյունավետ կարգավորումները ենթադրում են տարբեր մակարդակներում ընդհանուր և հատուկ իրավական կարգավորումներ, ներառյալ՝ քրեական օրենսգրքով համապատասխան ոչ իրավաչափ արարքների մասով հատուկ կարգավորումներ նախատեսելը:

Այս համատեքստում անհրաժեշտ է անդրադարձ կատարել նաև Հայաստանի Հանրապետության իրավական կարգավորումներին: ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածով սահմանված է յուրաքանչյուր անձի մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով և Սահմանադրությամբ նախատեսված հատուկ նպատակներով: Սահմանադրության 34-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք: Անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ...»: Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը և անձնական տվյալների պաշտպանությունը ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված են որպես մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներ: Սահմանադրության 75-րդ

---

[142] Օրինակ, Չեխիայի ՔՕ հոդված 180՝ https://antislaverylaw.ac.uk/wp-content/uploads/2019/08/Czech-Republic-Criminal-Code.pdf, Գերմանիայի ՔՕ հոդվածներ 126a, 201, 201a, 202d, 238՝ https://www.gesetze-im-internet.de/englisch_stgb/englisch_stgb.html, Խորվաթիայի ՔՕ հոդված 133՝ https://www.vsrh.hr/CustomPages/Static/HRV/Files/Legislation__Criminal-Code.pdf, Հունգարիայի ՔՕ, հոդված 219՝ https://www.refworld.org/pdfid/4c358dd22.pdf , Սլովենիայի ՔՕ հոդվածներ 148, 149, 154՝ https://www.vertic.org/media/National%20Legislation/Slovenia/SI_Criminal_Code.pdf, և այլն:

հոդվածի համաձայն. «Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր»: Այլ կերպ ասած՝ պետության պարտականությունն է օրենքներով նախատեսել այնպիսի կարգավորումներ, որոնք կերաշխավորեն անձի հիմնական իրավունքների արդյունավետ իրացումը գործնականում: Այս համատեքստում անհրաժեշտ է արձանագրել, որ ՔՆԱԹՍ-երի շահագործման արդյունքում մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությանն ու անձնական տվյալների պաշտպանությանը սպառնալիքների իրավական կարգավորման տեսանկյունից արդյունավետ կառուցակարգերը ՀՀ օրենքներով բացակայում են: Այսպես, ինչպես վերլուծված է վերը՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության 2007 թվականի ապրիլի 56-Ն հրամանով հաստատված կարգն առհասարակ որևէ նվազագույն ուղղակի կամ անուղղակի կարգավորումներ չի նախատեսում՝ մասնավոր և ընտանեկան կյանքի ու անձնական տվյալների պաշտպանության համար ՔՆԱԹՍ-երի շահագործմամբ պայմանավորված սպառնալիքների մեղմման նպատակով՝ ինչպես, օրինակ, ՔՆԱԹՍ-երի կամ ՔՆԱԹՍ-երի օպերատորների պարտադիր հաշվառումը, ՔՆԱԹՍ-երի նույնականացման մեխանիզմների պարտադիրությունը, տեսալուսանկարահանող ՔՆԱԹՍ-երի շահագործման համար հատուկ թույլտվության պարտադիրությունը կամ այլ սահմանափակումների սահմանումը, ՔՆԱԹՍ-ով թռիչքների նկատմամբ պետական վերահսկողության իրականացումը և այլն:

Մարդու անձնական և մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը պաշտպանելու տեսանկյունից անհամաչափ թույլ կարգավորումներ են նախատեսված նաև ՀՀ քրեական օրենսգրքով: Այսպես, 2022 թվականի հունիսին ուժի մեջ մտած նոր քրեական օրենսգրքի 204-րդ հոդվածով պատժելի արարք է համարվում. «Մարդու *անձնական կամ ընտանեկան գաղտնիք* համարվող տեղեկությունն առանց նրա

համաձայնության օգտագործելը, իրացնելը կամ հայտնելը կամ այդ տեղեկությունն օրենքով սահմանված կարգի խախտմամբ օգտագործելու, իրացնելու կամ հայտնելու նպատակով ձեռք բերելը կամ պահելը»: Միևնույն ժամանակ, որպես որակյալ հանցակազմեր են նախատեսված՝ ա) մարդու անձնական կամ ընտանեկան գաղտնիք համարվող տեղեկությունը հրապարակային ելույթներով, հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով, զանգվածային լրատվության միջոցներով կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով տարածելը և բ) հիշյալ արարքը իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ տեղեկության գաղտնի հավաքման համար նախատեսված տեխնիկական հատուկ միջոց օգտագործելով:

ՀՀ ՔՕ 204-րդ հոդվածի վերլուծությունը հանգեցնում է հետևյալ կարևոր եզրակացություններին.

- Պաշտպանության օբյեկտ են բացառապես մարդու «անձնական կամ ընտանեկան *գաղտնիք*» կազմող տեղեկությունները, մինչդեռ այդպիսի գաղտնիք չկազմող, սակայն անձի մասնավոր և ընտանեկան կյանքին վերաբերող այլ տեղեկությունները, ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանությունը դուրս են ՀՀ ՔՕ կարգավորման շրջանակից:

- ՔՕ-ով որպես որակյալ հանցակազմ է նախատեսված *տեղեկության գաղտնի հավաքման համար նախատեսված տեխնիկական հատուկ միջոցի* կիրառմամբ համապատասխան արարքի կատարելը, ինչն առաջին հայացքից, համապատասխան ձևակերպման տառացի մեկնաբանությունից ելնելով, վերաբերելի չէ ժամանակակից ՔՆԱԹՍ-երին[143]:

---

[143] Առերևույթ ՔՆԱԹՍ-երն իրենց բազմաֆունկցիոնալությամբ չեն դիտարկվի որպես տեղեկության գաղտնի հավաքման համար *նախատեսված* տեխնիկական հատուկ միջոց: Առհասարակ,

Քրեական օրենսգիրքը նաև չի պարունակվում որևէ հատուկ կարգավորում, որն ուղղված լինի ուղղակիորեն կարգավորելու ՔՆԱԹՍ-երի շահագործմամբ մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության ու անձնական տվյալների պաշտպանությունը (ինչպես, օրինակ, անձին առանց իր թույլտվության տեսալուսանկարահանելու կամ ձայնագրելու համար քրեական պատասխանատվությունը կամ ՔՆԱԹՍ-ի կիրառմամբ անձի մասնավոր կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիության դեմ ուղղված արարքները որպես որակյալ հանցակազմ նախատեսելը և այլն):

Ինչ վերաբերում է անձնական տվյալների պաշտպանության իրավական կարգավորումներին, ապա ՀՀ-ում գործում է 2015թ. մայիսի 18-ի «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքը (այսուհետ՝ Օրենք): Օրենքով, մասնավորապես, սահմանվում են անձնական տվյալները մշակելու սկզբունքները, անձնական տվյալները մշակելու օրինականության նախապայմաններն ու օրինական եղանակով մշակելու կարգը, տվյալների սուբյեկտի և մշակողի իրավունքներն ու պարտականությունները, անձնական տվյալներ մշակելու անվտանգության ապահովման միջոցներին ներկայացվող պահանջները, և մշակողի պարտականությունները, անձնական տվյալները մշակելու օրինականության նկատմամբ հսկողության իրականացման կարգը, անձնական տվյալները երրորդ անձանց փոխանցելու պայմանները և այլն:[144] Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ անձնական տվյալներ մշակելը օրինական է հետևյալ պայմանների առկայության պարագայում՝ 1) տվյալները մշակվել են օրենքի պահանջների պահպանմամբ, և

«տեղեկության գաղտնի հավաքման համար նախատեսված տեխնիկական հատուկ միջոց» եզրույթի իրավական բովանդակությունը հստակեցված չէ:

[144] Հարկ է ընդգծել, որ օրենքի համակարգային ուսումնասիրությունից հետևում է, որ անձնական տվյալների առավել արդյունավետ պաշտպանության համար և արդի զարգացումները հաշվի առնելով՝ Օրենքն ինքնին ունի վերանայման և լրամշակման անհրաժեշտություն, սակայն Օրենքի իրավակարգավորումների մանրամասն վերլուծությունը դուրս է սույն հետազոտության շրջանակից:

տվյալների սուբյեկտը տվել է իր համաձայնությունը[145], կամ 2) մշակվող տվյալները ձեռք են բերվել անձնական տվյալների հանրամատչելի աղբյուրներից: Օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Տեղեկատվական համակարգերում անձնական տվյալները մշակելու անվտանգությունն ապահովելուն ներկայացվող պահանջները, կենսաչափական անձնական տվյալների նյութական կրիչներին և տեղեկատվական համակարգերից դուրս այդ անձնական տվյալները պահպանելու տեխնոլոգիաներին ներկայացվող պահանջները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ»: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն. «Տեղեկատվական համակարգերից դուրս կենսաչափական անձնական տվյալների օգտագործումն ու պահպանումը կարող են իրականացվել միայն այնպիսի նյութական կրիչների միջոցով, տեխնոլոգիաների կիրառմամբ կամ ձևերով, որոնք ապահովում են այդ տվյալների պաշտպանվածությունը դրանց անօրինական մուտք գործելուց, անձնական տվյալների անօրինական օգտագործումից, ոչնչացումից, վերափոխումից, ուղեփակումից, կրկնօրինակումից, տարածումից և այլն»:

Այսինքն՝ անձնական տվյալներ մշակելու ցանկացած գործընթաց իրավաչափ համարվելու համար, այդ թվում՝ եթե անձնական տվյալների մշակումն իրականացվում է ՔՆԱԹՍ-ի շահագործման արդյունքում դիտավորությամբ կամ առանց նման հատուկ նպատակի, այն պետք է իրականացվի՝

ա) Օրենքի դրույթներին համապատասխան,

բ) տվյալների սուբյեկտի համաձայնությամբ, բացառությամբ հանրամատչելի աղբյուրներից ստացված տվյալների և օրենքներով ուղղակիորեն նախատեսված դեպքերի, և

---

[145] Այս կանոնից բացառություն են կազմում Օրենքով կամ ՀՀ այլ օրենքներով ուղղակիորեն նախատեսված դեպքերը:

գ) մշակման գործընթացում պետք է երաշխավորվեն տեղեկատվական համակարգերում անձնական տվյալները մշակելու անվտանգությունն ապահովելուն ներկայացվող պահանջները, կենսաչափական անձնական տվյալների նյութական կրիչներին և տեղեկատվական համակարգերից դուրս այդ անձնական տվյալները պահպանելու տեխնոլոգիաներին ներկայացվող պահանջները:

ՀՀ-ում անձնական տվյալների ապօրինի մշակման համար պատասխանատվությունը նախատեսված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (ՎԻՎՕ) 189.17-րդ հոդվածով, *inter alia*, հետևյալ արարքների համար՝

1) անձնական տվյալները որևէ եղանակով մշակելու՝ օրենքով սահմանված կարգը խախտելը,

2) անձնական տվյալները ոչնչացնելու կամ ուղեփակելու՝ օրենքով սահմանված կարգը խախտելը,

3) անձնական տվյալներ հավաքելու ընթացքում անձնական տվյալների սուբյեկտի պահանջով մշակողի կողմից օրենքով նախատեսված տեղեկատվություն չտրամադրելը կամ տրամադրման կարգը խախտելը կամ չտրամադրելու պատճառներն ու հետևանքները չպարզաբանելը,

4) անձնական տվյալներ մշակողի կողմից անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնին ծանուցման կարգը խախտելը,

5) անձնական տվյալները մշակելու ընթացքում գաղտնագրման միջոցներ չօգտագործելը,

6) տեղեկատվական համակարգերում անձնական տվյալները մշակելու անվտանգությունն ապահովելուն ներկայացվող պահանջները, կենսաչափական անձնական տվյալների նյութական կրիչներին և տեղեկատվական համակարգերից

դուրս այդ անձնական տվյալները պահպանելու տեխնոլոգիաներին ներկայացվող պահանջները խախտելը[146]:

Ընդ որում, նույն հոդվածի համաձայն՝ անձն ազատվում է վարչական պատասխանատվությունից, եթե լիազոր մարմնի որոշմամբ սահմանված ժամկետում կամ մինչև վարչական պատասխանատվության ենթարկվելու վերաբերյալ որոշում կայացնելը նա վերացրել է իր թույլ տված խախտումը և լիազոր մարմնին ներկայացրել է դրա վերաբերյալ ապացույցներ:

Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ ՀՀ-ում գործող բոլոր իրավակարգավորումները տեսականորեն կիրառելի են նաև ՔՆԱԹՍ-երի շահագործման արդյունքում անձնական տվյալների մշակում իրականացնելու նկատմամբ, սակայն հենց ՔՆԱԹՍ-երի շահագործումը սահմանող իրավակարգավորումների բացակայությունը գործնականում անհնարին է դարձնում ՔՆԱԹՍ-երի միջոցով իրականացվող անձնական տվյալների մշակման նկատմամբ համապատասխան լիազոր մարմնի կողմից արդյունավետ պետական հսկողության իրականացումը:

---

[146] Այստեղ կարևոր է արձանագրել, որ թեև օրենքով նախատեսված է տեղեկատվական համակարգերում անձնական տվյալները մշակելու անվտանգությունն ապահովելուն ներկայացվող պահանջները և կենսաչափական անձնական տվյալների նյութական կրիչներին և տեղեկատվական համակարգերից դուրս այդ անձնական տվյալները պահպանելու տեխնոլոգիաներին ներկայացվող պահանջները պահպանելու տվյալները մշակողի պարտավորությունը, ինչպես նաև նախատեսված է այդ պահանջները խախտելու համար վարչական պատասխանատվություն, սակայն իրավական դաշտի վերլուծությունից առերևույթ կարելի է եզրահանգել, որ այսպիսի տեղեկատվական համակարգերում անձնական տվյալները մշակելու անվտանգությունն ապահովելուն ներկայացվող պահանջները (չափորոշիչները) և կենսաչափական անձնական տվյալների նյութական կրիչներին և տեղեկատվական համակարգերից դուրս այդ անձնական տվյալները պահպանելու տեխնոլոգիաներին ներկայացվող պահանջները (չափորոշիչները) բացակայում են և որևէ իրավական ակտով սահմանված չեն, ինչը գործնականում անբովանդակ է դարձնում Օրենքի պահանջն ու պատասխանատվություն սահմանող համապատասխան նորմը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. ՔՆԱԹՍ-երի կիրառմամբ պայմանավորված սպառնալիքները նվազեցնելու համար անհրաժեշտ է պետական մակարդակով ձեռնարկել համապատասխան միջոցառումներ, ներառյալ՝

- երկրի պաշտպանության և անվտանգության համակարգերում, ինչպես նաև այլ ոլորտներում, ՔՆԱԹՍ-երի ոչ իրավաչափ շահագործման սպառնալիքների համատեքստում կարիքների գնահատում, թույլ կողմերի վերհանում և վերլուծություն,
- ՔՆԱԹՍ-երի ոչ իրավաչափ կիրառմանը, այդ թվում և հատկապես՝ ՔՆԱԹՍ-երով ահաբեկչական հարձակումներին հակազդելուն ուղղված տեխնոլոգիաների ձեռքբերում և կիրարկու, ինչպես նաև համապատասխան ենթակառուցվածքների բարելավում, այդ թվում՝ պետություն-մասնավոր գործընկերության ընձեռած հնարավորություններն օգտագործելով,
- առավել խոցելի ենթակառուցվածքների, օբյեկտների, տարածքների պաշտպանության և անվտանգության ամրապնդմանն ուղղված կազմակերպական և իրավական միջոցառումների իրականացում,
- ՔՆԱԹՍ-երի կիրառման պրակտիկայի և կարգավորման դաշտի վերլուծության, առկա ռեսուրսների գնահատման հիման վրա, ինչպես նաև պոտենցիալ զարգացումներն ու միջազգային փորձը հաշվի առնելով՝ համապատասխան ռազմավարական փաստաթղթերի և այլ իրավական կարգավորումների մշակում՝ նպատակ ունենալով կարգավորել այնպիսի հարցեր, ինչպես, օրինակ, համապատասխան պետական մարմինների (ՊՆ, ՆԳՆ, ԱԱԾ, ՊԵԿ, Քաղաքացիական ավիացիայի կոմիտե, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, էկոնոմիկայի նախարարություն և այլն)՝ ՔՆԱԹՍ-երի արտադրության, շրջանառության և օգտագործման նկատմամբ

մշտադիտարկում կամ վերահսկողություն իրականացնելու գործառույթները և այդ մարմինների միջև համագործակցության կառուցակարգերը, ՔՆԱԹՍ-երի արտադրության, շահագործման և շրջանառության հիմնական կանոնները և պետական վերահսկողության սահմաններն ու կառուցակարգերը,

- համապատասխան պետական մարմինների աշխատակիցների կարողությունների բարձրացում, ներառյալ՝ հատուկ դասընթացներ ու սիմուլյացիոն խաղեր իրականացնելը, գործողությունների ուղեցույցների և այլ կրթական նյութերի պատրաստումը և այլն:

2. ՔՆԱԹՍ-երի օգտագործմամբ առաջացող նոր սպառնալիքները նվազեցնելուն ուղղված պետական քաղաքականության, ռազմավարական փաստաթղթերի և այլ իրավական կարգավորումների մշակումն առաջնահերթություն է ՀՀ-ում, քանի որ այս ուղղությամբ մյուս բոլոր միջոցառումները պետք է բխեն այդ փաստաթղթերից և իրականացվեն դրանցում արտացոլված դրույթներին և իրավակարգավորումներին համապատասխան: Նման պետական քաղաքականության, ռազմավարական փաստաթղթերի և իրավական ակտերի մշակման համար հատուկ ռեսուրսներ չեն պահանջվում, պահանջվում է քաղաքական կամք և փորձագիտական ներուժ:

3. Այս վերլուծության շրջանակում ուսումնասիրված պետությունները (ինչպես ԱՊՀ տարածաշրջանի, այնպես էլ ԵՄ անդամ պետությունները, ԱՄՆ-ը և այլն) գիտակցում են ՔՆԱԹՍ-երի շահագործմամբ պայմանավորված սպառնալիքները և պարբերաբար կատարում են համապատասխան իրավական կարգավորումների բարեփոխումներ, ձեռնարկում են այլ միջոցառումներ՝ ուղղված, մասնավորապես, ՔՆԱԹՍ-երի շահագործմամբ պայմանավորված սպառնալիքները նվազեցնելուն:

4. Միջազգային փորձի վերլուծությունը վկայում է այն մասին, որ ՔՆԱԹՍ-երի օգտագործմամբ պայմանավորված՝ հնարավոր սպառնալիքների նվազեցմանն ուղղված պետությունների ձեռնարկած միջոցառումները, որպես կանոն, բխում են տվյալ պետության անվտանգային և պաշտպանական խնդիրներից, տվյալ

պետությունում ՔՆԱԹՍ-երի կիրառման առկա պրակտիկայից և հնարավոր հեռանկարների գնահատումից, առկա ռեսուրսների գնահատումից:

Այսպես, կարելի է պայմանականորեն առանձնացնել երկու հիմնական մոտեցում: Առաջին՝ օրինակ, ԱՄՆ-ի և ԵՄ-ի տարածքում, որտեղ արդեն իսկ առկա է ՔՆԱԹՍ-երի արտադրության, շահագործման, շրջանառության հարուստ փորձ, ինչպես նաև պետություն-մասնավոր գործընկերության ավանդույթ, որտեղ համապատասխանաբար՝ պետական և տարածաշրջանային մակարդակով իրականացվում են ՔՆԱԹՍ-երի կոմերցիոն նպատակով լայն շահագործման համար համապատասխան ենթակառուցվածքների ձևավորման մասշտաբային ծրագրեր, և որտեղ առկա են բավարար ռեսուրսներ զգալի ենթակառուցվածքային փոփոխություններ իրականացնելու համար, առաջնորդվում են ՔՆԱԹՍ-երի առավել մանրամասն իրավական կարգավորումների ռազմավարությամբ: Այս համատեքստում է, որ ԱՄՆ-ը, ԵՄ-ը ստեղծում են իրավական կառուցակարգեր, որոնք նախատեսում են գրեթե բոլոր ՔՆԱԹՍ-երով իրականացվող թռիչքների նկատմամբ մեկ միասնական հարթակի միջոցով վերահսկողություն իրականացնելու համակարգի գործարկում:[147] Այստեղ հարկ է ընդգծել նաև, որ այդ միասնական համակարգի գործարկումը թե՛ ԱՄՆ-ում, թե՛ ԵՄ տարածքում առայժմ չի իրականացվել՝ պայմանավորված իրավական պահանջներին համապատասխանող համակարգի ներդրման բարդությամբ տարբեր հարթություններում (ֆինանսական, տեխնիկական, արդյունավետ պետական վերահսկողության կառուցակարգերի և այլն): Ուսումնասիրված պետությունների երկրորդ խումբը պետական մակարդակով ձեռնարկել են միջոցառումներ, որոնք եղած ռեսուրսների, ՔՆԱԹՍ-երի տվյալ

[147] Օրինակ, ԵՄ-ն մտադիր է մինչև 2030 թվականը գործարկել U տարածքը՝ լայնորեն կիրառելով կոմերցիոն ՔՆԱԹՍ-երի հնարավորությունները՝ սկսած փոստային և այլ առաքանիներ առաքելու համար, ընդհուպ մինչև հեռավար կառավարվող կամ ինքնակառավարվող ՔՆԱԹՍ-երով մարդկանց կամ ապրանքի պետական և միջպետական փոխադրումներ իրականացնելը:

երկրում կիրառման փորձի և հեռանկարների, անվտանգային և պաշտպանական խնդիրների համատեքստում, անհրաժեշտ են նվազեցնելու համար ՔՆԱԹՍ-երի օգտագործմամբ պայմանավորված սպառնալիքները: Այդպիսի նվազագույն կարգավորումները ներառում են՝ ըստ ՔՆԱԹՍ-երի քաշի կամ օգտագործման նպատակի դրանց դասակարգում և համարժեք սահմանափակումների իրավական ամրագրում, ինչպես, օրինակ՝ օդային տարածքների, թռիչքի թույլատրելի բարձրության և թռիչքի իրականացման ժամերի սահմանափակումները, շահագործման իրավունք ձեռք բերելու համար շահագործողին ներկայացվող հատուկ պահանջներ սահմանելը, ներմուծման նկատմամբ պետական վերահսկողության կառուցակարգերի և սահմանափակումների իրավական ամրագրումը, որոշակի հանցագործությունների ՔՆԱԹՍ-երի միջոցով իրականացնելը քրեական օրենսգրքում որպես որակյալ հանցակազմ նախատեսելը և այլն:

5. Հայաստանի Հանրապետության պրակտիկայի և իրավական դաշտի վերլուծությունը վկայում է ՔՆԱԹՍ-երով պայմանավորված պոտենցիալ սպառնալիքների անտեսումը պետական մակարդակով, որն արտահայտվում է այդ թվում՝ ՔՆԱԹՍ-երով պայմանավորված պոտենցիալ սպառնալիքների նվազեցմանն ուղղված պետական քաղաքականության, ռազմավարական բնույթի փաստաթղթերի և համապարփակ իրավական կարգավորումների բացակայությամբ, ներառյալ՝ ՔՆԱԹՍ-երի արտադրության, շահագործման և շրջանառության նվազագույն իրավակարգավորումների և դրանց արտադրության, շահագործման և շրջանառության նկատմամբ արդյունավետ պետական վերահսկողության կառուցակարգերի բացակայությամբ: Այսօր ՀՀ տարածքում մինչև 50 կգ ՔՆԱԹՍ-երի շահագործումն ըստ էության չի կարգավորվում, ինչը ստեղծում է լուրջ սպառնալիքներ պետության անվտանգության, պաշտպանության և այլ բնագավառներում: Առկա է միայն Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի 2018 թվականին տարածած և 2022 թվականին վերահաստատված հայտարարությունը՝

եվրոպական կարգավորումներին համապատասխան կարգավորումների մշակման գործընթաց տեղի ունենալու մասին հավաստիացմամբ: Այն ֆոնին, երբ ՀՀ-ում ըստ էության բացակայում են ՔՆԱԹՍ-երի իրավական կարգավորումները, առկա չէ բավարար փորձ ՔՆԱԹՍ-երի արտադրության, շահագործման և շրջանառության մասով ու բացակայում են համապատասխան վիճակագրական տվյալները, հստակեցված չեն համապատասխան պետական մարմինների գործառույթներն այս ոլորտում, բացակայում են մոտակա ժամանակում ՀՀ օդային տարածքում կոմերցիոն ՔՆԱԹՍ-երի շահագործման համար համապատասխան ենթակառուցվածքներ ստեղծելու նկրտումները, ինչպես նաև առկա չեն բավարար ռեսուրսներ, Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի տարիներ առաջ տարածած հայտարարության համաձայն իրականացվող գործընթացն անհամարժեք է և անիրատեսական: Իսկ այն փաստը, որ հայտարարությունից հինգ տարի անց խոստացված իրավական կարգավորումները դեռ բացակայում են, դրա լավագույն վկայություններից է: Գնահատելով ՔՆԱԹՍ-երի շահագործմամբ պայմանավորված սպառնալիքները՝ ընդհանուր առմամբ և մասնավորապես՝ պետության անվտանգության ու պաշտպանության խնդիրների տեսանկյունից, ՀՀ-ի համար հրամայական է ձեռնարկել օպերատիվ, համաչափ և իրատեսական միջոցառումներ՝ դաշտը անհրաժեշտ նվազագույն մակարդակով կարգավորելու համար:[148]

Մասնավորապես, առավել իրատեսական, համաչափ և նպատակահարմար կլիներ ձեռնարկել առնվազն ստորև ներկայացված իրավական և կազմակերպական միջոցառումները.

---

[148] Հարկ է ընդգծել, որ պետության անվտանգության և պաշտպանության համատեքստում մեկ այլ կարևոր ռազմավարական ուղղություն, որը 2017 թվականից ի վեր շարունակում է մնալ չկարգավորված ռազմավարական մակարդակով, կիբեռանվտանգության և ռազմական կիբեռպաշտպանության ոլորտն է: Դրա վերաբերյալ տե՛ս «Լույս» հիմնադրամի 2022 թվականի նոյեմբերի «Պատերազմ վարելու կիբեռմիջոցների իրավաչափությունը և կիբեռպաշտպանության ոլորտում ՀՀ քաղաքականությունը» վերտառությամբ վերլուծությունը՝ https://shorturl.at/JLT03 :

1) Անհրաժեշտ է պետական կամ ինստիտուցիոնալ մակարդակով մշակել ՔՆԱԹՍ-երի արտադրության, շահագործման և շրջանառության մասով պետության ռազմավարությունը՝ ելնելով իրավիճակի գնահատման արդյունքներից, համապատասխան միջոցառումների իրականացման նպատակներից, խնդիրներից և առկա ռեսուրսներից: [149]

2) Ռազմավարական համապատասխան փաստաթղթերի մշակման արդյունքներով անհրաժեշտ է մշակել իրավական կարգավորումների փաթեթ, որով առնվազն պետք է կարգավորեն հետևյալ հարցերը.

- ՔՆԱԹՍ-երը նպատակահարմար է դասակարգել ըստ քաշի, ըստ շահագործման նպատակի և ըստ ներկառուցված տեխնիկական չափանիշների (կարողությունների): Այսպես, ըստ քաշի՝ ՔՆԱԹՍ-երը կարող են լինել երեք հիմնական կատեգորիայի՝ 1) մինչև 250 գրամ, 2) 250 գրամից մինչև 25 կգ, 3) 25 կգ և ավելի:[150] Ըստ օգտագործման նպատակի՝ ՔՆԱԹՍ-երը կարող են բաժանվել մասնագիտական կամ կոմերցիոն նպատակով օգտագործվող և անձնական (ժամանցային) նպատակներով օգտագործվողների: Ըստ ներկառուցված տեխնիկական չափանիշների (կարողությունների) ՔՆԱԹՍ-երը կարող են դասակարգվել, օրինակ, մեծ հեռավորությունից բարձր որակով տեսանկարահանելու (լուսանկարահանելու, ձայնագրելու) կարողություններով և առանց այդպիսի կարողությունների ՔՆԱԹՍ-երի, սահմանափակ թռիչքների գոտիներում (թռիչքների համար արգելված գոտիներում) վիրտուալ սահմանների համակարգի պահպանմանն

---

[149] Այս համատեքստում հատուկ ուշադրության պետք է արժանանան և առանձին կարգավորվեն ՔՆԱԹՍ-րի շահագործմամբ ահաբեկչությանը հակազդելուն պետության ռազմավարական մոտեցումները, ներառյալ՝ առավել խոցելի ենթակառուցվածքների անվտանգության և պաշտպանության ապահովման մասով:

[150] Որոշ դեպքերում իրավական կարգավորումներով կարող են նախատեսվել նաև հատուկ դրույթներով նշված դասակարգումից դուրս ՔՆԱԹՍ-երի չափեր՝ պայմանավորված իրավական կարգավորման նպատակով:

ուղղված տեխնիկական կարողություններով (geofencing) և առանց այդպիսի կարողությունների ՔՆԱԹՍ-եր, privacy by design չափորոշիչներին համապատասխան տեխնիկական կարողություններով և առանց այդպիսի կարողությունների ՔՆԱԹՍ-եր:

- ՔՆԱԹՍ-ի յուրաքանչյուր տեսակի համար նախատեսված իրավական սահմանափակումները պետք է համաչափ լինեն ՔՆԱԹՍ-ի քաշով, օգտագործման նպատակով և ներկառուցված տեխնիկական չափանիշներով պայմանավորված ռիսկերին:
- Բոլոր ՔՆԱԹՍ-երը պետք է ենթակա լինեն պարզեցված էլեկտրոնային եղանակով պետական գրանցման, որում, *inter alia*, կիստակեցվեն ՔՆԱԹՍ-ի տեխնիկական չափորոշիչները: Մեծ հեռավորությունից բարձր որակով տեսանկարահանելու (լուսանկարահանելու, ձայնագրելու) կարողություններով ՔՆԱԹՍ-երի, geofencing չունեցող ՔՆԱԹՍ-երի և 250 գրամից մինչև 25 կգ ՔՆԱԹՍ-երի համար, մեր կարծիքով, նպատակահարմար է սահմանել հատուկ հաշվառման ընթացակարգ, որտեղ, ի լրումն հիմնական տեղեկատվության, կնշվի նաև ՔՆԱԹՍ-ի օգտագործման նպատակը, պլանավորվող շահագործման վայրը, ժամանակը, ինչպես նաև կիրականացվի ՔՆԱԹՍ-ը շահագործողի հաշվառում: 25 կգ-ը գերազանցող ՔՆԱԹՍ-երը, մեր կարծիքով, պետք է ենթակա լինեն հատուկ ընթացակարգով գրանցման (հաշվառման)՝ ԱԱԾ-ում: Վերահսկողության արդյունավետության ապահովման տեսանկյունից կարող է սահմանվել պահանջ՝ 250 գրամ քաշը գերազանցող բոլոր ՔՆԱԹՍ-երին պետական համապատասխան մարմնի կողմից տրամադրված համարանիշ փակցնելու վերաբերյալ:
- Նպատակահարմար է սահմանել օդային տարածքների ցանկը, որտեղ ցանկացած ՔՆԱԹՍ-ով թռիչքներ իրականացնելու համար պարտադիր կլինի հատուկ թույլտվության ստացումը: Այդպիսի տարածքները, աերոդրոմներից (ինչպես նաև սահմանային շերտի օդային տարածքից) բացի պետք է ներառեն նաև առավել

խոցելի բոլոր ենթակառուցվածքների տարածքներն ու մարդկանց կուտակումների մասում օդային տարածքը: Նպատակահարմար է սահմանել նաև նախատեսված սահմանափակումների գործարկման նկատմամբ պետական վերահսկողության արդյունավետ կառուցակարգ: Վերահսկողության համակարգը կարող է ներառել ինչպես տեխնիկական միջոցների գործարկում (օրինակ՝ էլեկտրոնային քարտեզների համակարգի ներդրում), այնպես էլ իրավական լուծումներ (օրինակ՝ այդպիսի տարածքում թռիչք իրականացնելու համար թույլտվությամբ տրամադրված համարի ՔՆԱԹՍ-ին պարտադիր փակցնելու պայման, համապատասխան պետական մարմինների գործառույթները համապատասխան տարածքների անվտանգությունն ու պաշտպանությունը ՔՆԱԹՍ-երի չթույլատրված թռիչքների կանխման ուղղությամբ և այլն):

- Նպատակահարմար է ՔՆԱԹՍ-երով իրականացվող թռիչքների համար վերանայել թռիչքների թույլատրելի առավելագույն բարձրությունը, մարդկանցից, անշարժ գույքից և որոշ տեսակների շարժական գույքից նվազագույն պարտադիր հորիզոնական հեռավորությունը, սահմանել առավելագույն արագությունը՝ ելնելով ՔՆԱԹՍ-ի՝ ըստ քաշի դասակարգումից: Բացի այդ, ՔՆԱԹՍ-երի կիրառումը պետք է կոնկրետ չափորոշիչների հիմքով սահմանափակվի գիշերային ժամերին, ինչպես նաև թույլատրելի լինի միայն այն շահագործողի տեսադաշտում:
- Կոմերցիոն կամ մասնագիտական նպատակներով օգտագործվող բոլոր ՔՆԱԹՍ-երի, ինչպես նաև (պայմանական) 5 կգ քաշը գերազանցող ՔՆԱԹՍ-երի համար, մեր կարծիքով, նպատակահարմար է նախատեսել պարտադիր ապահովագրության համակարգ:
- Կոմերցիոն կամ մասնագիտական նպատակներով օգտագործվող բոլոր ՔՆԱԹՍ-երի շահագործողների, ինչպես նաև 250 գրամից մինչև (պայմանական) 5 կգ ՔՆԱԹՍ-երի շահագործողների համար նպատակահարմար է նախատեսել տարիքային սահմանափակումներ, և որպես հաշվառման իրականացման

պարտադիր պահանջ սահմանել նվազագույն անհրաժեշտ գիտելիքների էլեկտրոնային թեստավորումը, իսկ (պայմանական) 5 կգ քաշը գերազանցող ՔՆԱԹՍ-երի շահագործողների համար՝ առավել խորքային գիտելիքների ստուգմամբ թեստավորումը և թույլտվության (վկայագրի) տրամադրումը:

➢ Մեծ հեռավորությունից բարձր որակով տեսանկարահանելու (լուսանկարահանելու, ձայնագրելու) կարողություններով և առանց privacy by design չափորոշիչներին համապատասխան տեխնիկական կարողությունների ՔՆԱԹՍ-երի գրանցման պարագայում, նպատակահարմար է, որ գրանցման գործընթացում ՔՆԱԹՍ-ի շահագործողը լրացնի էլեկտրոնային հայտարարություն՝ անձանց մասնավոր և անձնական կյանքի անձեռնմխելիության և անձնական տվյալների պաշտպանության իր պարտավորություններին համապատասխան ՔՆԱԹՍ-ի շահագործման վերաբերյալ: Այս համատեքստում անհրաժեշտ է նաև սահմանել իրավախախտների պատասխանատվության համարժեք կառուցակարգեր:

➢ Նպատակահարմար է հստակեցնել գործող մաքսային կարգավորումները ՔՆԱԹՍ-երի ՀՀ տարածք անցկացնելու մասով: Մասնավորապես, առաջարկվում է 250 գրամ քաշը գերազանցող ՔՆԱԹՍ-երը, մեծ հեռավորությունից բարձր որակով տեսանկարահանելու (լուսանկարահանելու, ձայնագրելու) կարողություններով կամ առանց geofencing-ի ՔՆԱԹՍ-երը, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների կողմից ՀՀ տարածք ներկրվող բոլոր ՔՆԱԹՍ-երը ներառել անձնական օգտագործման ապրանքների հետ չկապված ապրանքների կատեգորիաների ցանկում և նախատեսել սահմանին դրանց պարտադիր հայտարարագրման գործընթաց:

➢ ՔՆԱԹՍ-երի միջոցով հանցագործությունների իրականացման սպառնալիքները նվազեցնելու նպատակով նպատակահարմար է դիտարկել ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ իրականացնելու հնարավորությունը: Մասնավորապես, մասնավոր կյանքի և անձնական տվյալների պաշտպանության

համատեքստում, նպատակահարմար է «Անձնական կամ ընտանեկան կյանքի գաղտնիությունը խախտելը» վերտառությամբ 204-րդ հոդվածով ընդլայնել պաշտպանության օբյեկտը՝ ներառելով նաև անձի մասնավոր և ընտանեկան կյանքին վերաբերող ցանկացած տեղեկություններ, ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանությունը: Ավելի լայն իմաստով, նպատակահարմար է, օրինակ, բոլոր այն հոդվածներում, որոնցով նախատեսված արարքը ավելի հեշտ է իրականացվում ՔՆԱԹՍ-երի միջոցով (ներառյալ և հատկապես՝ ահաբեկչական գործողությունների իրականացնելը, ինչպես նաև թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների իրացնելու նպատակով ապօրինի շրջանառությանը կամ դրանց իրացնելը և այլն), սահմանել ՔՆԱԹՍ-ի օգտագործումը որպես որակյալ հանցակազմ:

3) Համապատասխան իրավական կարգավորումների ընդունմանը զուգահեռ, անհրաժեշտ է պետական մարմինների աշխատակիցների գիտելիքների և հմտությունների բարձրացման միջոցառումներ իրականացնել: Մասնավորապես, նպատակահարմար է ՔՆԱԹՍ-երի արտադրության, շահագործման և շրջանառության նկատմամբ պետական վերահսկողական գործառույթներով օժտված մարմինների կողմից իրենց համապատասխան գործառույթների իրականացման վերաբերյալ և միմյանց միջև արդյունավետ համագործակցության իրականացման մասով ուղեցույցների և արձանագրությունների մշակում և դրանցով համապատասխան կրթական միջոցառումներ իրականացում:

4) Միջոցառումների արդյունավետությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է գործող և մշակվող կանոնների վերաբերյալ պարբերական տեղեկություններ տրամադրել հանրությանը, իրականացնել հանրային իրազեկման գործողություններ, մշակել ՔՆԱԹՍ-երի կիրառման կանոնների պարզ, հասկանալի և բոլորին մատչելի ուղեցույցներ:

5) Պետության հիմնական նպատակը պետք է լինի ոչ թե պատժելը, այլ կրթելը ՔՆԱԹՍ-երի կիրառման կանոնների այնպիսի խախտումների պարագայում, որոնք չեն պարունակում հանցակազմ:

Եզրակացությամբ ներկայացված են առաջարկներ, որոնք կարող են հիմք դառնալ ոլորտի արդյունավետ և իրատեսական կարգավորման նպատակով ռազմավարական փաստաթղթեր, իրավակարգավորումներ մշակելու համար, ինչպես նաև պետության կողմից ձեռնարկվելիք միջոցառումների ուրվագծման համար: Կարևոր է, որ հիմքում դրվի այն ընկալումը, որ՝

ա) հաշվի առնելով ՔՆԱԹՍ-երի կիրառման հիմնական ռիսկերը, հատկապես ՀՀ սահմանին իրավիճակի և Ադրբեջանի կողմից Հայաստանի նկատմամբ իրականացվող ագրեսիայի համատեքստում, Հայաստանի կառավարության համար հրամայական է ձեռնարկել օպերատիվ, համաչափ և իրատեսական միջոցառումներ դաշտը անհրաժեշտ նվազագույն մակարդակով կարգավորելու համար,

բ) խնդրի կարգավորման համար արդյունավետ կարող են լինել միայն իրատեսական, իրագործելի, նպատակին համապատասխանող, տեղայնացված և տվյալ ոլորտում իրավիճակը հաշվի առնող, համաչափ իրավական կարգավորումները,

գ) իրավական կարգավորումների բացակայությունը, ՔՆԱԹՍ-երի առանց կանոնների շահագործումը լուրջ սպառնալիքներ են ստեղծում ՀՀ պետական պաշտպանության, ազգային անվտանգության և այլ բնագավառներում:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*